ԷՋՄԻԱԾԻՆ

1974

Բ

ԱՄ 140

ԼԱ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Փետրուար

1974

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԻՐՀՔ ԱՐՔԻՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏՅԱՆ—Դարձյալ «Կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ» 3

Սուրբ Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին նվիրված գիտական նստաշրջան Երևանում 14

Սուրբ Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին նվիրված հանդիսություն Կ. Պոլսում 16

Երևանամյակ «Մոսկվայի պատրիարքության ամսագիր»-ի 18

Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի գործունեության 16-ամյակը 22

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 24

Հորելյանական հանդիսություններ 27

Պրոֆեսոր Աշոտ Դարեգինի Աբրահամյան 29

ՀԱՅՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ—Վարդանանց դիվանագիտության շուրջ 31

ԳԵՎՈՐԳ ԱՒԳԱՐՅԱՆ—Վերծանության Գրիգոր Նարեկացու «Հարության տաղ»-ի . 39

Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի 49

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Armenie, URSS

Հանձնված է արտադրության 12/II 1974 թ.: Ստորագրված է տպագրության 12/III 1974 թ.:

Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84 1/8, պատվեր 89

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1974 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏՅԱՆ
(Պատրիարք Հայոց Թուրքիոյ)

ԴԱՐՁՅԱԼ «ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ»

Վերջերս մեր ձեռքը հասաւ ընդարձակ զեկոյց մը սա վերնագրով. **«Կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիո տիտղոսի գործածությունը Կիլիկիո կաթողիկոսներու կոնդակներու սկզբնավորության»**՝ հրապարակ դրված Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դիվան-ին կողմե: Երկայնաձակ երեք էջնոց երկայնկեկ գրություն մըն է, կծու և թեթև ոճով շարադրված, ինչ որ պիտի չակնկալեինք կաթողիկոսարանի մը դիվան-են. ավելի լրագրական է, քան դիվանական:

Այդ գրության նպատակն է՝ «Պատմական և վավերական փաստերով ապացուցանել, թե կիլիկյան ս. Աթոռի այժմու գահակալ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսին օրով չէ, որ սկսած է կոնդակներու սկզբնավորության «Կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիո» մակդիրը գործածվիլ...»:

Երբ կրկին կփորձվինք ձեռք առնել այս հարցը, կուզենք, որ ամեն ոք վստահ ըլլա, թե մեր նպատակը հակաճառությունը շարունակել չէ, այլ զեկույցին մեջ իսկ տրված «փաստերու» լույսին տակ անգամ մը ևս անդրադառնալ և արժևորել այս տիտղոսը, այս անգամ ավելի հստակ կերպով հաստատելու այն, ինչ որ ուզած էինք ընել մեր նախորդ գրությամբ. **«Անթիլիասի նոր սահմանազանցությունները»** (տես **Մարմարա և Ժամանակ** օրաթերթերը, 1973, հուլիս, 11—12 թիվերը, կամ առանձնատիպ պրակը **«Միությունը և միասնությունը կկազմեն եկեղեցիի էությունը»**):

Կերևի, այս հարցի մասին մեզմե զատ շատ մը ուրիշներ ալ անդրադար-

ձած են. զեկույցի բառերով՝ «...տիտղոսավոր անձնավորություններ, խմբագիրներ և անհատներ, մայրդագրություններով և հոդվածներով...»: Մենք ասոնցմե ոչ մեկը տեսնելու առիթ ունեցած ենք. հետևաբար նախ կիսատտանենք որ չեղանք ասոնցմե, որոնք որպես թե ըսած ըլլան, որ այդ տիտղոսի գործածությունը սկսված է Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսի օրով. ընդհակառակը մենք գրած էինք.

«Կրնա ըլլալ, որ ինքնաներկայացման այս ձևը հնարողը և առաջին անգամ կիրարկողը Տ. Խորեն կաթողիկոսը եղած չըլլա. կրնա ըլլալ, որ Կիլիկիո կաթողիկոսներեն մին կամ մյուսը պատահաբար, բայց ոչ երբեք հետևողական կերպով, գործածած ըլլան այս բանաձևը. այսուհանդերձ սխալ մը սխալ ըլլալէ չի դադրիր մինչև իսկ եթե նախընթաց ունենա»:

Հետևաբար մեր պնդածը այն էր, որ այդ տիտղոսին գործածությունը Կիլիկիո կաթողիկոսներուն կողմե ինքնին սխալ էր, և ոչ թե նախընթաց չունենալն էր: Այնպես որ առնվազն մեր ակնկալածը այն պիտի ըլլար, որ դիվանը, եթե անպատճառ ըսելիք մը կամ ընելիք մը ուներ, պետք էր ապացուցաներ, որ սխալ չէր այդ տիտղոսին գործածությունը կանոնական կամ սրբամաբանական տվյալներու վրա: Վերև ակնարկված մեր գրության մեջ մենք հաստատած էինք, որ այդ տիտղոսին գործածությունը «Սխալ է քերականորեն, սխալ է տրամաբանորեն և սխալ է կանոնական տեսակետե»: Այսօր կավելցնենք նաև չորրորդ պատճառ մը, թե սխալ է այդ տիտղոսին այդ կերպ գործածությունը ներկա իրականության լույսին տակ, եզրակացնելու համար, որ «պատմական» ալ չէ այդ տիտղոսը, այսինքն չի գար կիլիկյան ոսնցյաղեն, այլ կերտված է Անթիլիասի մեջ համի Տյառն 1936-ին:

Ա. «ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ» ՀԱՎԵԼՈՒՄԸ ՁԱՐԴԱՐԱՆԱՐ ՆԱԵՎ ՆԵՐԿԱ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻՆ ՏԱԿ

Նախ կհիշենք իբրև իրողություն, թե մինչև 1920-ական թվականներու սկիզբները Կիլիկիո Աթոռին գահակալները ոչ միայն իրավամբ—«տը եուրե»—այլ նաև իրողապես—«տը ֆակտո»—Կիլիկիո կաթողիկոսներ էին, պարզապես այն պատճառով, որ գործնականապես կգտնվեին կիլիկյան հողին վրա, և կաթողիկոսության թեմերը մեծագույն մասով կգտնվեին պատմական Կիլիկիո և անոր անմիջական դրացիության մեջ: Այնպես որ խնդրո առարկա տիտղոսին գործածությունը եթե սխալ ալ ըլլար քերականորեն և կանոնական գետնի վրա, գեթ կրնար արդարանալ ազգագրական տեսակետե, քանի որ արդարև և իրավամբ Կիլիկիո «Ամենայն Հայոց» կաթողիկոսներ էին անոնք:

Այժմ, սակայն, այդ տիտղոսը դադրած է իրողական հանգամանք ունենալե և պահած է լոկ իր իրավական իմաստը: Ուրիշ խոսքով «Կաթողիկու Մեծի Տանն Կիլիկիոյ» այլևս վերածված է պատմական տիտղոսի, քանի որ ներկայիս այդ Աթոռին կեդրոն և թեմերը Կիլիկիո մեջ չեն: Պատմական տիտղոսներ գործածելը ոչ միայն ներելի, այլ նաև կանոնական է: Սակայն բրածոյի վերածված տիտղոսի մը հետ կյանք ունեցող երևույթներ խառնելը անհեթեթ է: Այո, հարդով լեցված ու կենդանաբանական թանգարաններու մեջ դրված արծիվն ալ արծիվ կկոչվի. սակայն ոչ ոք հարդով լեցված արծիվին կենդանի արծիվի մը հատկանիշները կվերագրե: Պատմականացած տիտղոսները առհասարակ կապված են աշխարհագրական մարզերու հետ, որոնք անշարժ ու անկենդան են, իսկ այդ աշխարհագրական շրջանակին մեջ ապրող ժողովուրդը շարժուն և փոփոխական է: Կիլիկիան, իբրև պատմական

ու աշխարհագրական երկիր, միշտ գոյություն ունեցած է և պիտի ունենա, բայց այսօր այդ աշխարհագրական մարզի մեջ հայ գոյություն չունի: Հետևաբար «Մեծի Տանն Կիլիկիո» այլևս պատմականացած տիտղոսին կցել «Ամենայն հայոց»-ի պես կյանք և այժմեական հանգամանք ունեցող ավելադրություն մը, կնշանակե մտնել անհեթեթության սահմանները, որովհետև, կկրկնենք, «Մեծին Կիլիկիո» մեջ հայ չէ մնացած... ներկայիս:

Չենք գիտեր, թե կրցա՞նք շիտակ հասկցվիլ այս շատ կարևոր, բայց նուրբ կետի բացատրության մեջ: Կկրկնենք, օրինավոր ու կանոնական է «Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո» այլևս պատմականացած կամ բյուրեղացած տիտղոսին գործածությունը, բայց անոր վրա ավելցնել «Ամենայն Հայոց» ավելորդագրությունը, «ապսյուրտ» կդառնա ներկա իրականության լույսին տակ: Մեր միտքը ավելի հստակելու համար, և ոչ թե թելադրանք մը ընելու համար, ավելցնենք, որ եթե ըսված ըլլար «Կաթողիկոս Ամենայն Հայոց Սյուրիո, Լիբանանի և Կիպրոսի», գեթ ազգագրականորեն արդարանալի պիտի ըլլար, եթե սխալ իսկ ըլլար կանոնական գետնի վրա:

Բ. «ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ» ՏԻՏՂՈՍԸ ՍԵՓԱԿԱՆ Է ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Բայց մենք վերադառնանք կիլիկյան Աթոռի դիվանեն ելած հաղորդագրության և խորհրդածության նյութ ընենք այն «պատմական և վավերական փաստերը», որոնցմով կնգտի դիվան-ը արդարացնել գործածությունը «Կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիո» տիտղոսին, գեթ կոնդակներու սկզբնավորության: Մենք գոհ մնացինք այս «փաստերու» հայթայթումեն, որովհետև անոնք եկան հաստատելու, որ ներկա գործածական տիտղոսը այդքան ալ «նվիրական ու պատմական» չէ:

Կերևի դիվան-ը անդրադարձած չէ, որ իբրև «փաստ» բերված վավերագրերու մեջ գործածված տիտղոսները, բացի Սահակ կաթողիկոսի վերագրվածեն, նույն չեն այսօրվան գործածվածին հետ. բոլորովին տարբեր են: Հակառակ այն իրողության, որ թե՛ «Ամենայն հայոց» և թե՛ «Մեծի Տանն Կիլիկիո» բացատրությունները կան այդ մեջբերումներուն մեջ, բայց միասին չեն, ու բոլորովին տարբեր իմաստ ունին այդ բնագրերուն մեջ: Հիշենք զանոնք մի առ մի: Այդ «փաստեր»-են առաջինը առնված է Կիլիկիո Սիմեոն կաթողիկոսի (1633—1648) «նշանավոր» մեկ թուղթեն, ուր Սիմեոն ինքզինքը կներկայացնե որպես՝

«Տէր Սիմէոն կաթողիկոս Ամենայն Հայոց
եւ
Պատրիարք սրբոյ Աթոռոյն Երուսաղիմայ»:

Չենք ուզեր անդրադառնալ Սիմեոնի նկարագրին ու նամակին, գրված Տ. Փիլիպոս Աղբակեցի Ամենայն Հայոց Հայրապետին, նամակ մը, որուն ընթերցումը այսօր իսկ կկարմրցնե ընթերցողը, ի հաշիվ Սիմեոնի, և որ ոմանց կողմե կոչված է «Անվայել և ամբարտավան», այլ կուզենք մատնանշել այարգապես, որ «Կիլիկիո» հետքն անգամ չկա այս տիտղոսին մեջ. և հետևաբար իբրև «փաստ» չի ծառայեր «Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիո» բանաձևի գործածությունը արդարացնելու համար:

Երկրորդ «փաստը» առնված է 1707-ին գրված կոնդակե մը, որ կսկսի այսպես.

«Յիսուսի Քրիստոսի Ծառայ Յովհաննէս
կաթողիկոս Ամենայն Հայոց
եւ
Պատրիարք Տանն Կիլիկիոյ»:

Երրորդ «փաստը» առնված է 1829-ին գրված կոնդակե մը.

«Յիսուսի Քրիստոսի Ծառայ Տէր Եփրեմ
կաթողիկոս Ամենայն Հայոց
որ եւ
Պատրիարք Մեծին Կիլիկիոյ»:

Չորրորդը առնված է 1837-ին գրված կոնդակե մը.

«Յիսուսի Քրիստոսի Ծառայ Տէր Միքայէլ
կաթողիկոս Ամենայն Հայոց
եւ
Ծայրագոյն Պատրիարք Գերագահ Մեծին Կիլիկիոյ»:

Վերջապես հինգերորդ «փաստը» հայթայթված է 1864 թվակիր կոնդակե մը.

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Կիրակոս
կաթողիկոս Ամենայն Հայոց
եւ
Ծայրագոյն Պատրիարք Մեծին Կիլիկիոյ»:

Վերջին այս «փաստերուն» մեջ «Կիլիկիան» մեջտեղ կելլե, բայց ոչ որպես **«Կաթողիկոս Կիլիկիո»**, այլ, ինչ որ շատ հատկանշական ու կարևոր է՝ **«Պատրիարք Կիլիկիո»:** Ուրեմն ասոնց մեջ ալ չկա ոնէ արդարացում «Կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիո» բանաձևի գործածության:

Սակայն մենք քչիկ մը համեմանք այս վավերագրերու մեջ գործածված տիտղոսներուն վրա և արժևորենք զանոնք: Ինչպես բացահայտ կերևի, վերոհիշյալ կիլիկյան կաթողիկոսները կգործածեն **երկու անշատ** տիտղոսներ. առաջինն է.

«Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

Ու այս տիտղոսը կգործածեն անոնք ճիշդ այն ձևով և իմաստով, որով կգործածեն զայն մեր Մայր Աթոռի Ընդհանրական Հայրապետները:

Արդ, Կիլիկիո կաթողիկոսության աթոռակալները իրավասու չէին **«Կաթողիկոս Ամենայն Հայոց»** տիտղոսը գործածելու, որովհետև այդ տիտղոսը այլևս կպատկաներ Մայր Աթոռի Ընդհանրական Հայրապետներուն: Ու մեկ և նույն եկեղեցիի մեջ **երկու** կաթողիկոսներ չեն կրնար նույն տիտղոսը գործածել, այլապես մեկը հակաթոռ կամ հերձվածող կելլա: Կանոնական այս եզրակացութենեն փախուստ չկա: Արդ, տրված ըլլալով, որ **«Կաթողիկոս Ամենայն Հայոց»** տիտղոսի գործածությունը սեփական է լոկ Մայր Աթոռի Ընդհանրական Հայրապետներուն, հետևաբար անոր գործածությունը նաև Կիլիկիո Աթոռին գահակալներուն կողմե կելլա **ապօրեն և հերձվածողական:**

Որպեսզի ասիկա լոկ մեր դատաստանը եղած չելլա և որպեսզի փարա-

տի կարգ մը մտքերու մեջ բուն դրած սա սխալ գաղափարը, թե Կիլիկիո կաթողիկոսությունը **շարունակությունն է** նախքան 1441 թվին Սիսի մեջ նստող Ամենայն Հայոց կաթողիկոսության, խոսքը տանք նույնինքն Կիլիկիո Բաբգեն աթոռակից կաթողիկոսին, որ ավելորդ է հիշելն անգամ, թե ոևէ մեկեն ավելի ջերմ պաշտպան էր Կիլիկիո կաթողիկոսության, թե՛ իբրև կիլիկեցի և թե՛ այդ Աթոռին արժանավոր գահակալներեն մեկը, սակայն միաժամանակ անկեղծ անձնավորություն մը ըլլալով Բաբգեն կաթողիկոս կհարգեր ու կհայտարարեր, առանց վերապահության, պատմական ճշմարտությունները:

Իր «Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո» արժեքավոր գործի առաջին էջին վրա իսկ կհաստատե Բաբգեն կաթողիկոս, թե՝

«...Էջմիածնի մեջ Կիրակոս Վիրապեցին կաթողիկոս կընտրվի, և այդ (1441) թվականեն սկսելով **կվերահաստատվի Ամենայն Հայոց կաթողիկոսությունը իր լուսավորչահիմն պատվանդանին վրա»** (գլխագրումը մերին— Շ.) (տես «Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո», էջ 7):

Այլուր ըսած է Բաբգեն կաթողիկոս. «Մուսաբեկյանի (Սիսի վերջին Ամենայն Հայոց Հայրապետի) կաթողիկոսությունը նշանավոր եղավ այն պատճառով, որ իր աթոռակալության ատեն **վերահաստատվեցավ Էջմիածնի Աթոռը** և Կիրակոս կաթողիկոս ընտրվեցավ այդ Աթոռին... **Մուսաբեկյանի իսկ հավանությամբ»** (անդ, էջ 33):

Նույն գրքի 34-րդ էջին վրա բերված է նաև Չամչյանի տեսակետը այս մասին ըստ հետևյալի.

«Սին իրի գրեցին եպիսկոպոսունք եւ վարդապետք առ Գրիգոր Մուսաբէկեանց, եւ հրաւիրեցին գալ յԷջմիածին, եդեալ նմա առաջի բազում յարգութեամբ բազմապատիկ պատճառս: Այլ իբրեւ չէառ նա յանձն գալ անդր, այնուհետեւ խորհեցան **առաջնորդք ազգին մեծ ժողով գումարել յԷջմիածին, եւ ի ձեռն ժողովոյ վճարել գիրսն»** (Չամչ., Գ, էջ 486):

Ինչպես բացահայտ կերևի, Հայց. եկեղեցիի բարձրագույն իշխանությունը մարմնացնող ժողով մը, այսօրվան բացատրությամբ՝ «Ազգային-եկեղեցական ժողովը», **«Մեծ ժողով գումարեալ»**, Հայրապետական Աթոռը Սիսեն Էջմիածին փոխադրեց, և այդ օրեն Սիսի Աթոռը դադրեցաւ «Ամենայն Հայոց» կաթողիկոսություն լինելե:

Կշարունակե Բաբգեն կաթողիկոս.

«Վերջապես արևելյան վարդապետք հաջողեցան **վերահաստատել Լուսավորչի Աթոռը Էջմիածնի մեջ**, 1441-ին, և անշուշտ, ինչպես որ դիտել տվինք արդեն, նույն ինքն Մուսաբեկյանի հաճությամբ: Ասիկա պատմական դեպքերու տրամաբանական ընթացքն է: Վասնզի արևելյան վարդապետներու բուն նպատակն էր ոչ միայն Կիլիկիո վտանգավոր միջավայրեն ազատել Ամենայն Հայոց կաթողիկոսությունը, **այլ նաև կաթողիկոսական միակ Աթոռ մը ունենալ**, Աղթամարի կաթողիկոսությունն ալ վերցնելով. նպատակ մը, որուն հակառակ էր Աղթամար, որու կաթողիկոսն էր 1441-ին Զաքարիա Գ (1434—64): Մենք կենթադրենք, որ Մուսաբեկյանն ալ հավանած էր, պայմանավ, որ իրեն չդպչին, այլ ինքն ալ մնա Կիլիկիո Աթոռին վրա մինչև իր մահը, և հետո **դադրի կաթողիկոսությունը Կիլիկիո մեջ:** Հավանաբար այս է պատճառը այն ընդհատին, որ կբացվի Մուսաբեկյանի և Կարապետ Եկեղեցիի միջև, ինչպես ապիսի սեսնենք այս վերջնույն վրա գրելու ատեն» (անդ, էջ 35):

Թե արդարև Մուսաբեկյանով **վերջ դրավ Ամենայն Հայոց Հայրապետությունը Կիլիկիո մեջ**, կհաստատվի այն պատմական իրողությամբ, որ Մուսա-

բեկյանի վախճանումեն հետո արդեսրև հինգ տարիներու ընդհատ մը գոյացավ, ինչպես կհաստատեն Բաբգեն կաթողիկոս վերև և ստորև։

«Էջմիածնի **վերահաստատյալ Աթոռին** կոչված առաջին կաթողիկոսին ապօրեն և անիրավ գրկումը իր պաշտոնեն, ստիպ ընծայեց կիլիկեցիներուն, որ Մուսաբեկյան Գրիգոր կաթողիկոսի վախճանումին հետևող **հինգ տարվան ընդհատե մը** ետքը՝ ընտրեն **իրենց կաթողիկոսը** հանձին Եվդոկացի Կարապետի» (անդ, էջ 16)։

Կիլիկիո Աթոռը «Շնորհալիի Աթոռն» ալ չէ, ինչպես ոմանք տգիտաբար և թութակաբար կսիրեն կրկնել։ Այս մասին ևս խոսքը տանք Բաբգեն կաթողիկոսին.

«Անոնք որ ըսին թե Կիլիկիո Աթոռը ուղղակի ս. Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսական գիծին շարունակությունն է, կամ **Շնորհալիի կաթողիկոսության հաջորդությունը**, բառին կանոնագիտական առումով, եթե տեղի հետ կապվի (ինչպես կընեն կարգ մը կիլիկեցիներ—Շ.) Էջմիածնեն դուրս պետք չէ ելլե. իսկ եթե կաթողիկոսական **իշխանության փոխանցման** իմաստով պիտի առնվի շարունակությունը (ինչպես պետք է առնել ուղիղ և կանոնական հասկացողությամբ—Շ.), այդ պարագային բոլոր կաթողիկոսներ ալ, (որոնք) Լուսավորչի կաթողիկոսության հաջորդության շղթան կկազմեն, օրինավոր կաթողիկոսներ են, **առանց կապվելու տեղվո և ժամանակի**» (անդ, էջ 17)։

Ասիկա կաթողիկոսաց հաջորդության ամենեն ստույգ ըմբռնումն է. ըստ այսմ Հայց. եկեղեցվո կաթողիկոսաց օրինավոր հաջորդության շղթան **մինչև Մուսաբեկյան Կիլիկիո մեջ էր**։ Անոր օրով և անոր հավանությամբ **փոխադրվեցավ Էջմիածին**։

Սակայն ձգենք, որ Բաբգեն կաթողիկոս շարունակե իր խոսքը հատկապես Շնորհալիի մասին։

«Ներսես Շնորհալի... իբրև Լուսավորչի հաջորդ, Արևմուտքի (Կիլիկիո) հայությունը ճշդեն կհամարեր...։ Սիս թագավորական... քալաք ըլլալեն ետքն ալ Շնորհալիի հաջորդները Սիս չփոխադրվեցան, այլ մնացին Հռոմկլա, մինչև անոր կործանումը (1293)... վասնզի Հռոմկլա Պահլավունյաց սեփական կալված էր... և ոնէ կախում չուներ **Կիլիկիայեն և Կիլիկիո արքունիքեն**։ Որովհետև Հռոմկլա թեև **մոտիկ** էր Կիլիկիո, բայց **Կիլիկիո մեջ չէր, այլ եփրատացվոց երկրին մեջ**։ Իբրև հոգևոր իշխանության կեդրոն՝ Հռոմկլա պահեց իր անկախությունը, անշուշտ վայելելով **սահմանակից** Կիլիկիո հայ պետության համակրանքը, և պաշտպանությունը Հալեպի իսլամ իշխանության, որու ազդեցության շրջանակի մեջ էր Եդեսատի հովիտը, մինչև Հռոմկլա և ավելի վերերը»։

Ու կեզրակացնե անաչառ պատմիչ Բաբգեն կաթողիկոս.

«Պատմության այս լույսերուն տակ, Կիլիկիո կաթողիկոսը՝ աշխարհագրական և տեղագրական առումով՝ **չի կրնար Շնորհալիի հաջորդությունն ըլլալ**, որովհետև Սիս չէ եղած Շնորհալիի նստոցը» (անդ, էջ 17—18)։

Այս բչիկ մը երկարապատում, բայց շատ կարևոր մեջբերումները հարկադրված եղանք ընել նախ հիմնավորելու, թե **դիվանին** հառաջ բերած փաստերեն առաջին հինգը ոչ միայն ոչ մեկ կապ ունին այսօրվան գործածական «Կաթողիկոս **Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիո**» բանաձևին հետ, այլ այդ «փաստերը» իրենց եղած ձևին մեջ հակականոնական ու հերձվածողական են և, հետևաբար, անընդունելի։ Այնպես որ՝

Հայց. եկեղեցիի հանդեպ հարգանք ունեցող,
Իր Աթոռը և Մայր Աթոռը հարգող,
և ինքզինքը ճանչցող

ոչ մեկ Կիլիկիո ողջամիտ կաթողիկոս պիտի ուզեր հետևիլ անոնց և գործածել հակականոնական ու հերձվածող տիտղոս մը, ինչպես, արդարև, չեն ըրած ասոնցմե հետո եկող կաթողիկոսները:

Գ. ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

«Գալով վերոհիշյալ կաթողիկոսներու գործածած երկրորդ տիտղոսին, անոնցմե առաջինին գործածած «Պատրիարք սրբո Աթոռույն Երուսաղեմա» կրնանք զանց ընել, իբրև այլուր չկրկնված տիտղոս: Բայց պարտինք կենալ հաջորդ չորս կաթողիկոսներու գործածած **«Պատրիարք Տանն Կիլիկիո»** տիտղոսին վրա, իբրև շատ հետաքրքրական գյուտի մը առջև: Եթե Արքիմիդես ըլլայինք, անկասկած մենք ալ պիտի բացականչեինք. «Էվրեքա»:

Արդարև երջանիկ գյուտ մըն է սա **«Պատրիարք Տանն Կիլիկիո»** տիտղոսը, որ կրնա դեղ ու դարման դառնալ այն բոլոր ցավերուն, որոնց ենթակա եղած է Հայց. եկեղեցին դարերե ի վեր և որոնց ենթակա կըլլա մանավանդ մեր ներկա ժամանակներու մեջ, պարզապես որովհետև իր ընդհանրական կամ Ամենայն Հայոց կաթողիկոսի կողքին ունեցած է նաև մասնավոր «կաթողիկոսներ» ու հատկապես «Կիլիկիո կաթողիկոս» մը: Վերոհիշյալ չորս կիլիկյան կաթողիկոսները որքան մեղադրելի ըլլան **«Ամենայն Հայոց կաթողիկոս»** տիտղոսի գործածության համար, նույնքան և ավելի գովելի կրնան ըլլալ **«Պատրիարք Տանն Կիլիկիո»** տիտղոսը հնարած ըլլալնուն համար, անշուշտ մերկացնելով այդ գողտրիկ տիտղոսը իր «ծայրագույն» և «գերագահ» սիրամարգային փետուրներեն: Պետք է խոստովանինք, որ այս գաղափարը հանախ անցած է մեր միտքեն, այսինքն կոչել Կիլիկիո Աթոռին գահակալները **«Պատրիարք»** տիտղոսով, ճիշտ այն իմաստով և հանգամանքով, որով կգործածենք այդ տիտղոսը Երուսաղեմի և Կ. Պոլսո հայ եկեղեցվո Աթոռներու գահակալներուն համար: Ու այս կերպով մենք ունենայինք **մեկ կաթողիկոս և երեք պատրիարքներ**, փոխանակ ունենալու երկու կաթողիկոս և երկու պատրիարք: Այն ատեն միայն շատ սրտմաշուկ, կագ ու կռիվ, վեճ ու հերձված խնայված պիտի ըլլար Հայց. եկեղեցիին, և անոր միությունը հաստատ հիմքերու վրա դրված պիտի ըլլար: Ըստ մեզի այս տիտղոսը սահմանված է քակելու այն գորդյան հանգույցը, զոր պատմական պարագաներ և փառամոլ անձեր ստեղծեր են մեր մեջ, և որով կաշկանդված է Հայց. Եկեղեցին, և կաշկանդված պիտի մնա ան, ցորքան ատեն որ ունի երկու բարձրագույն պաշտոնատարներ, որոնք «Կաթողիկոս» տիտղոսը կկրեն:

Կարելի՞ է վերակենդանացնել **«Պատրիարք Մեծի Տանն Կիլիկիո»** տիտղոսը...: Հարցումին դրական կամ ժխտական պատասխանեն կախում ունի երկու Աթոռներու ներկա և ապագա հարաբերությանց թնճուկին լուծումը կամ շարունակումը: Ըստ մեզի անկարելի չէ. ու մենք համոզված ենք, որ ներկայիս գոյություն առած երկվությունը ինքնաբերաբար պիտի դադրի, եթե որևկան պատասխան տրվի հարցումին: Երուսաղեմի և Թյուրքիո հայոց պատրիարքները այդ տիտղոսը կրելով ոչ մեկ կերպով վար կմնան իրենց դրացի քույր եկեղեցիներու պատրիարքներեն: Հաչա արտաքին աշխարհի պատրիարք են անոնք ճիշտ այն հանգամանքով, ինչպես են մյուս եկեղեցիներու պատրիարքները: Եպիսկոպոս ձեռնադրելը կամ չձեռնադրելը, մյուսնն օրի-

ՌՆԵԼը կամ չօրհՆԵԼը ՆԵրքին հարցեր են այլևս, որոնք անդրադարձ չեն կրնար ունենալ իրենց պաշտոնական դիրքին և արտաքին հարաբերությանը վրա։ Այսպես է իրողությունը այսօր մեր երկու պատրիարքությանց պարագային և այդպես պիտի ըլլա նաև Կիլիկիո Աթոռին գահակալներուն համար, եթե որդեգրեն իրենց նախորդներեն գործածված այս տիտղոսը, հատկապես այսօր, իրենց նոր միջավայրին, Լիբանանի մեջ, ուր արդարև բոլոր մյուս քրիստոնյա եկեղեցիներու պետերը կգործածեն «Պատրիարք» տիտղոսը։

Կարծե արդարև խորհիլ այս երջանիկ լուծումի մասին, որուն բանալին հրապարակ դրած է Կիլիկիո կաթողիկոսարանին դիվանը, վերոհիշյալ «պատմական ու վավերական փաստերով»։ Սպասելով այն երջանիկ օրվան, երբ այս հարցը պիտի գա Ազգ.-եկեղեցական ժողովի սեղանին, մենք շարունակենք մեր խորհրդածություններու շարքը զեկույցի մնացյալ տվյալներու վրա։

Դ. ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԵՐԱԳՐՎԱԾ ՏԻՏՂՈՍԸ

Այժմ անդրադառնանք զեկույցի վերջին «փաստին», Սահակ կաթողիկոսի վերագրված տիտղոսին, որ է.

«Սահակ ծառայ Յիսուսի Քրիստոսի, եւ անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ

եւ

Կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ»։

Արդարև վերջին այս տիտղոսը հար և նման է այսօրվան գործածված և վեճի նյութ դարձած տիտղոսին հետ։ Բայց մյուս կողմեն անհրաժեշտ է նշել, որ տարբեր է իր նախորդներեն։ Այստեղ նախ կարբագրվին նախորդ տիտղոսները և ապա կհամադրվին մեկ տիտղոսի մեջ նախորդ երկու տիտղոսները։

Այս պարագային ալ կա շատ կարևոր և նշանակալից պատմական իրողություն մը, որուն հայտնապես չէ անդրադարձած Անթիլիասի կաթողիկոսարանի դիվանը։ Բարգեն կաթողիկոսի վերոհիշյալ ծանոթ գրքին մեջ գոյություն ունին Սահակ կաթողիկոսեն երեք կոնդակներ։ Առաջինը անոր անդրանիկ կոնդակն է՝ գրված 1909-ին «յաւուր օծման մերոյ» (Պատմ. կթղկսց. Կիլիկիո, էջ 848)։ Իսկ երկրորդը՝ գրված 1919-ին աքսորեն վերադարձին (անդ, էջ 983)։ Երկուքին մեջ ալ կբացակայի «Ամենայն Հայոց» հավելումը։ Առաջինը կսկսի այսպես.

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Սահակ Բ կամօքն Աստուծոյ
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ»։

Իսկ մյուսը կսկսի այսպես.

«Սահակ ծառայ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստուծոյ եւ ընտրությեամբ Կիլիկիոյ հայ ժողովրդեան
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ»։

Սահակ կաթողիկոսի անվան արժանի երկու ընդարձակ ու վաստակավոր կոնդակներ են ասոնք։ Ինչպես բացահայտ կերևի, երկուքին մեջ ալ Սահակ կաթողիկոս ինքզինքը կանվանակոչեր իր օրինավոր ու սովորական տիտղոսին մեջ. «Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ»։ Վիճելի հավելումը կհայտնվի ըստ երևույթին առաջին անգամ Սահակ կաթողիկոսի անունով 1938-ին հան-

ված կոնդակին մեջ, որով կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ կնշանակե տ. Պետրոս արք. Սարաճյանը (անդ. էջ 1111):

Բաղդատելով սակայն այս վերջին կոնդակը Սահակ կաթողիկոսի նախորդ կոնդակներուն և այլ ծանոթ գրությանց հետ, երևան կուգա վերջինիս մեջ **ոճի բացահայտ տարբերություն** նախորդներեն, որ կմղե զմեզ կասկածելու, թե այս կոնդակը գրված ըլլա Սահակ կաթողիկոսի ձեռքով, ինչպես արդարև գրված են անկասկած նախորդները: Այս վերջին կոնդակին մեջ կպակսի Սահակ կաթողիկոսի հատուկ ծաղկյալ, տաքուկ և համով ու քչիկ մը գրաբարախառն ոճը: Այս կոնդակը խմբագրված է ավելի մաքուր աշխարհաբարով և ընդհանրապես չոր է և պաշտոնական: Այնպես որ կրնա ենթադրվիլ, որ խմբագրված ըլլա իր խորհրդակցներուն կողմե...:

Տարակույս չունինք, որ կոնդակը հանված է Սահակ կաթողիկոսի հրահանգով: Մինչև իսկ եթե հիմնավոր ըլլա մեր այն ենթադրությունը, թե ուրիշներ խմբագրած ըլլան զայն: Տարակույսե վեր է նաև, թե Սահակ կաթողիկոս զայն կարդացած և ստորագրած ըլլայ. բայց կրնա ենթադրվիլ, որ 87-ամյա ծերունազարդ կաթողիկոսը անդրադարձած չըլլա կատարված ավելադրության...: Այլապես՝ հստակ և ծանոթ է Սահակ կաթողիկոսի ուղիղ կեցվածքը և «համերաշխական խոնարհ ոգին» Ամենայն Հայոց Հայրապետության հանդեպ, ինչպես կհաստատվի Բաբգեն կաթողիկոսի կողմե.

«Թե՛ օծման և թե՛ մյուռոնօրհնեքի ս. պատարագներուն... Սահակ կաթողիկոս հիշեց նաև **Ընդհանրական Հայրապետը**, զՏեր Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսն. թերևս 1441-են ի վեր առաջին անգամն էր, որ Կիլիկիո Մայր Աթոռին մեջ կհիշվեր **ազգիս Ընդհանրական Հայրապետը**: Պետք էինք հիշել այս դեպքը ցույց տալու համար, թե նորընտիր Սահակ կաթողիկոս որքան փափաքող էր սիրո և համերաշխության երկու Աթոռներու: Այս առթիվ հարկ է հիշել նաև որ Ընդհանրական Հայրապետն Խրիմյան Հայրիկ ապրիլ 10-են առաջ (1903) հեռագրավ շնորհավորած էր զնորընտիր կաթողիկոսն: Միևնույն ժամանակ Տրդատ Պալյան և Հմայակ Դիմաքսյան եպիսկոպոսներուն հեռագրած էր որ հանուն Մայր Աթոռի՝ օծման ներկա գտնվին» (անդ. էջ 815):

«Նույն (Պողոս) առաքելոյն խօսքերը կրկնելով, եթէ «Յիշեցէք զառաջնորդս ձեր», կը հրաւիրեմ զհամայն հոգեձին որդիս Թադէի եւ Բարթողիմէոսի սրբազան առաքելոյն եւ սրբոյն Գրիգորի Պարթեւի՝ Լուսաւորչաց հոգւոց մերոց, որոց աւետարանութեամբ ծնեալ եւ սնեալ եմք ի ծոց Քրիստոսի եկեղեցւոյն, պաղատանս մատուցանել առ Աստուած վասն կենաց **եպիսկոպոսապետին հայկազանց՝ Հայրապետին Ամենայն Հայոց եւ նախամեծար Աթոռոյն սրբոյ Էջմիածնի**: Աստուած եւ Տէր կենաց ամենեցուն՝ պարգեւեսցէ Նորին Ս. Օծութեան կեանս երկարս եւ պայծառութիւն՝ նորա գահուն, որոյ աւնունը սիրելի եւ նուիրական է ամէն հայ հաստատելոց եւ Կիլիկիոյ Աթոռոյս միաձայնորաց հաւասարապէս: Նորին Ս. Օծութիւն եւ ես երկոքեանս ալ ի Սիոն բնակակից էաք երբեմն, եւ խաղաղութեան քաղաքին մէջ Քրիստոսի թողած խաղաղութեամբ առլցուած՝ չեմք հետամուտ փառաց եւ պատուոյ եւ ի հաւաստիս՝ ուտացանք Նորա շնորհաւորական մաղթանքները՝ յայտարար միութեան եւ նշանակ բաջալերութեան» (անդ, էջ 845):

Ապա Սահակ կաթողիկոս 1905 թվին շատ կարևոր հարցի մը կապակցությամբ պետք կգգա խորհուրդ հարցնել Ամենայն Հայոց Հայրապետին հետևյալ շատ հարգական բառերով:

«Նորին Ս. Օծութիւն
Տ. Տ. Մկրտիչ Ա Սրբազնագոյն
Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ
Ծայրագոյն Պատրիարք հաւազգային
Մայր Աթոռոյ ի ս. Էջմիածին

Աստուածարեալ ս. Հայրապետ

Իրաւաբանական կարեւոր խնդրոյ մը առթիւ, որ ըստ հարկին տեղի պիտի ունենայ ընդ մէջ Կիլիկիոյ կաթողիկոսարանին եւ Կ. Պոլսոյ պատրիարքարանին, Վեհափառութեանդ, իբրեւ Հայ ս. եկեղեցւոյ Գերագոյն պետին արդար վճռոյն դիմել պարտք զգացինք» (անդ, էջ 891):

Ու Սահակ կաթողիկոս իր գրությունը կավարտե այսպես.

«Որդիական ամենաջերմ յարգանքք՝ Մնամ վասն պատուական կենաց Վեհափառութեանդ խոնարհ աղօթող»:

Մինչև իսկ այն օրերուն, երբ Օսմանյան պետությունը միացուց Կիլիկիոն ու Աղթամարի կաթողիկոսությունները և Երուսաղեմի ու Կ. Պոլսո պատրիարքությունները Սահակ կաթողիկոսի անձին վրա, ան տակավին իր տիտղոսին վրա չի բարդեր «Ամենայն Հայոց» ավելադրությունը, այլ պարզապես ինքզինքը կկոչե.

«Յիսուսի Քրիստոսի ծառայ եւ կամօքն Աստուծոյ Սահակ կաթողիկոս Հայոց Թուրքիոյ եւ Պատրիարք ս. Երուսաղէմի եւ Կոստանդնուպոլսոյ» (անդ, էջ 950):

Այս բոլորը կհաստատեն, որ Սահակ կաթողիկոս անկեղծ հարգանք ուներ Ամենայն Հայոց Հայրապետության նկատմամբ և իր եկեղեցիին կարգար և կանոնաց գիտակ և հավատարիմ անձնավորություն մը էր: Այնպես որ դժվար է բացատրել, թե ինչ շարժառիթներե տարված կրնար մտցնել այս փոքր փոփոխությունը իր նախապես գործածած «Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո» սովորական և ուղիղ տիտղոսին վրա, իր կյանքի վերջալույսին:

Կաթողիկոսարանի դիվանը չհիշատակեր, թե Սահակ կաթողիկոսի հաջորդները, որոնք գահակալեցին Անթիլիասի մեջ, կոնդակ հանա՞ծ են, կամ գործածե՞ր են արդյոք իր պաշտպանած բանաձևը: Դժբախտաբար մենք ևս ի վիճակի չենք սա պահուս կատարելու այդ ստուգումը: Միայն դիվանի այս մասին պահած լռութենեն թերևս ներելի ըլլա հետևցնել, թե Սահակ կաթողիկոսի հաջորդներ չեն գործածած այդ տիտղոսը մինչև Տ. Խորեն Ա կաթողիկոս: Այլապես, այսինքն եթե արդարև անոնցմե մին կամ մյուսը գործածած ըլլային, մենք կենթադրենք, որ դիվանը անպատճառ հիշատակած կըլլար նաև զանոնք:

Այնպես, որ տրված փաստարկությանց և բացատրությանց լույսին տակ կհաստատվի, որ խնդրո առարկա տիտղոսը ոչ «ավանդություն» մըն է, ոչ ալ «այդքան նվիրական և պատմական հիշատակ մըն է», որ չկարենան և «արտոնված» չըլլան «ջնջել Կիլիկիո գահակալները»: Եթե Տ. Խորեն կաթողիկոս սկսողը եղած չէ այս տիտղոսին գործածության, գեթ բացահայտորեն ընդհանրացնողը եղած է: Հետևաբար, եթե իր «իրավասութենեն վեր» չէ նկատած պատահաբար գործված տիտղոս մը մնայուն վիճակի վերածելը, նույնպես ալ իր իրավասության սահմաններեն վեր պետք չէ նկատե զայն իր բնականոն ձևին վերածելը: Այսու նախ հաստատած կըլլա իր բարի տրամադրությունները հանդեպ Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետության, որուն մասին տարակույս չունինք, և փաստած կըլլա նաև իր պատրաստա-

կամությունը համերաշխության և հաշտության մթնոլորտ մը ստեղծված տեսնելու Հայր. առաքելական եկեղեցիին մեջ: Կընդունինք, որ գոյացած կարգ մը գորդյան հանգույցներեն ոմանք քակելը թերևս Տ. Խորեն կաթողիկոսի ձեռք եղած չըլլա, սակայն այս մեկը քակելը իր ձեռքն է, քանի որ, կկրկնենք, իրմով սկսված է անոր պաշտոնականացումը:

Բաց աստի «Այս մակդիրը այս ձև գործածությունը» չունի իր պատմական «անցյալը», ոչ ալ «այլևս ավանդություն ու օրենք դարձած իրողություն մըն է կիլիկյան Աթոռի գահակալներուն համար», ինչպես դիվանի զեկույցը կձգտի հաստատել: Ընդհակառակը, գեթ մեր ի ձեռին ունեցած փաստերու հիման վրա, այդ տիտղոսը իր ներկա ձևին մեջ Սահակ կաթողիկոսի մեկ-երկու վերջին կոնդակներու մեջ թերևս պատահաբար տեղ գրված է: Առնվազն անոր երկու պատմական ու փաստավոր կոնդակներուն մեջ տեղ չունի այդ մակդիրը իր ներկա և պաշտպանված ձևին տակ: Դարձյալ մեր այժմու ձեռքին տակ եղած փաստերու վրա հիմնվելով կրնանք հաստատել, որ հին կամ նոր կաթողիկոսներեն ուրիշ ոչ ոք գործածեր է զայն այն ձևով, որով ընդհանրացուցած է զայն շնորհազարդ Եղբայրն մեր, Նորին Ս. Օծություն Տ. Խորեն Ա կաթողիկոսն Մեծի Տանն Կիլիկիո:



ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՀՎԱՆ 800-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հունվարի 15—16 օրերին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի և ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանի համատեղ գիտական նստաշրջանը, որը նվիրված էր սուրբ Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին (1173—1973):

Գիտական նստաշրջանին մասնակցում էին մայրաքաղաքի բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտա-հետազոտական հիմնարկների, հայ մշակույթի և արվեստի, Երևանի գիտական, մանկավարժական հասարակայնության ներկայացուցիչներ, գրողներ, ուսանողներ, մամուլի, հեռուստատեսության և ռադիոյի թղթակիցներ:

Մայր Աթոռի կողմից սույն նստաշրջանին ներկա էին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը, Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պ. Շահբազյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագրության քարտուղար տ. Եզնիկ աբդ. Պետրոսյանը:

Հունվարի 15-ին, երեքշաբթի օրը՝ ժամը 11-ին, տեղի է ունենում առաջին նիստը, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում:

Նստաշրջանը ներածական կուռ ու սրտագին խոսքով բացում է Հայաստանի ԳԱ-ի նախագահ, ակադեմիկոս **Վ. Համբարձումյանը՝** Ներսես Շնորհալուն բնութագրելով որպես «Հայ մշակույթի անմար աստղը»:

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ **Վաչե Ս. Նալբանդյանն** իր զեկուցման մեջ ս. Ներսես Շնորհալուն հանգամանորեն ներկայացնում է որպես «Միջնադարի մեծ մտածողն ու բանաստեղծը»:

Շնորհալու 800-ամյակին նվիրված գիտական առաջին նիստում ընթերցվում են նաև հետևյալ բովանդակալից զեկուցումները.

«Ներսես Շնորհալին միջնադարյան գեղարվեստական գրականության մեջ». զեկուցող՝ բանասիրական գիտությունների դոկտոր **Շ. Լ. Նազարյան.**

«Ներսես Շնորհալին ռուս գրականության մեջ». զեկուցող՝ բանասիրական գիտությունների թեկնածու **Ղ. Վ. Այվազյան.**

«Ներսես Շնորհալու մանկավարժական ժառանգությունը». զեկուցող՝ բանասիրական գիտությունների դոկտոր **Մ. Թ. Ավդալբեգյան:**

Գիտական նստաշրջանի երկրորդ նիստը գումարվում է հունվարի 16-ին, չորեքշաբթի, ժամը 11-ին, Մատենադարանի նիստերի դահլիճում:

Երկրորդ նիստում ընթերցվում են հետևյալ արժեքավոր զեկուցումները.

«Հայ գրականության աշխարհականացու-

մը և Ներսես Շնորհալին». զեկուցող՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Շ. Մնացականյան.**

«Գիտությունն ու մշակույթը Հայաստանում Ներսես Շնորհալու ժամանակ». զեկուցող՝ բանասիրական գիտությունների թեկնածու **Փ. Փ. Անթաբյան.**

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

800

«Ներսես Շնորհալու հայրենասիրական գործունեության շուրջ». զեկուցող՝ պատմական գիտությունների դոկտոր **Ա. Գ. Գալըստյան.**

«Ներսես Շնորհալու վարքը». զեկուցող՝ **Ք. Ս. Տեր-Դավթյան.**

«Ներսես Շնորհալու պոետիկայի մի քանի հարցեր». զեկուցող՝ բանասիրական գիտությունների թեկնածու **Վ. Ս. Ներսիսյան.**

«Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը և ժամանակի ասորական գրականությունը». զեկուցող՝ բանասիրական գիտությունների թեկնածու **Լ. Հ. Տեր-Պետրոսյան.**

««Ողբ Եդեսիոյ» պոեմի ձեռագրերը». զեկուցող՝ բանասիրական գիտությունների թեկնածու **Մ. Ս. Մկրտչյան:**

Հունվարի 16-ին, չորեքշաբթի, երեկոյան ժամը 19-ին, Մատենադարանի նիստերի դահլիճում գումարվում է ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի երրորդ և եզրափակիչ նիստը, ուր ընթերցվում են հետևյալ հետաքրքիր զեկուցումները.

«Ներսես Շնորհալին և հայ հոգևոր բանաստեղծությունը». զեկուցող՝ բանասիրական գիտությունների դոկտոր **Գ. Ա. Հակոբյան.**

«Ներսես Շնորհալին և արևելյան քրիստոնեական երգարվեստը». զեկուցող՝ արվեստագիտության թեկնածու **Ն. Կ. Թահմիզյան.**

«Ներսես Շնորհալու նորահայտ տաղերը». զեկուցող՝ **Ա. Մ. Քյոշկերյան.**

«Ներսես Շնորհալու հասարակական-քաղաքական գործունեությունը». զեկուցող՝ իրավաբանական գիտությունների թեկնածու **Խ. Ա. Թորոսյան.**

«Ներսես Շնորհալու դերը բանաստեղծական հանգի և մի քանի այլ ձևական առանձնահատկությունների զարգացման գործում». զեկուցող՝ բանասիրական գիտությունների թեկնածու **Պ. Ի. Ծարաբխանյան.**

«Դիմառնության հնարանքը միջնադարյան հայ բանաստեղծության մեջ». զեկուցող՝ բանասիրական գիտությունների թեկնածու **Ա. Ա. Ղազինյան.**

«Ներսես Շնորհալու դիմանկարը հայկական ձեռագրերում». զեկուցող՝ արվեստագիտության թեկնածու **Ա. Բ. Գևորգյան:**

Ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակի առիթով կազմակերպված վերոհիշյալ գիտական նստաշրջանից բացի մեր հայրենական մամուլում լույս են տեսնում նաև բովանդակալից և արժեքավոր բազում հոդվածներ և ուսումնասիրություններ, Շնորհալու նկարներով, նվիրված մեծ Հայրապետի, հայ միջնադարի մտածողի ու բանաստեղծի, մատենագրի ու երաժշտի, գիտնականի ու եկեղեցական հայրենասեր մեծ գործչի մատենագրական բազմաժանր ու հարուստ ժառանգությանը և բազմապիսի գործունեությանը:

Երևանի ռադիոն և հեռուստատեսությունը նույնպես, հոբելյանի այդ օրերին, լայնորեն անդրադառնում են Շնորհալու ստեղծագործությանը և երաժշտական մեծ վաստակին:

Ս. Ներսես Շնորհալին մեր ժամանակակիցն է իր անմահ բազմաժանր ստեղծագործություններով և հայ մշակույթի անմար աստղը, որը լուսավորում է նաև հայոց պայծառ գալիքի ուղիները:

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՀՎԱՆ 800-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Վեհափառ Հայրապետի 1973 թվականի հունվար 16 թվակիր սրբատառ կոնդակի հրահանգով, սուրբ Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակի առթիվ՝ մեր Ազգիրապետական բոլոր Աթոռներում, թեմերում և եկեղեցական համայնքներում, թե՛ ի հայրենիս և թե՛ ի սփյուռս աշխարհի, կատարվեցին և կատարվում են հոբելյանական հանդիսություններ՝ ոգեկոչելով խնկելի հիշատակն ու մեծ վաստակը հայ եկեղեցու մեծագույն հայրապետներից և սրբերից մեկի։

«Էջմիածին» ամսագիրն իր հաջորդական համարներում համառոտակի անդրադառնալու է ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակի առթիվ կատարված հոբելյանական այդ հանդիսություններին։

Ամսագրի սույն համարում մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հովանավորությամբ Ստամբուլում կատարված եկեղեցական հանդիսությունները ու հոբելյանական միջոցառումները։

Ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակի առթիվ Թուրքիայի հայոց պատրիարք, ամենապատիվ տ. Շնորհք արքեպ. Գալըստյանը շնորհակալ մեծ գործ է կատարել, այն է՝ աշխարհաբարի է վերածել և հրատարակել Շնորհալու 1166 թվականին գրած հայրապետական անդրանիկ կոնդակը, որն ուղղված է «Առ համօրէն հայասեռ ազինս», այսինքն՝ բովանդակ հայ ժողովրդին, կոնդակ, որը մեր մատենագրության և եկեղեցական պատմության մեջ կոչվում է «Թուղթ ընդհանրական» («Ընդհանրական թուղթ» Ներսես Շնորհալիի. աշխարհաբար, 1973, «Մարմարա» տպարան, 93 էջ)։

Սրբազան պատրիարքն իր թարգմանությանը կցել է երեք էջից բաղկացած համառոտ մի «Ներածություն», ուր խոսում է իր կատարած թարգմանության-նպատակի մասին. «Ներսես Շնորհալի Հայրապետի մահվան 800-ամյակի համազգային տոնակատարության քարեբաստիկ առիթը օգտագործելով ուզեցինք խոսեցնել Շնորհալի Հայրապետը նաև մեր ժամանակակից սերունդին»։

Շնորհալու «Ընդհանրական»-ի սույն թարգմանությունը կատարվել է 1871 թվականին Երուսաղեմի հայոց վանքի տպարանի հրատարակության բնագրից։

Ս. Ներսես Շնորհալու հոբելյանի առիթով անցյալ տարի Կ. Պոլսում, սրբազան պատրիարք հոր նախագահությամբ, կատարվել են հետևյալ հանդիսությունները.

Հոկտեմբերի 19-ին, «Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց» տոնի առթիվ՝ հանդիսավոր ս. պատարագ Ֆերիգյուղի ս. Վարդանանց եկեղեցում. Կ. Պոլսի ողջ հայ հոգևորականության ներկայությամբ և մասնակցությամբ՝ նախագահությամբ ամեն. տ. Շնորհք սրբազան պատրիարքի։

Օրվա հանդիսավոր պատարագը մատուցում է տ. Շահան եպս. Սվաճյանը, որը և «Հայր մեր»-ից առաջ ընթերցում է Վեհափառ Հայրապետի 1973 թվականի հունվարի 16 թվակիր կոնդակը՝ գրված Շնորհալու մահվան 800-ամյակի առթիվ։

Հայրապետական կոնդակի ընթերցումից հետո ամեն. տ. Շնորհք սրբազան պատրիարքը քարոզ է խոսում «Ցիշեցէք զառաջնորդս ձեր» բնաբանով։

Կ. Պոլսում ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակի հոբելյանական երկրորդ հանդիսությունը կատարվում է նոյեմբերի 25-ին, կիրակի օրը, Գումգապուի ս. Աստվածածին Մայր եկեղեցում։

Ամեն. Տ. Շնորհք սրբազան պատրիարքը մատուցում է օրվա հանդիսավոր ս. պատարագը, որին ներկա են լինում նաև Սրբազան Պապի ներկայացուցիչը, հունաց տիեզերական Պատրիարքի ներկայացու-

ցիչներ, աստիճանների և Կ. Պոլսում այլ լույր եկեղեցիների ու հարանվանությունների հոգևորական պետեր, ինչպես նաև ազգային հաստատությանց ներկայացուցիչներ, մտավորականներ, գրողներ, թղթակիցներ, ուսուցիչներ և հավատացյալների խումբերամ բազմություն:

Ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակի առթիվ Կ. Պոլսում կազմակերպված հոբելյանական հանդիսությունը փակվում է նոյեմբերի 30-ին, ուրբաթ օրը, երեկոյան, հոգևոր տպավորիչ արարողությամբ, հրսկումով և հոգևոր համերգով ս. Երրորդություն եկեղեցում:

Հսկումին և հոգևոր համերգին նախագահում է ամեն. տ. Շնորհք սրբազան պատրիարք հայրը: Հանդիսությանը ներկա են լինում դարձյալ քույր եկեղեցիների բարձրաստիճան բազում ներկայացուցիչներ, այդ թվում՝ կարդինալ Վիլլեբրանդսը, հունաց պատրիարքարանի փոխանորդ Էմիլիանոս սրբազանը, հայ կաթողիկե համայնքի վիճակավոր արհի. Հովհ. արքեպ. Զոլագյանը, մխիթարյան հայրեր և այլն:

Հանդիսությունը սկսվում է «Խաղաղական»-ի ժամերգությունով, որին հաջորդում է հոգևոր համերգ՝ քաղված Շնորհալու հոգեշունչ երգերից, շարականներից, տաղերից:

Տ. Շահան եպս. Սվաճյանն ընթերցում է Շնորհալու կյանքին և գործին նվիրված մի ճառ, որից հետո քարոզում է սրբազան պատրիարք հայրը:

Այնուհետև ողջույնի սրտագին խոսք է ասում կարդինալ Վիլլեբրանդսը, ոգեկոչելով հայ եկեղեցու մեծ Հայրապետի և սրբի հիշատակը, Հայրապետ, որն «իր ատենին լավագույն օրինակը տված է» Քրիստոսի եկեղեցու միության և եկեղեցիների՝ ի Քրիստոս «մերձեցումին»:

Հանդիսությունն ավարտվում է Տերունական աղոթքով:

Ս. Ներսես Շնորհալու հոբելյանի առթիվ, հայոց պատրիարքարանի հովանավորությամբ, Կ. Պոլսում գեղեցիկ տպագրությամբ և կավճապատ թղթի վրա հրատարակվել է գեղարվեստականորեն ձևավորված «Յուշամատեան ս. Ներսէս Շնորհալիի», Իսթանպուլ, 1973, 28 էջ:

Հուշամատյանի կողքի վրա տպագրվել է աղոթասաց ս. Ներսես Շնորհալու յուղաներկ, գունավոր նկարը, որը գործն է ամերիկահայ նկարիչ Լևոն Մնացականյանի: Սույն նկարը հատկապես պատրաստված է Կալաթիայի հայոց ս. Լուսավորիչ եկեղեցու համար:

Հուշամատյանի երկրորդ էջում գունավոր, գեղեցիկ շրջանակի մեջ գրված է հետևյալ ձոնը.

«Յիշատակի ոգեկոչում
Ս. Ներսէս Շնորհալի

Մեծագործ Հայրապետին Հայոց
Իր վախճանման ութհարիւրամեակին
առիթով

Իսթանպուլ
1973»:

Այնուհետև Հուշամատյանի երրորդ էջում տպագրվել է Վեհափառ Հայրապետի գեղեցիկ, գունավոր նկարը (գործ՝ նկարիչ Գավուգի), իսկ հանդիպակաց էջում՝ հայրապետական սրբատառ գունավոր կոնդակը, որը գրվել է 1973 թվականի հունվարի 16-ին Մայր Աթոռում՝ ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակի առթիվ:

Հուշամատյանի չորրորդ էջը բացվում է ամեն. տ. Շնորհք պատրիարքի գունավոր նկարով և ապա նրա ստորագրությունը կրող «Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետի հեզահամբույր անձը» ակնարկով (էջ 4—6):

7-րդ էջի վրա տպագրվել է նկարիչ Սալթի Մավյանի «Ս. Ներսես Շնորհալի» գունավոր, շատ արդիական նկարը, որը պատրաստվել է Նյու-Յորքի հայոց ս. Վարդան եկեղեցու համար:

Հուշամատյանի հաջորդ էջերում համառոտակի ներկայացվել են Շնորհալու կյանքը, գրական վաստակն ու եկեղեցական գործունեությունը (էջ 7—24), ապա Հին և Նոր Վկայությունները Շնորհալու մասին (էջ 25):

Հուշամատյանի 26—27 էջերում տպագրվել է Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքի ամբողջությունը 36 լեզուների թարգմանությամբ, յուրաքանչյուր տունը տարբեր լեզվով:

Հուշամատյանի գեղարվեստական ձևավորումը մեծ ճաշակով կատարել է Զարեհ Յալտրզճյանը: Այն հմտորեն խմբագրել է Արտո Ճյումպյուշյանը: Զարդանկարները պատկանում են Պերճ Էրզիյանի գեղեցիկ վրձնին:

Ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին նվիրված սույն գեղեցիկ և ճաշակավոր Հուշամատյանը լույս է տեսել Ֆերդինանդ Մանուկյանի մեկենասությամբ:

ԵՐԵՍՆԱՄՅԱԿ «ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԳԻՐ»-Ի

Լրացավ «Մոսկվայի պատրիարքության ամսագիր»-ի հրատարակության 30-ամյակը:

Հիշարժան այս տարեթվի ուրախ առիթով «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում սույն ամսագրի հրատարակության պատմության, հոգևոր, եկեղեցական, հայրենասիրական ու խաղաղասիրական և էկումենիկ շարժման մեջ նրա առաքելության ու գործունեության մասին մի շարք տեղեկություններ՝ քաղելով վերոհիշյալ ամսագրի 1973 թվականի սեպտեմբեր ամսվա համարի «Երեսնամյակ» խմբագրականից:

«Սերգեյ Սրբազան Պատրիարքի գահակալության օրը, 1943 թվականի սեպտեմբերի 12-ը, նշանավոր տարեթիվ է ռուս պրավոսլավ եկեղեցու պատմության համար: Նույն օրը տեղի է ունեցել մեկ այլ եկեղեցական իրադարձություն ևս. լույս ընծայվեց ռուս պրավոսլավ եկեղեցու պաշտոնաթերթ «Մոսկվայի պատրիարքության ամսագիր»-ի առաջին համարը:

Այժմ, երեսուն տարի անց, տեսանելի է ամսագրի զարգացման, նրա բազմակողմանի գործունեության ուղին և այն ավանդը, որ ամսագիրը ներդնում է ընդհանուր եկեղեցական գործում:

Ամսագիրը երախտապարտ է Սերգեյ Սրբազան Պատրիարքին՝ իր հիմնադրին և առաջին խմբագրին, որը պատերազմի դժվարին պայմաններում վերահրատարակեց՝ 1931—1934 թվականներին իր կողմից հրատարակած մեր եկեղեցու ուպաշտոնական ամսագիրը: Սերգեյ Պատրիարքն ամսագրին տվեց այն ուղղությունը, որը պահպանվում է ցայժմ: Եվ եթե շատ կողմերով ամսագիրը հանդիսանում է եկեղեցու դեմքը, ապա այն չի փոխվել հիմնականում Սերգեյ Պատրիարքի ժամանակներից: Ամսագիրը, ինչպես և անցյալում, հնարավորություն է տալիս ընթերցողներին ապրել եկեղեցու հոգևոր կյանքով, հրավիրում է կիսելու իր ուրախությունները, մասնակից լինելու իր հոգսերին և ոչ միայն լուսաբանում եկեղեցու ժամանակակից պատմության ընթացքը, այլև նշում նրա բազմակողմանի ծառայության հետագա ուղին: Եկեղեցին ճանաչվում է իր արտաքին դրսևորումներով, և գործունեության իր այդ կարևորագույն կողմն ամսագիրն արտացոլում է մոսկովյան պատրիարքության մյուս բաժինների հետ սերտ համագործակցությամբ:

Ամսագիրը 30 տարվա բազմաթիվ անձանց, հեղինակների և խմբագիրների աշխատանքի արգասիքն է: Ամսագիրն է ընթերցողներին ներկայացնում մեր եկեղեցու կյանքը, հավատացյալներին՝ աստվածաբանական անհրաժեշտ գիտելիքներ, կանոններ և տեղեկություններ եկեղեցական պատմությունից և ժամանակակից եկեղեցական կյանքի պատկերը՝ նկատի առնելով այսօրվա ընթերցողի հոգևոր կարիքները: 1971 բազան Պատրիարքը (այն ժամանակ պատթվականի Տեղական ժողովում Պիմեն Սրբրիարքական տեղապահ), հատկապես ընդ-

գնեց, որ խմբագրության խնդիրն է հանդիսանում «եկեղեցական մամուլում եկեղեցու կյանքին և գործունեությանը վերաբերող հարցերի, ժամանակակից աստվածաբանական խնդիրների լուսաբանումը, ծխական հոգևորականությանը և համայնքին բարձրագույն եկեղեցական իշխանության կարգադրություններին ծանոթացումը, եկեղեցական գրքերի հրատարակումը»: Փոքրիկ վիճակագրությունը կօգնի մեզ լավագույնս պատկերացնել անցած երեք տասնամյակների ամսագրի բովանդակությանն ու բնույթին: Եկեղեցու վարդապետության և եկեղեցու գործունեության հարցերին են նվիրվել ավելի քան 120 հոդված, կանոններին և աստվածաբանությանը՝ մոտ 260 հոդված: Մոտավորապես այդքան հոդված է նվիրվել նաև հայրաբանությանը և վարքաբանությանը: Հրատարակվել է սուրբ հայրերի ավելի քան 50 ստեղծագործություն (ներառյալ նոր թարգմանությունները): Պատմա-եկեղեցական նյութերը կազմում են ամենամեծ թիվը՝ ավելի քան 450 հոդված: Սրանցից 240-ը վերաբերվում են ռուս եկեղեցու պատմությանը և նշանավոր գործիչներին:

«Մոսկվայի պատրիարքության ամսա-

ալ»-ի էջերում արտացոլում են գտել հայրենական և քույր եկեղեցիների պատմության նշանավոր տարեթվեր և հիշարժան հոբելյաններ:

Ամսագիրը կարելի է անվանել ժամանակակից ռուս պրավոսլավ եկեղեցու տարեգրությունը: Նա իր մեջ միավորում է եկեղեցու պաշտոնական ձայնը՝ ի դեմս Ս. Պատրիարքի և ս. Սինոդի ու տարբեր եկեղեցական գործիչների ելույթների:

Ամսագիրը նկարագրում է մեր եկեղեցու հոգևոր դպրանոցների կյանքը, նշում նրանց գիտական-աստվածաբանական նվաճումները: Նա իր էջերն է տրամադրում ռուս եկեղեցու աստվածաբաններին, աջակցում նրանց հոգևոր միավորմանը այլ տեղական եկեղեցիների հետ:

Ամսագիրը լայնորեն ծանոթացնում է ընթերցողներին տեղական պրավոսլավ եկեղեցիների կյանքի, հոգևոր փորձի, ինչպես նաև պատմության հետ:

Ամսագրի էջերից նրա ընթերցողները ծանոթանում են պրավոսլավ եկեղեցու իրադարձություններին և սրբերի կյանքին: Այստեղ է հրատարակվել սրբերի պատվին եկեղեցա-սլավոնական լեզվով առաջին անգամ կազմված ժամերգությունները և երգեցողությունները:

Անհրաժեշտ է խոսել նաև աստվածաբանական գիտության մեր ժամանակաշրջանի հրատապ հարցի՝ էկումենիկ շարժման մասին, շարժում, որի գործունեությունը լայն արձագանք է գտնում ամսագրի էջերում: Եկեղեցու միության կամ մեկության ուսմունքի համաձայն, ռուս պրավոսլավ եկեղեցին գործում մասնակցություն ունի էկումենիկ շարժմանը, մասնավորապես Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, եվրոպական եկեղեցիների կոնֆերանսների և էկումենիկ այլ կազմակերպությունների աշխատանքների միջոցով: «Իր էկումենիկ գործունեությամբ,—1971 թվականի Տեղական ժողովում ասել է Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ Նիկոդիմը,—ռուս պրավոսլավ եկեղեցին անշեղորեն հետևում է բազմադարյան փորձի վրա հենված ներքին կյանքի և այլ դավանանքների քրիստոնյաների հետ փոխհարաբերությունների լավագույն ավանդություններին: Նվիրվածությունն այս գլխավոր գծին արտահայտվում է սուրբ տիեզերական ուղղափառության ժողովական ակզբունքներին ամբողջապես և անգիջում հետևելուն ու իր բարոյական պարտքի հստակ գիտակցությամբ՝ անել ամենայն հնարավորը և օգնել մյուս քրիստոնյաներին մերձենալու մեր Տեր Հիսուս Քրիստոսի կտակած հավատքի փափագելի միասնությանը» («Մոսկվայի պատրիարքության ամսագիր», 1971, № 7, էջ 14): Ամսագիրն արձանագրում է նաև մեր երկրում էկումենիկ հարաբերությունների փաստերը, քրիստոնյաների արդյունավետ համագործակցության օրինակները՝ հաշտեցնել մարդկությանը սիրո և եղբայրության հողի վրա:

Ամսագիրն առանձին ուժգին է նվիրում աշխարհում կայուն խաղաղության պահպանմանը՝ հավատարիմ առաքելական պատգամին. «Խաղաղություն փնտրել» (Ա Պետր. Գ 11):

Ռուս պրավոսլավ եկեղեցին, որն իր երկրի ժողովրդի հետ կրեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ծանրությունը, պաշտպանում է խաղաղության դատը՝ գործուն մասնակցություն բերելով համաքրիստոնեական խաղաղ շարժմանը նրա սկզբնավորումը՝ 1948 թվականից:

Այժմ, երբ աչքի ես անցկացնում պատերազմական շրջանի ամսագրերի գորշ թղթի վրա տպագրված առաջին համեստ համարները, տեսնում ես, որ այդ անմոռանալի տարիների շատ հոդվածներ ներկայումս էլ պահպանում են իրենց եկեղեցական-հայրենասիրական հնչեղությունը: Բազմաթիվ անգամներ են հնչել ամսագրի էջերից Ս. Պատրիարք Ալեքսիի, Պիմենի և մեր այլ նշանավոր հոգևորականների ձայնը Հնդկաստանի պատերազմի, Մերձավոր Արևելքի և Կիպրոսի դրության, միջուկային զենքի արգելման մասին, ջերմամիջուկային պատերազմը կանխելու, խաղաղության և արդարության պաշտպանության, բարեկեցիկ և իրավահավասար կյանքի համար պայքարող ժողովուրդների պաշտպանության օգտին, ցեղային խտրականության և նորգաղութատիրության դեմ:

Ռուս պրավոսլավ եկեղեցու ձայնը հնչում է աշխարհի բազմաթիվ լեզուներով: «Մոսկվայի պատրիարքության ամսագիր»-ը իր էջերում արտացոլում է արտասահմանյան եկեղեցական համայնքների կյանքը:

Տարեցտարի ամսագրում ձևավորվում է ուրույն եկեղեցական ոճ, որի բնորոշ գիծն է հանդիսանում խորապես գիտակցված պատասխանատվությունը ռուս եկեղեցու և նրա գավակների առաջ, որոնք ամսագրում ունկնդրում են իրենց եկեղեցու կենդանի խոսքին, տեսնում նրանում եկեղեցու դեմքը, փնտրում նրա ներքին բովանդակության արտացոլումը յուրաքանչյուր համարում:

Իր եկեղեցական ծառայությունը խմբագրությունը լրացնում է նաև նրանով, որ պատրաստում է այլ պարբերական և ոչ պարբերական հրատարակություններ. Աստվածաշունչ և ծիսական այլ գրքեր, փաստաթղթերի ժողովածուներ:

Ամսագրի շնորհակալաև խոսքը բոլոր

նրանց, ովքեր ժամանակին նվիրել են իրենց ուժերն ու տաղանդը այս հանդեսին: Անմար կանթեղ կլինի աղոթքն այն բոլոր ընջեցյալների համար, ովքեր մասնակցել են ամսագրի հրատարակությանը: Հավերժ հիշատակ նրանց:

Եվ այժմ էլ ամսագիրը, Աստուծո օգնությամբ, շարունակում է իր գործունեությունը՝ ի փառս իր եկեղեցու և հայրենիքի»:

Անցնող 30 տարիների ընթացքում «Մոսկվայի պատրիարքության ամսագիր»-ի էջերում, միշտ էլ պատշաճ կարևորությամբ, տեղ են գրավել նաև ռուս պրավոսլավ և Հայաստանյայց առաքելական քույր եկեղեցիների հարաբերությունների, երկու եկեղեցիների հովվապետների, այդ թվում՝ Տ. Տ. Գևորգ Զ-ի և ռուսաց Ալեքսի Սրբազան Պատրիարքի և, մանավանդ, Տ. Տ. Վազգեն Ա-ի և Ամեն. Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքի փոխադարձ այցելությունների, խաղաղության և ժողովուրդների եղբայրության ի նպաստ նրանց կատարած միատեղ աշխատանքների և աղոթքների, եկեղեցական պատվիրակությունների փոխանակման և միջեկեղեցական էկումենիկ ոգով նրանց եղբայրական գործունեության արձագանքները:

«Մոսկվայի պատրիարքության ամսագիր»-ի հրատարակության 30-ամյակի ուրախ առիթով, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և «Էջմիածին» ամսագրի, ջերմորեն շնորհավորում ենք քույր եկեղեցու պաշտոնաթերթը, նրա խմբագրական մարմինը՝ գլխավորությամբ խմբագրապետ Պիտիրիմ արքեպիսկոպոսի, հոգևոր և աշխարհական բոլոր աշխատակիցներին՝ մաղթելով է՛լ ավելի մեծ ծառայություններ և հաջողություններ նրանց հոգևոր, եկեղեցական ծառայության սրբազան գործում, Աստուծո փառքին, քրիստոնեական ընդհանրական եկեղեցու պայծառության, աշխարհում կայուն խաղաղության հաղթանակի և ողջ երկրագնդում բոլոր ազգերի համերաշխության և եղբայրության ճանապարհի վրա:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 16-ԱՄՅԱԿԸ

Վեհափառ Հայրապետի գահակալության գրեթե առաջին իսկ օրերից, Նրա հրավերով և նախաձեռնությամբ, Մայր Աթոռին առընթեր կազմվում է հայ անվանի և վաստակավոր ճարտարապետներից բաղկացած մի հանձնաժողով, որն իր ինքնաբուխ նվիրումով ու գիտական հեղինակությամբ իր վրա է վերցնում ս. Էջմիածնի, վանքերի և եկեղեցիների շինարարության անհետաձգելի աշխատանքների ընդհանուր վերահսկողությունը՝ մարմին տալու համար շինարար և կառուցող Հայոց Հայրապետի ծրագրերին։

Հայրապետական Իր անդրանիկ կոնդակում Վեհափառ Հայրապետը 1955 թվականի դեկտեմբերի 1-ին, Իր գործունեության ապագա ծրագրերի իրականացման ճանապարհի վրա, շեշտում էր.

«Պիտի տքնինք ապա վերանորոգելու և վերազարդելու մեր հայրենի սրբավայրերը՝ վանքեր ու եկեղեցիներ, ինչպիսին են ս. Հռիփսիմեն, ս. Գայանեն, Խոր-Վիրապը, Օշականը, Գեղարդը և ուրիշներ, որոնք մեր հոգևոր կյանքի այուներ կհանդիսանան ու հռչակված տաճարները աղոթքի և ուխտի, և զմայլելի հուշարձանները հայ ճարտարապետության փառքի»։

Այս մտածումների լույսի տակ, Վեհափառ Հայրապետի հրավերով, 1957 թվականին Մայր Աթոռում կազմվեց ճարտարապետների առաջին հանձնաժողովը հետևյալ կազմով.

1. **Մարտիրոս Սարյան**, մեծանուն Վարպետ, նկարիչ՝ պատվո նախագահ.
2. **Ճարտարապետ Միքայել Մազմանյան**, արվեստի վաստակավոր գործիչ, «Երևանգիպրոգործ» ինստիտուտի արվեստանոցի վարիչ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ՝ նախագահ.
3. **Պրոֆ.-դոկտ. Կարո Ղաֆադարյան**, հայտնի պատմաբան ու հնագետ, Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր.
4. **Ճարտարապետ, պրոֆ. Վարազդատ Հարությունյան**, արվեստի վաստակավոր գործիչ, դասախոս Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի և նախագահ Հայաստանի ճարտարապետների միության.
5. **Ճարտարապետ, դոցենտ Ռաֆայել Իսրայելյան**, արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի պետական նախագծային ինստիտուտի ճարտարապետական արվեստանոցի վարիչ և գիտաուսուցողական արվեստի ինստիտուտի.
6. **Ճարտարապետ Կոնստանտին Հովհաննիսյան**, արվեստի վաստակավոր գոր-

ծիչ, ուրարտագետ, հնությունների պահպանության բաժնի վարիչ և դասախոս Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի.

7. **Ճարտարապետ Բաղդիկ Արզումանյան**, «Երևանճախագիծ» ինստիտուտի արվեստանոցի վարիչ:

Հանձնաժողովի աշխատանքներին հաճախ իր մասնակցությունն է բերում նաև ժողովրդական նկարիչ **Գրիգոր Խանջյանը**, որը 1968 թվականից դառնում է մնայուն անդամ հանձնաժողովի:

Ճարտարապետների հանձնաժողովն ամիսը մեկ կամ երկու անգամ նիստեր է գումարում Վեհարանում՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

Այստեղ երախտագիտությամբ պետք է արձանագրել ճարտարապետների հանձնաժողովի անցյալ 16 տարիների ընթացքում կատարած աշխատանքները և՝ Մայր Աթոռում, և՝ Մայր Աթոռի շրջափակից դուրս (տես «Էջմիածին» ամսագիր, 1965, №№ ԺԱ—ԺԲ, էջ 26—29):

Տարիների ընթացքում, սակայն, դժբախտաբար, հանձնաժողովի անդամներից ոմանք մահացան. մեծանուն Վարպետը՝ Մարտիրոս Սարյան՝ 1972 թ., Միքայել Մազմանյան՝ 1971 թ., Ռաֆայել Իսրայելյան՝ 1973 թ.:

Որով վերջերս Վեհափառ Հայրապետի ցանկությամբ վերակազմվեց և ամբողջացավ Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի հետևյալ կազմը.

1. **Դոկտ.-պրոֆ. Վարազդատ Հարությունյան**՝ նախագահ.
2. **Դոկտ.-պրոֆ. Կարո Ղաֆադարյան.**
3. **Դոկտ.-պրոֆ. Կոնստանտին Հովհաննիսյան.**
4. **Ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյան.**
5. **Կոնստանտին Այթունյան**, ինժեներ-կոնստրուկտոր.
6. **Ճարտարապետ Բաղդիկ Արզումանյան.**
7. **Ճարտարապետ Արծրունի Գալիկյան:**

Հունվարի 26-ին, շաբաթ օրը, ժամը 13-ին, Վեհարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի լիագումար նիստը:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ և սիրով ողջունում է նորակազմ հանձնաժողովին և մաղթում նորանոր հաջողություններ՝ նրա հետագա եկեղեցաշեն գործունեության ճանապարհի վրա:

Հանուն ճարտարապետների հանձնաժողովի, դոկտ.-պրոֆ. Վարազդատ Հարությունյանը շնորհակալություն է հայտնում Հայոց Հայրապետին՝ հանձնաժողովի հանդեպ ցույց տրված մեծ պատվի համար, և վստահություն, որ հետ այսու էլ հանձնաժողովը մեր շինարար Հայրապետի նախագահության ներքո կշարունակի իր աշխատանքները առանց ընդհատման՝ իրագործելու համար Նրա շինարարական-կառուցողական նոր ծրագրերը՝ ի պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Ժամը 15-ին Վեհարանում, ի պատիվ ճարտարապետների հանձնաժողովի, տրվում է ճաշկերույթ, ուր փոխանակվում են ջերմ ու հայրենասիրական ճառեր՝ սրտագին մթնոլորտում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն ողջունում է Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի նորընտիր կազմին և մաղթում, որ նա իրեն հատուկ ինքնաբուխ նվիրումով ու ճշմարիտ հայ մարդու մեծ սրտով շարունակի իր աշխատանքները Ամենայն Հայոց Հայրապետի կողքին՝ մարմին տալու համար Նրա շինարարական բոլոր ձեռնարկներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 1-ին, ուրբաթ.—Այսօր, ժամը 12-ին, Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին այցելեցին հայերից և արաբներից բաղկացած Բեյրութի հանձնախումբը, որն իր հետ բերեց ոսկեձույլ մի գավաթ՝ ստիյուոքի հայության նվերը Երևանի «Արարատ» ֆուտբոլային թիմին՝ նրա փայլուն հաղթանակների առիթով:

Հանձնախմբի կազմում էին Լիբանանի Սին Էլ Ֆիլի քաղաքապետ Հաքիբ Հաքիմը, «Արարատ» օրաթերթի խմբագրապետ Ժիրայր Նաիրին, լիբանանահայ հասարակական գործիչ Վահրիճ Զերեջյանը, Հայ մարմնամարզական միության վարչության անդամ Սարգիս Շիրտմյանը, Լիբանանի «Արարատ» մարզական միության նախագահ Պերճ Տեր-Պողոսյանը և այլ անձինք Բեյրութի հայ մարզական կազմակերպություններից՝ գլխավորությամբ Սարգիս Սարգսյանի:

Հարգարժան հյուրերին բարեհաճեց ընդունել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Հայոց Հայրապետի և հյուրերի միջև տեղի ունեցավ հետաքրքիր զրույց՝ ջերմ մթնոլորտում:

* * *

Փետրվարի 3-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Ծննդեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան վրդ. Բալիոզյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Լուր, որդեակ, խրատու հօր քոյ, եւ մի մերժեր զօրէնքս մօր քոյ» (Առակ. Ա 8) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Նույն օրը ս. Հռիփսիմե տաճարում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը քահանա ձեռնադրեց լիբանանահայ Մանուկ սրկ. Թնգրյանին, որը վեց ամիս հոգևոր ճեմարանում հետևեց քահանայական դասընթացներին: Նորընծան վերանվանվել է տ. Նարեկ քահանա:

Տեր հայրն իր քառասունքը Մայր Աթոռում անցկացնելուց հետո, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ հովվելու է Բոմբեյի հայ հավատացյալների հոտը:

* * *

Փետրվարի 5-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ այցելեցին հյուրաբար Հայաստանում գտնվող Լեռնային Լիբանանի նահանգապետ Համիս Խուրին, Լիբանանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ջորջ Լուիս Հաքիմը և Լիբանանահայ մարզական կազմակերպությունների նախագահ Սարգիս Սարգսյանը:

Պատվարժան հյուրերին բարեհաճեց ընդունել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Հայոց Հայրապետի և հարգարժան հյուրերի միջև տեղի ունեցավ հետաքրքիր զրույց՝ բարեկամական մթնոլորտում:

* * *

Փետրվարի 8-ին, ուրբաթ.—Այսօր, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Լոնդոնից ուխտավորաբար ս. Էջմիածին ժամանեց Մայր Աթոռի միաբան Վրեժ սրկ. Ներսիսյանը՝ մասնակցելու ս. Ղևոնդյանց քահանաների տոնի առթիվ կազմակերպված հանդիսություններին:

Վրեժ սարկավագն ավարտել է Լոնդոնի Քինգս կոլեջի աստվածաբանական ֆակուլտետը և այժմ աշխատում է իր դոկտորական ավարտաճառի վրա, որի թեման է՝ «Պավղիկյան-թոնդրակյան շարժումը Հայաստանում»:

* * *

Փետրվարի 9-ին, շաբաթ.—Այսօր, երեկոյան, Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որտեղ օրակարգում քննարկվեց նաև «Էջմիածին» ամսագրի հրատարակության 30-ամյա հոբելյանը նշելու հարցը: Այս առթիվ կազմվեց հոբելյանական հանձնաժողով, որի վրա պարտականություն դրվեց հոբելյանի առթիվ հանդիսությունների կազմակերպումն ու անցկացումը:

* * *

Փետրվարի 10-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Ծննդեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ս. Սարգիս զորավարի կյանքի և նահատակության մասին:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Փետրվարի 11-ին, երկուշաբթի.—Այսօր նոգևոր ճեմարանի ուսանողությունը, ճեմարանի տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանի գլխավորությամբ և դասախոսական կազմի մասնակցությամբ, երկօրյա ձմեռային պըտույտի է գնում Ծաղկաձոր:

* * *

Նույն օրը, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Վիեննայից ս. Էջմիածին է ժամանում Մայր Աթոռի միաբան տ. Գարեգին աբդ. Ներսիսյանը՝ մասնակցելու ս. Ղևոնդյանց քահանաների տոնին կազմակերպված հանդիսություններին:

* * *

Փետրվարի 13-ին, չորեքշաբթի.—Նախատոնակ Տեառնընդառաջի.

Այսօր, երեկոյան, Մայր տաճարում Վեհափառ Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի միաբանությամբ, նախագահում է Տյառնընդառաջի նախատոնակի հանդիսությանը:

Ժամը 18-ին Վեհարանի այգում բարձրացել էր Տյառնընդառաջի ավանդական խարույկը: Վեհափառ Հայրապետը որոշյալ ժամին, շրջապատված Մայր Աթոռի միաբանության անդամներով և հոգևոր ճեմարանի դասախոսներով ու ուսանողներով, մոտենում է խարույկին և բոցավառում այն՝ ներկաների խանդավառ ծափերի ներքո:

Ուսանողները երգում և ուրախանում են ավանդական խարույկի շուրջը մինչև ժամը 22-ը:

* * *

Նույն օրը, ժամը 21-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ և նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հանդիպում, որի ընթացքում խոսք են առնում՝ այդ օրերին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Բասրայի հայոց հոգևոր հովիվ տ. Սեպուհ վրդ. Սարգիսյանը, տ. Գարեգին աբդ. Ներսիսյանը և Վրեժ սրկ. Ներսիսյանը՝ ներկայացնելով իրենց պաշտոնավարած համայնքների եկեղեցական-ազգային կյանքը:

* * *

Փետրվարի 14-ին, հինգշաբթի.—Տեառնընդառաջ. Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Փետրվարի 17-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի Ծննդեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Բասրայի հայոց հոգևոր հովիվ տ. Սեպուհ վրդ. Սարգիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եթէ ոք ծարաւի իցէ, եկեա-

ցէ առ իս և արբցէ» (Հովհ. Է 37) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Փետրվարի 18-ին, երկուշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Սոֆիայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ քհն. Բենլիյանը՝ մասնակցելու ս. Ղևոնդյանց քահանայից տոնին նվիրված հանդիսություններին:

* * *

Փետրվարի 22-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որին, Ն. Ս. Օծության հրավերով, որպես անդամ, մասնակցում է նաև ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը:

Նիստից առաջ Վեհափառ Հայրապետը ջերմորեն և սիրով ողջունում է Գերագույն հոգևոր խորհրդի նոր անդամ նկարիչ Գրիգոր Խանջյանի ներկայությունը և մաղթում նրան հաջողություն՝ Մայր Աթոռում իր նոր ծառայության ասպարեզում:

Նկարիչ Գրիգոր Խանջյանը նախապես երկար տարիներ մասնակցել է Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնախմբի աշխատանքներին, իսկ 1968 թվականից նա անդամ է նույն հանձնախմբի:

Այս ձևով համալրվում է Գերագույն հոգևոր խորհրդի աշխարհական անդամների կազմը՝ նախկին անդամ ճարտարապետ Միքայել Մազմանյանի մահից հետո:

Ժողովում խոսք առնելով նկարիչ Գրիգոր Խանջյանն իր սրտագին երախտագիտությունն է հայտնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ այս բարձր պատվի և անդամակցության համար Գերագույն հոգևոր խորհրդին, և խոստանում Մայր Աթոռում իր հետագա աշխատանքներով արդարացնել հայրապետական բարձր վստահությունը:

Գերագույն հոգևոր խորհրդի մյուս անդամները ջերմորեն շնորհավորում են նկարիչ Գրիգոր Խանջյանին որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամի:

* * *

Փետրվարի 24-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Գարեգին սրբ. Ներսիսյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը «Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ Աստուծոյ» (Ղուկ. Դ 4) բնաբանով:

* * *

Փետրվարի 26-ին, երեքշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Բուենոս-Այրեսից ուխտավորաբար ս. Էջմիածին ժամանեց Մայր Աթոռի միաբան Հովհաննես սրկ. Գրվրգյանը:

* * *

Փետրվարի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Մայր տաճարում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ սկսվեց մեծ պահոց հատուկ «Կարգ Ապաշխարութեան և Արևագալի ժամերգութեան»:

Արևագալի ժամերգության ընթացքում Արևագալի երգերը կատարեցին հոգևոր ճեմարանի սաները:

Երեկոյան Մայր տաճարում պաշտվեց նաև «Խաղաղական»-ի ժամերգությունը:

* * *

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ տեղի է ունենում միաբանական հերթական հանդիպում, որտեղ «Նախանձի պատճառները և հետևանքները» թեմայով զեկուցում է տ. Եզնիկ աբեղա Պետրոսյանը:

Բանախոսությունից հետո տեղի է ունենում մտքերի աշխույժ փոխանակություն:

Ապա Մայր Աթոռի միաբան Հովհաննես սրկ. Գրվրգյանը ներկայացնում է Հարավային Ամերիկայի մեր թեմերի եկեղեցական, ազգային, մշակութային կյանքը:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՇԻՐԱԿԻ ԹԵՄՈՒՄ

ՀԱՆՃԱՐԵՂ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

Հայ ժողովուրդը գիտի արժանին և պատշաճը մատուցել իր այն զավակների սուրբ հիշատակին, ովքեր բոլորանվեր կյանքով ծառայել են ազգօգուտ նպատակների: Լույսով, ջերմությամբ սուլեցուն նրանց հիշատակը ապրող և գալիք սերունդների մի կենդանի վկա է, անսահման բարու, գեղեցիկի մի վեհ տիպար: Ուրեմն և նրանց լիաբուռն, կենսաշող կյանքի անմահ հիշատակի ոգեկոչումը մեր՝ ապրողներիս սրբազան, նաև պարտադիր կատարելի պարտականությունն է: Մեր ժողովուրդը ներքին մի վեհ զգացումով, սրտդողով գլուխ է խոնարհում անցյալի այն պայծառաշուք անունների խնկելի հիշատակի առջև, ովքեր մտքի, լուսավորության, մշակույթի, հավատի ռահվիրաներ դարձան և իրենցով լույս ու ջերմություն սփռեցին ամենուրեք: Փայլատակող հանճարների մեր անմահ գործիչների շքեղաշուք անդաստանում իր վառավոր և արժանի տեղն ունի երանելի Հայրապետը՝ Ներսես Շնորհալին, նա, որ իր հուզաթաթավ աղոթքներով մեր սուրբ ժամագրքի անքակտելի ոգին ու մասն է, նա, որ գիտեր մանկանալ, մանուկների սրտին ու մտքին արժանի երգեր գրել, նա, որ երաժշտությամբ էլ բանաստեղծ էր, բանաստեղծելով էլ՝ երգահան, նա, որի աստվածատուր ձայնը քանի՜-քանի՜ ունկնդիրների ականջն է շոյել ու իրենով լցրել, նա, որ գիտեր մեր քրիստոնադավան եկեղեցուն արժանին մատուցել և հանուն նրա՝ պատշաճ ծառայություն, կարգ ու կանոն պահանջել բարձրաստիճան և ցածրաստիճան հոգևորականներից: Ո՞րը թվել: Հանճարեղ Հայրապետի սուր աչքը, սուրբ Ակը հասել են ամենուր, ուր պետք է լիներ հայի ոգին, տվել անմնացորդ կերպով իր պայծառ մտքի փայլատակումները, տվել հանուն մեր ժողովրդի, մեր լույս հավատի, բնավ պատմությունից չակնկալելով հատուցում և, մանավանդ, փառք: Այդ մենք՝ նրա հետնորդներն ենք, որ արժանի դափնեպսակ ենք դնում նրա անմահ անվանը, հպարտ անսահմանորեն, որ երանելի Ներսես Շնորհալին մեր բազում հանճարներից մեկն է:

Եվ մեր ժողովուրդն անսահման սիրով ու երախտագիտությամբ ընդունեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա-ի՝ ս/թ հունվարի 16-ի № 743 սրբատառ կոնդակը, որով մեր հեռատես Հայրապետը 1973 թ. հայտարարեց Ներսես Շնորհալիին նվիրված հոբելյանական տարի:

Շիրակի ժողովուրդն անսահման սիրով ու բերկրանքով ընդունեց այդ կոնդակը, միշտ ակնկալ, որ Շիրակի թեմը և նրա առաջնորդանիստ ս. Աստվածածին եկեղեցին հավուր պատշաճին տոնելու են հայոց հանճարեղ Հայրապետի մահվան 800-ամյա հոբելյանը:

Եվ ահա 1973 թ. դեկտեմբերի 9-ին, կիրակի օրը, Լենինականի ս. Աստվածածին եկեղեցում, հանդիսադրությամբ Շիրակի թեմի բարեջան առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաքարյանի, խանդավառ և ոգեշունչ մթնոլորտում տոնվեց Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակը: Օրվա պատարագիչն էր տ. Կարապետ քահանա Քելամյանը: Եկեղեցին լեփ-լեցուն էր հավատացյալներով, բազմաթիվ մտավորականներով: Վեհաշունչ պատարագի ընթացքին, «Հայր մեր»-ից առաջ, ս. Սեղան է բարձրանում արժանապատիվ տ. Արամ ավագ քահանա Բոյաջյանը և «Արդարությամբ մի դատիր, այլ գթությամբդ ներիր» Շնորհալուց վերցված բնաբանով սկսում իր քարոզը: Նա համառոտակի նշում է Հայրապետի անցած կյանքի պայծառ ճանապարհը, մասնավորաբար ընդգծելով այն մեծ ծառայությունը, որ Ներսես Շնորհալին մատուցել է հայ եկեղեցուն, բանաստեղծա-

կան-երաժշտական արվեստին: Քարոզիչը թվարկում է այն բարեմասնությունները, որոնցով օժտված էր «...միջնադարյան մեծագույն բանաստեղծ, մատենագիր, հայոց եկեղեցու անզուգական շարականների և բազմաթիվ հուզախառն աղոթքների հանճարեղ հեղինակ, հրապարակախոս, երաժիշտ, մանկավարժ Ներսես Դ. Կլայեցին՝ Շնորհալին»: Այնուհետև քարոզիչը մեկնաբանում է նրա բարոյա-խրատական հայացքները: «Որքան առաքինություններով է զարդարված մարդը, այնքան պայծառ ու շողշողուն են իր մեջ բնակվող Լույսի ճառագայթները»: Լո՛ւյս... Ոչա՛փ և քանի՞ցս փառաբանել է Շնորհալին մարդկային հոգու լույսը: Վկան՝ նրա բազմաթիվ բանաստեղծություններն են և, մանավանդ, «Լույս, Արարիչ լուսոյ, առաջին լոյս» բանաստեղծությունը և «Առաւօտ լուսոյ» տաղը, որ այնպես սիրում է մեր ժողովուրդը: «Յարևելից մինչ ի մուտս», «Ճգնաւորք Աստուծոյ», «Լոյս, Արարիչ լուսոյ, առաջին լոյս», «Ամենայարդ և ճշմարտութիւն և կեանք Քրիստոս», «Շնորհեա, մեզ Տէր» շարականներն ու երգերը:

Այս առաջնորդ սրբազան հոր գլխավորությամբ հոգևոր դասը միաբերան ընթերցում է «Հաւատով խոստովանիմ»-ը. սրանում է հավատացյալ ժողովուրդը, եկեղեցին ասես շնչում է Շնորհալիով: Սքանչելի հանդիսությանը մեծ շուք է հաղորդում եկեղեցու քառաձայն երգչախումբը, որը հոգեպարար վեհությամբ առաջին անգամ կատարում է Ն. Շնորհալու «Նորահրաշ» սքանչելի երգը:

Կիրակնօրյա այդ մեծ հանդիսությունը վեհ ներշնչանքով լցրեց բոլոր մասնակիցների սրտերը. ապրեցինք Հայոց հանճարեղ Հայրապետի հետ վայելքի անմոռանալի պահեր:

ՌԻՄԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ք. Լենինական

ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ ԹԵՄԻ ԿՅԱՆՔԵՆ

Պուլկարահայ եկեղեցական թեմը բավական աշխույժ գործունեություն վարած է տարվա ընթացքին:

Թեմի եկեղեցիներում մեջ տոնվեցան բոլոր տերունական տոները և գլխավոր սուրբերու օրերը:

Ըստ Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Վազգեն Ա-ի սրբատառ կոնդակին, բոլոր եկեղեցիներում մեջ տոնվեցավ հայ եկեղեցվո եռամեծ Հայրապետ ս. Ներսես Շնորհալիի մահվան 800-ամյակը, պատշաճ հանդիսավորությամբ: Քահանա հայրերը պատարագի ատեն կարդացին Վեհափառ կաթողիկոսի կոնդակը եկեղեցվո բեմեն ու մասնավոր քարոզներով վեր հանեցին Շնորհալիի ճոխ վաստակը և թանկագին ծառայությունը հայ եկեղեցիին, գրականությանն ու արվեստին: Կատարվեցան Շնորհալիի հայտնի շարականներն ու տաղերը՝ «Առաւօտ լուսոյ», «Զարթուցեալքս», «Նորահրաշ», «Սիոնի որդիք» և ուրիշներ:

Շնորհալիի հիշատակը հարգվեցավ նույնպես պուլկար ուղղափառ եկեղեցվո հոգևոր ակադեմիայի ռեկտոր գեր. Նիկոլայ եպիսկոպոսի նախաձեռնությամբ: 15 դեկտեմբերի 1973-ի շաբաթ կեսօրեն առաջ հոգևոր ակադեմիայի 4-րդ կուրսի ուսանողներուն առջև գերաշնորհ Նիկոլայ եպիսկոպոս խոսեցավ հայ եկեղեցվո դավանաբանական դիրքի մասին:

Այնելի ուշ ակադեմիայի ուսանողականուսահոսական կազմին առջև գեր. ռեկտորը բովանդակալից դասախոսությամբ վեր հանեց Շնորհալիի գործը որպես եկեղեցական գործիչ, բանաստեղծ, մատենագիր, երգահան ու տողասաց:

Ռուս մեծ բանաստեղծ և գրականագետ Վ. Պրյուսովի ռուսերեն թարգմանությանեն պուլկարերենի վերածված Շնորհալիի ստեղծագործություններեն արժեքավոր կտորներ արտասանվեցան ուսանողներու կողմե, իսկ ակադեմիայի երգչախումբը խիստ ներդաշնակ երգեց «Սիոնի որդիքը» պուլկարերեն:

Հավաքույթին հրավիրված էին պուլկարահայ թեմական խորհուրդի և Սոֆիայի եկեղեցական վարչության ներկայացուցիչներ, դպիրներ և Սոֆիայի հոգևոր հովիվ տ. Մեսրոպ քահանա Պենչյան:

Հանդիսության նախագահող գեր. Նիկոլայ եպիսկոպոսի հրավերով թեմական խորհրդո ատենապետ պր. Օննիկ Ասլանյան ընդգծեց Շնորհալիի ճոխ և ծավալուն գործունեությունը՝ նշելով, որ Շնորհալի կներկայանա նույնպես միջեկեղեցական էկումենիկ շարժման առաջին նախաձեռնողներեն մին, ու շնորհակալություն հայտնեց հանդիսության նախաձեռնող գեր. Նիկոլայ եպիսկոպոսին:

Տ. Մեսրոպ քահանա երգեց Շնորհալիի հայտնի ստեղծագործություններեն կտորներ:

Սոֆիա ԻՐԱՋԵԿ





ՊՐՈՖԵՍՈՐ ԱՇՈՏ ԳԱՐԵԳԻՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



Լրացավ «Էջմիածին» ամսագրի 1950—1955 թթ. խմբագիր, Գերագույն հոգևոր խորհրդի գիտական քարտուղար և հոգևոր ճեմարանում հայ ժողովրդի պատմության, հնագիտության և աղբյուրագիտության դասախոս, անվանի պատմաբան, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆ. Աշոտ Գարեգինի Աբրահամյանի ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության 40-ամյակը:

Պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը ծնվել է 1909 թվականին Ազիզբեկովի շրջանի Կեչուտ գյուղում, հայ քահանայի ընտանիքում:

Նախնական կրթությունը ստացել է Նախիջևանի հայկական դպրոցում և ապա իր ուսումը շարունակել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որից հետո նվիրվել է իր ժողովրդի հոգևոր և կրթական ծառայության գործին:

1930 թվականին Ա. Աբրահամյանն ընդունվել է Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմա-տնտեսագիտական ֆակուլտետ: Այնուհետև, ավարտելով ասպիրանտուրան, դիսերտացիա է պաշտպանել և աշխատանքի անցել ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանում, ուր հանգամանորեն զբաղվել է հիմնականում Անանիա Շիրակացու գիտական, մաթեմատիկական և մատենագրական վաստակի ուսումնասիրությամբ և հրատարակությամբ, որի համար էլ նրան շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Պրոֆ. Ա. Աբրահամյանը հաջորդ տարիներին ևս շարունակել է իր բեղմնավոր պատմա-բանասիրական հետազոտությունները՝ հարստացնելով հայ մշակույթի գանձարանն արժեքավոր ուսումնասիրություններով:

1944—1956 թվականներին պրոֆ. Ա. Աբրահամյանը Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում, իր մանկավարժական, գիտական-պատմա-բանասիրական գործունեությանը զուգահեռ, շնորհալալ աշխատանքներ է կատարել նաև Մայր Աթոռում՝ որպես Գերագույն հոգևոր խորհրդի գիտական քարտուղար, «Էջմիածին» ամսագրի խմբագիր և դասախոս հոգևոր ճեմարանի:

«Էջմիածին» ամսագրում էլ պրոֆ. Ա. Աբրահամյանը, տպագրել է նաև բազում արժեքավոր ուսումնասիրություններ՝ պատմագիտական և հայագիտական բովանդակությամբ (տես՝ «Պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի տպագիր աշխատությունների մատենագիտություն», 1974, էջ 8—21):

Սակայն մատենագիտական այս ցանկի 14—21 էջերում թյուրիմացաբար պրոֆ. Ա. Աբրահամյանին են վերագրվել 1952—1956 թվականների «Էջմիածին» ամսագրի մի շարք խմբագրականներ (այս մասին տես «Էջմիածին» ամսագրի մատենագիտություն», «Էջմիածին» ամսագիր, 1973, №№ Ը—ԺԱ):

Մայր Աթոռում իր աշխատակցության տարիներին, 1944—1955 թվականներին, պրոֆ. Ա. Աբրահամյանը քանիցս Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից գործուղվել է արտասահման՝ Իրան, Իրաք, Սիրիա, Լիբանան, Պաղեստին, Եգիպտոս՝ այցելելով մեր եկեղեցական թեմերն ու համայնքները՝ ամրապնդելու համար Էջմիածին-հայրենիք-ափյուռք եկեղեցական-հայրենաուիրական կապերը:

1956 թվականից սկսած պրոֆ. Ա. Աբրահամյանն ամբողջապես նվիրվել է գիտական, պատմա-բանասիրական և մանկավարժական աշխատանքներին, մանավանդ Երևանի պետական համալսարանի հնագիտության, աղբյուրագիտության և ազգագրության ամբիոնում՝ որպես մասնագետ հայ ժողովրդի պատմության և քաջահմուտ հայագետ:

Պրոֆ. Ա. Աբրահամյանի ծննդյան 70 և գիտա-մանկավարժական գործունեության 40-ամյակի առիթով, հանուն Մայր Աթոռի, Վեհափառ Հայրապետը բարեհաճել է շնորհավորել նրան և նրել նեռանյալ հեռագիրը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

Սրտանց շնորհավորում ենք ձեր յոթանասունամյա հոբելյանը և ողջունում երկար տարիների ձեր գիտական վաստակը իբրև հմուտ պատմաբան, բանասեր և մանկավարժ:

Այս երջանիկ առիթով արժան ենք համարում գնահատանքով հիշատակել ավելի քան տասը տարիների ձեր բազմակողմանի, օգտաշատ աշխատանքը Մայր Աթոռ սուրբ Էջմիածնում, որը մի կարևոր նպաստ հանդիսացավ մեր եկեղեցու պատմության բախտորոշ մի շրջանի համար:

Հարգարժան ուսուցչապետ, ընդունեցեք Մեր անկեղծ ու ջերմ մաղթանքը արևշատության, որպեսզի դեռևս բազում տարիներ շարունակեք ծառայել մեր վերածնված հայրենիքի գիտության և ուսումնատենչ նոր սերունդներին:

Սուրբ Էջմիածնից օրհնություն ձեր կյանքին ու վաստակին և ձեր ընտանիքին:

ՎԱԶԳԵՆ Ա
ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

8-ը փետրվարի 1974 թ.,
Մայր Աթոռ ս. Էջմիածին

ՀԱՅՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Արշակունյաց անկումից հետո հայոց եկեղեցուն վիճակված էր փոխարինելու նաև երկրի թագավորությանը, հոգալու հայ իշխաններին ուղղություն տալու, նրանց միջև եղած վեճերը հարթելու, նրանց միաբանությունը կոփելու հարցերի լուծումը: Հայ ժողովրդի համար դա, անակնկալ փորձություններով հղի, չափազանց ծանր ժամանակաշրջան էր: Հայոց եկեղեցու և ավագանու առջև հրամայական խնդիր էր դրված, հենվելով ազգային հավատքի, մայրենի դպրության և մարտնչողական ուժերի վրա, պահպանել հայկազանց սերունդը արևելքի և արևմուտքի աշխարհակալ զավթիչների ճնշումներից և կլանումից:

Այս հայրենանվեր գործը գլուխ բերելու համար անհրաժեշտ էր նուրբ և ճկուն դիվանագիտություն, կրակոտ հայրենասիրություն, անձնազոհություն, անդուլ գործունեություն:

Պատմական անցքերն ու վավերագրերը հաստատում էր, որ ժամանակի հայ եկեղեցու գործիչներն ու ավագանին օժտված էին այս առաքինություններով: Դիվանագիտական այս հմուտ գործունեության մեջ պատվավոր դեր էր կատարում Հայոց իմաստուն Հայրապետ, մեծ հայրենասեր, փիլիսոփա, երաժիշտ, ուսուցչապետ Սահակ Պարթևը, որին որդիաբար լսում ու հարգում էին ոչ միայն հոգևոր պետերը, այլև հայրենասեր իշխանները:

Վարդանանց ապստամբության նախօրյակին սահակ-մեսրոպյան շրջանի հայոց դիվանագիտությունը պայմանավորված էր պարսից տերությանը չհակադրվելու սկզբունքների վրա. Հայաստանը, իր կրոնական տարբերությամբ հանդերձ, չէր խախտում իր հավատարմությունը պարսից արքունիքի հանդեպ: Հոգևոր դասի գլխավորած ազգային դպրության ու մշակույթի ստաջընթացը չէր հակադրվում Տիզբոնի քաղաքական շահերին: Հայ ավագանին չէր թերանում իր պարտականությունների կատարման մեջ՝ պարսից տերության նկատմամբ: Հայոց այրուձին, Տիզբոնի հրամանին պատրաստ, բարեխղճությամբ կատարում էր իր զինվորական պարտականությունները՝ պարսկական բանակի շարքերում: Հայոց եկեղեցին և ավագանին աշխատում էին դիվանագիտորեն օգտվել երկու թշնամի կայսրությունների միջև տևականորեն բորբոքվող հակամարտություններից և, միաժամանակ, երկիրը չդարձնել կայսրություններից մեկն ու մեկի խարդավանքների խաղալիքը, խուսափել զինվորական աննպատակ ելույթներից և չխռովել երկրի խաղաղությունը:

Դիվանագիտական այս քաղաքականությունը շուրջ քսան տարի ապահովում էր մարզպանական Հայաստանի խաղաղ զարգացումը, նրա ներքին ինքնավարության և նախարարությունների ինքնավար վարչաձևի պահպանումը, երկիրը քրիստոնեության կրոնա-բարոյական կանոններով կառավարելու կարգը, ազգային հավատքի վրա հիմնված ապրելակերպի և ավանդությունների կենսահաստատումն ու խորացումը, ազգային դպրության ու մշակութային կյանքի վերելքը, ժողովրդի ազգովին համախմբումն ու ինքնաճանաչումը:

Դիվանագիտական այս քաղաքականությունից շանում էին թե՛ քրիստոնյա Հայաստանը, թե՛ հեթանոս Պարսկաստանը: Եվ թվում էր, թե Տիզբոնը որևէ պատճառ չուներ հայ ժողովրդի դեմ բռնություններ գործադրելու: Բայց այդպես չէ. պարսից արքունիքը հայերի և հույների կրոնական ու մշակութային կապերի մեջ «զմեծ և զպիտանի» Հայաստանը կորցնելու հեռանկարից բացի ուրիշ ոչինչ չէր տեսնում: Այս մտավախության համար պարարտ հող էր ստեղծում Հայոց աշխարհի խաղաղ զարգացումը իր ազգային յուրօրինակ բարքերով, որոնք ձևով և բովանդակությամբ խորթ էին պարսկական կրոնա-բարոյական սկզբունքներին: Պարսից քաղաքագետների հասկացողությամբ՝ այս եղելությունը կարող էր ճակատագրական ոչ ցանկալի հետևանքներ ունենալ և, ի վերջո, բաժանել հայ և պարսիկ ժողովուրդների պատմական ճամփաները: Այս պատճառով էլ Տիզբոնը, սկսած 5-րդ դարի քառասնական թվականների կեսերից, այլևս չէր գոհանում հայ ազգային գործիչների հավատարմությամբ և անհերկբա ծառայություններով: Նրանց հարկավոր էր ավելին. զրկել հայ ժողովրդին իր նախասիրած բարոյական, քաղաքական համոզմունքների, սովորույթների, ավանդությունների, կացույթածնի հիմքերի հիմքից՝ ազգային հավատքից, ետ շրջել նրա վերընթաց կյանքի պատմության անիվը, ներքաշել նրան պարսկական քարեդարյան հետամնաց բարքերի հորձանուտը և վերջնականապես յուրացնել նրան: Կրոնը ազգային գաղափարախոսություն էր, քաղաքականություն, բարոյականություն, ապրելակերպ, մտածելակերպ, վարվելակերպ, ազգային պատկանելիության ու նկարագրի վավերացումը: Ահա սե ինչու Տիզբոնը իր քաղաքական հաշիվները կառուցում էր Հայաստանում քրիստոնեությունը բռնի վերացնելու և իր դավանանքը հայերին պարտադրելու եռակետի վրա:

Պարսից արքունիքը իր այս հետապնդումը գլուխ բերելու իբրև նախնական պայման՝ գործնական քայլերի է դիմում Հայաստանը տնտեսապես ու քաղաքականապես թուլացնելու: 448 թվականին Հարաստանում անցկացվում է նոր աշխարհագիր և երկուսից երեք անգամ բարձրացվում բնակչության հարկերը[1]: Հարկման են ենթարկվում նաև հայոց եկեղեցին և վանքերում ապրող միաբնակները, որոնք մինչև այդ ազատվում էին հարկերից: Հոգևոր իշխանությունից վերցվում է երկրի դատական գործերը վարելու ավանդական իրավունքը և այն ենթարկվում մի պարսիկ մոգպետի: Պաշտոնից հեռացվում է երկրի ներքին գործերը վարող հայ հազարապետը, որին փոխարինելու է գալիս մի պարսիկ[2]: «Եւ զայս ամենայն առնէր՝ թերևս զմիաբանութիւնն քակեսցէ, և զմիայնակեացսն փախուսցէ. և առ յոյժ աղքատութեան՝ ակամա դիմեսցեն յօրէնս մոգուց»[3]:

Տիզբոնի գործակալ Դենշապուհը հակողության տակ է առնում նաև հայ իշխանների գործունեությունը, բանսարկությամբ թշնամություն է սերմանում նրանց միջև. «Զնախարարեանն բանսարկութեամբ արկ ընդ միմեանս, և յամենայն տան արար խռովութիւն»[4]:

Հանառակ Հայաստանի քաղաքական ներքին իրավունքների բռնադատման այս կոպիտ և քմահաճ փաստերի, հայ հոգևոր իշխանությունն ու ավագանին շարունակում են խաղաղ մնալ: Սակայն դրանով չի գոհանում պարսից արքունիքը. 449 թվականի վերջերին սպառնալի պահանջ է ներկայացվում Հայաստանին, Վրաստանին և Ալվանքին քրիստոնեությունից հրաժարվելու, մազդեզականություն ընդունելու մասին: Այս առիթով հայոց հոգևոր պետերն ու նախարարները ժողովի են հավաքվում Արտաշատում: Ի պատասխան Հազկերտի սպառնալի հրովարտակի, ժողովականները իրենց պատասխան նամակում հայտնում են, որ աշխարհիկ կյանքի հարցերում պատրաստ են անվերապահորեն ենթարկվելու թագավորի կամքին. «Ոչ միայն ըստ երկիւղի մարդկան որպէս առ ակամէ ըստ օրինի չար ծառայից ծառայել ձեզ, այլ կամաւ իսկ և յօժարութեամբ՝ յամենայնի զձեր կամս և զհրամանս կատարել»[5]: Ինչ վերաբերում է դավանափոխության պահանջին, ժողովականները դա համարում են անհնարին. «Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ո՛չ հրեշտակք և ո՛չ մարդիկ. ո՛չ սուր և ո՛չ հուր, ո՛չ ջուր, ոչ ամենայն զինչ և են դառն հարուածք»[6]:

Ստանալով Արտաշատի ժողովի պատասխան նամակը, Հազկերտ 2-րդը «փութով և անխափան» պարսից դուռն է կանչում «երիցունց աշխարհացն» իշխաններին[7]:

Հայոց, Վրաց և Աղվանից իշխանները

---

[1] Տես Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 29:

[2] Անդ:

[3] Անդ:

[4] Անդ:

[5] Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, ի Վենետիկ, 1875, էջ 127:

[6] Եղիշէ, նշված աշխատություն, էջ 40:

[7] Ղազար Փարպեցի, նշված աշխատություն, էջ 192:

կապվում են միմյանց հետ, խորհրդակցում ու եզրակացնում. «Թէ չէ խալաղութեամբ, այլ կորստեան ոգւոց է ստիպումն կոչմանս այսորիկ»[8]: Իշխանները երկրընտրանքի առաջ են կանգնում. «Խորհէին, չերթալն որպէս ապստամբութիւն կարծեցուցանել, և զերթալն խողվեալք տարակուսէին. հաշուէին զերթալն լաւագոյն»[9]:

Այս փաստերը վկայում են, որ հայ, ինչպես և վրացի ու աղվան իշխանները, գործը արյունահեղության չհասցնելու նկատառումներով, պատրաստ էին համակերպվելու Տիզբոնի անգամ «ոչ ըստ արքունի արժանաւորութեան»[10] տնտեսական ու քաղաքական բռնություններին: Նրանք թեև զգում էին, որ Տիզբոնում իրենց համար որոգայթ է նյութվում, բայց ապացուցելու համար, որ իրենք ապստամբելու մտադրություն չունեն, ընդհանուր համաձայնության են գալիս՝ ընդունել Հազկերտի սպառնալի հրավերը: Իշխանները թերևս նաև վերջին փորձն էին անում լեզու գտնելու թագավորի հետ, բայց ոչ իրենց գաղափարական դիրքերը զիջելու գնով: Այս պատճառով էլ, մեկնելուց առաջ, նրանք Ավետարանի վրա «անքակ և աներկեւան» երդում են ընդունում. «Թէ երթամք, այո, այլ ուրանալ զարարիչն երկնի և երկրի ոչ հաւանիմք»[11]:

Տիզբոնում իշխանները Հազկերտին հայտնում են, որ նրան ճանաչում են որպես իրենց թագավոր, որն «իշխանութիւն» ունի. «սպանանել և կեցուցանել»[12]: Նրանք նաև հիշեցնում են թագավորին, որ հայերը, սկսած Շապուհ 3-րդի օրերից (385—388), թեև պարսից հպատակությունն ընդունել են որպես քրիստոնյա ժողովուրդ, բայց «...սիրով կատարէին զամենայն հրաման բանի նորա, և բազում անգամ ի նմանէ մեծապարգևք լինէին: Եւ յայնց ժամանակաց մինչեւ ի քո հայրենի աթոռդ՝ և մեք զնոյն ծառայութիւն ծառայեցաք, բայց թերևս քեզ լաւագոյնս քան զառաջնոցն»[13]:

Նախարարները փորձում են համոզել արքային արքային, որ դավանանքի տարբերությունը թե՛ անցյալում, թե՛ ներկայումս չի խանգարել և չի խանգարելու իրենց հավատարմությանը պարսից արքունիքի հանդեպ. «Զայս ասելով ցուցանէին զքաջութիւն արութեանցն լաւագոյն քան զառաջնոցն ըստ զինուորութեան կարգի: Իսկ զմտից և զսակից, և որ այլ ևս էին հարկ աշխարհին, բազմագոյն քան առ հարքն նորա երթայր յարքունիս»[14]:

Ոչ մի տրամաբանական բացատրություն չի ազդում մոլեգնած թագավորի համառության վրա. նա կտրականապես հայտարարում է. «Վնաս համարիմ ընդունել ի գանձ արքունի զհարկս աշխարհին ձերոյ. քանզի տգիտաբար մոլորեալ էք ի ճշմարիտ օրինացս մերոց»[15]:

Թագավորը սպառնում է. «...Եթէ ոչ վաղիւ ընդ առաւօտն՝ ընդ երևումն սքանչելոյն, ընդ իս իւրաքանչիւր ծունր նմա ոչ երկնեսջիք՝ խոստովանելով զնա աստուած, ոչ ինչ թողացուցից ձեզ՝ զամենայն նեղութիւնս չարչարանացն ի վերայ աճելով, մինչեւ ակամա կատարիցէք զկամս հրամանաց իմոց»[16]:

Հազկերտը նախազգուշացնում էր. «Ոչ կարէք աւերել զանխաբ ամուրս իմ. և ոչ որում ցանկացեալդ էք՝ վաղվաղակի տամ գտանել ձեզ. այլ զամենեսեան զձեզ և որ ի գնդիս են՝ չարաչար կապանօք ի Սագաստան տամ անցուցանել ընդ անճանապարհ տեղիս, որ և բազումք ի ձէնջ ի խորշակէ երթալն սատակիցին, և մնացեալքն անկցին ի բերդս ամուրս և ի բանդս անելս: Եւ ի ձեր աշխարհն առաքեցից զօրս անթիւս հանդերձ փղօք, և զկին և զորդիս ի Խուժաստան տամ խաղացուցանել. և զեկեղեցիս և զոր անուանէք վկայարանս՝ քակեցից, քանդեցից և յապականութիւն դարձուցից. և եթէ ոք ընդդէմ դարձեալ գտցի, կոխան եղեալ գազանաց՝ անողորմ մեռանիցի»[17]:

Այս սպառնալիքից հետո նախարարները «առ վայր մի» լռում են[18]: Սպարապետ Մամիկոնյանը «աներկիւղ և քաջասիրտ մտօք» հայտարարում է, որ ինքը պատրաստ է, ինչպես միշտ, այսուհետև ևս հավատարմությամբ ծառայելու արյաց արքային. «Բայց զօրէնս՝ զոր ուսայ յԱստուծոյ ի մանկութենէ իմմէ՝ թողուլ և ընդ երկիւղի մարդոյ փոխանակել՝ չէ հնար»[19]:

Նախարարները ժամանակ են խնդրում «խորհել ընդ միմեանս»[20]:

Հազկերտի ներքին խորհրդականներից մեկը, որ գաղտնի քրիստոնեություն էր ընդունել և «մեծապէս հոգ տանէր հնարից կենաց վշտացելոցն», մի քանի նախարարների

[8] Անդ:
[9] Անդ, էջ 192—193:
[10] Եղիշէ, նշված աշխատություն, էջ 23:
[11] Ղազար Փարպեցի, նշված աշխատություն, էջ 193:
[12] Անդ, էջ 196:
[13] Եղիշէ, նշված աշխատություն, էջ 45:
[14] Անդ:
[15] Անդ, էջ 48:
[16] Եղիշէ, նշված աշխատություն, էջ 44—45:
[17] Անդ, էջ 48:
[18] Ղազար Փարպեցի, նշված աշխատություն, էջ 198:
[19] Անդ, էջ 199:
[20] Անդ, էջ 140;

միջոցով խորհուրդ է տալիս առերես ընդունել պարսից դավանանքը. «Զի առ անգամ մի ի նեղութենէ զանձինս ապրեցուցեն»[31]:

Նախարարները համաձայնվում են առերես համակերպվել Հազկերտի հրամանին: Սակայն Վարդան զորավարը չի համաձայնվում նրանց ընդունած առերես ուրացման նախնական պայմաններին. «Մի լիցի ինձ ստել արարչին իմում պատճառանօք և կամ ճշմարտութեամբ, և մի ուրանալ զայն՝ առաջի անօրէն և մահկանացու ազգի»[32]: Մ'այլոց «այո համեստ, մտացի և քաջ» Արտակ իշխանի և վրաց Աշուշա բդեշխի հորդորները նույնպես արդյունք չեն տալիս. Վարդան Մամիկոնյանը մնում է անդրդվելի:

Մի քանի հայ մտավորականներ, որոնք ընդունելով Ղազար Փարպեցու այս վկայությունը, փորձում են «ապացուցել», թե, իբր, Վարդան զորավարը միայն իր դավանանքի, անձնական հոգու փրկության մասին մտածող, դիվանագիտական ձիրքից զուրկ, տաքարյուն մի անձնավորություն էր:

Իրավ է, սպարապետ Մամիկոնյանն իր ազգային հավատքին անվերապահորեն նվիրված անձնավորություն էր: Բայց եթե նա այդ առաքինությամբ օժտված չլիներ, չէր կարող դառնալ իր ժողովրդի խլճի ազատության պատվախնդիր պաշտպանը: Ուրեմն, հենց դրա մեջն էլ պետք է նկատել պաշտելի զորավարի արժանիքը: Նրա ցուցաբերած զորավարական մեծ վարպետությունը Աղվանից պատերազմում և Ավարայրում, նրա անօրինակ խիզախությունն ու հերոսական մահը՝ իր ժողովրդի փրկության ի խնդիր, ինքնընտիրության, վկայում են, որ նրա ոգուն խորթ էին իր անձի մասին մտահոգվելու ձգտումները:

Պատմությունից հայտնի է, որ Վարդան Մամիկոնյանը և Վահան Ամատունին ժամանակի ամենակրթված հայ իշխաններն էին, սահակ-մեսրոպյան դպրոցի արաժնավոր սաները: Սպարապետ Վարդանը անձամբ աշակերտել ու դաստիարակվել է իր պապի՝ Սահակ Պարթևի մոտ, նրա իմաստուն շնչի տակ, մի մարդու, որ բազում առաքինությունների կողքին կարող է, իրավամբ, դասվել նաև հայոց դիվանագիտական մտքի ամենապատկառելի դեմքերի շարքը: Ուրեմն Սահակ Պարթևի աշակերտին դիվանագետ չճանաչելու պնդումները զուրկ են տրամաբանական հիմքից: Մեծ Սահակը չէր կարող իր միակ ժառանգին՝ Վարդանին չհաղորդել իր գիտելիքների ամբողջ պաշարը:

Ինչ վերաբերում է, թե սպարապետ Մամիկոնյանը ինչու սկզբում չէր հաշտվում նախարարների առերես ուրացման մասին որոշման հետ, ապա դրա համար կային հիմնական պատճառներ: Զորավարը դեմ չէր առերես ուրացմանը, այլ անընդունելի էր համարում նախարարների այդ մասին առաջարկած պայմանները: Ղազար Փարպեցու վկայությամբ նախարարները սկզբում «...յայս միտս առ վայր մի հաւանեցան և հաստատեցան, եթէ ոչինչ գոյ մեզ հնար գործանել յորոգայթէս ...բայց եթէ առ ժամ մի յանձն առնումք պատճառանօք զհրամանեալս նոցա. և երթեալ իրաքանչիւր աշխարհ, այնուհետև կամ կեանք ծառայելով ճշմարիտ հաւատոյն Քրիստոսի՝ յոր ծնաք աւազանին նորոգութեամբ... կամ թողեալ զաշխարհ՝ գնամք իրաքանչիւր յօտարութիւն կնաւ և որդուովք»[33]: Նախարարները իրենց այս համաձայնությունը հիմնավորում էին Ավետարանի այն պատվիրանով, որն ասում է. «Ցորժամ հալածեսցեն զձեզ ի քաղաքէս յայսմանէ՝ փախիջիք ի միւսն»[34]:

Նախարարների այս պայմանը նախատեսում էր. մի կերպ ազատվել Տիգրոնի ծուղակից, վերադառնալ տեղերը, շարունակել ազգային դավանանքը: Իսկ եթե դա անհնար լինի, թողնել երկիրը և, ընտանիքով, բռնել օտարության ճամփան: Հազկերտի սպառնալիքից կարելի էր գուշակել, որ պարսիկները թույլ չէին տա նախարարներին ազատորեն շարունակելու ազգային պաշտամունքը, և նրանք, ստիպված, հեռանալու էին հայրենի երկրից: Այս դեպքում ի՞նչ էր սպասում հայրենի երկրին, ինչպե՞ս էր դասավորվելու հայ անպաշտպան, անգլուխ և լքված ժողովրդի ճակատագիրը՝ պարսկական զինվորական բռնությունների պայմաններում:

Վարդան զորավարը իրավացիորեն կրտրականապես մերժում էր այս դիրքավորումը: Նա չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ օրհասական պահին, հանուն անձնական ապահովության, հայ իշխանը թույլ տա լքելու հայրենի երկիրը, դիմելու փախուստի: Այս պատճառով էլ զորավարը ընդունում է առերես ուրացման պայմանը միայն այն դեպքում, երբ «երիցունց աշխարհաց տանուտերաքն և սեպուհքն» համաձայնվում են հայրենի երկիրը պարսկական բռնություններից զենքով պաշտպանելու գաղափարին. «Բերէին այնուհետև և զսուրբ Աւետարանն, եդեալ ամենեցունց առ հասարակ զձեռս ի վերայ՝ երդնուին ասելով. եթէ դու ևեթ առ վայր մի կարասցես յանձն առնուլ պատճա-

[31] Եղիշէ, նշված աշխատությունն, էջ 49:

[32] Ղազար Փարպեցի, նշված աշխատությունն, էջ 146:

[33] Ղազար Փարպեցի, նշված աշխատությունն, էջ 141—142:

[34] Անդ, էջ 142:

ռանօք զասացեալս թագաւորին, և զերծուսցես զմեզ յորոգայթադիր թշնամւոյն յարձակմանց, ամենայն ասացելոց ի քէն յուիցուք և արասցուք, դնելով զանձինս ի վերայ ուխտին սրբութեան, և յեղլով զարիւն մեր ի վերայ ամենայն աշխարհին խրկութեան»[25]:

Հազկերտը թերևս հավատալով նախարարների առերես ուրացությանը, հույս ունենալով, որ սրանք օգնելու են Հայաստան ուղարկվելիք իր մոգերին ու զորքերին՝ պարսկական դավանանքը տարածելու գործում, հրամանով սահմանում է բռնությունները գործադրել «մինչև ի նաւասարդէ ի նաւասարդ»[26]: Պարսից մոգերն ու զորքերը նախարարների հետ Հայաստան են հասնում 450 թվականի գարնանը: Ուրեմն մինչև նավասարդ ամիսը (օգոստոսի 6-ը) մոգերն աշխատելու էին համոզելու եղանակով տարածելու իրենց դավանանքը:

Այս կացությունից դիվանագիտորեն օգտվելու, ապստամբության գործը ավելի հանգամանորեն նախապատրաստելու նկատառումներով, Վարդանանք, Տիզբոնից վերադառնալուց հետո, շարունակում են առերես ուրացման քաղաքականությունը: Հոգևոր դասը, որը մինչ այդ ոտքի էր հանել հայ ժողովրդին, «ուրացեալ» նախարարներին, պարսից մոգերին ու զորքերին հակահարված հասցնելու համար, երբ ճշտում է ուրացության առերես լինելու հանգամանքը, խաղաղվում է, համակերպվում ստեղծված պայմաններին:

Չպետք է մոռանալ, որ առերես ուրացման դիմակը ծպտյալ և սահմանափակ վիճակի մեջ էր դնում հայ իշխանների գործունեությունը: Այս պատճառով էլ հոգևոր դասը, որի ձեռքումն էր ապստամբության գաղափարական ղեկը, փաստորեն գլխավորում էր նաև զինված պայքարը կազմակերպչորեն նախապատրաստելու գործը:

Ղազար Փարպեցին վկայում է, որ այս օրերին, Վարդան զորավարը տեսնելով, որ պարսից մոգերն ու զորքերը գրավելով Հայաստանի պաշտպանական նշանակություն ունեցող վայրերը՝ ամենուրեք կառուցում են իրենց պաշտամունքային հաստատությունները՝ օգտագործելով նաև հայոց սրբավայրերը. «Տեսեալ զայս ամենայն չարիս»[27], որոշում է ընտանիքով փոխադրվել Հունաստան[28]:

Այս վկայությունը նույնպես զենք է դարձել մի քանի մտավորականների ձեռքին՝ զորավարի հասցեին «դասալիք», «աշխարհից ձանձրացած», «փախստական» և նման այլ բամբասանքներ հորինելու համար: Բայց «դասալիք» կամ «փախստական» անձնավորությունը ինչպե՞ս համարձակվեց իր գնդով խիզախելու թշնամու երեք անգամ գերազանցող ուժի դեմ: Նրա ինչի՞ն էր պետք, Տիզբոնում եղած օրերին, հարկադրելու երեք երկրների իշխաններին, հայրենիքը լքելու փոխարեն, մնալ տեղերում և «դնել զանձինս ի վերայ ուխտին սրբութեան», հեղել «զարիւնն ի վերայ ամենայն աշխարհին փրկութեան»: Եվ մի՞թե հայոց հոգևոր և նախարարական գործիչները այնքան միամիտ մարդիկ էին, որ կարող էին իրենց ապստամբության բանակի հրամանատարությունը վստահել մի «դասալիք» կամ «փախստական» մարդու: Մի խոսքով Վարդան զորավարի հասցեին հորինած այս կարգի «մեկնաբանությունները» գիտական արժեք չեն ներկայացնում:

Արդ, ճշտենք զորավարի Հունաստան «գաղթելու» նպատակը:

Նույն Ղազար Փարպեցու վկայությամբ Հունաստանի «ճամփան բռնած» Վարդան Մամիկոնյանն ընտանիքով կանգ է առնում Բագրևանդի Արամանա գյուղում, որը սահմանակից էր Բասենին և Տվարծատափին, ու որոշում է «սակաւ ինչ աւուրս» հանգստանալ[29]: Զորավարի հեռանալը մեծ անհանգստություն է պատճառում հայոց հոգևոր դասին և ավագանուն[30]: Այս առիթով նրանք արտակարգ ժողով են գումարում: Մտքերի փոխանակության ընթացքում ժողովականները ընդհանուր համաձայնության են գալիս պատգամավորություն ուղարկել և «աղաչանօք դարձուցանել» հայոց սպարապետին[31]:

Մարզպան Վասակը ժողովի անունից նամակ է կազմում ուղղված Վարդան զորավարին: Նամակն ստորագրում ու մատանիներով կնքում են թե՛ մարզպանը, թե՛ ժողովին մասնակցող բոլոր ավագ նախարարները: Նամակի հետ զորավարին են ուղարկում Ավետարան, որին միացված էին նախարարների ստորագրած ու կնքած նոր երդումը՝ ապստամբության ուխտին հավատարիմ մնալու մասին[32]: Զորավարին համոզելու և ետ բերելու նպատակով, կազմվում է հանձնաժողով, որի կազմում մտնում էին Ղևոնդ երեցը, Երեմիա երեցը, Խորեն երեցը, Ար-

[25] Ղազար Փարպեցի, նշված աշխատություն, էջ 151:

[26] Եղիշէ, նշված աշխատություն, էջ 52:

[27] Ղազար Փարպեցի, նշված աշխատություն, էջ 162:

[28] Անդ:

[29] Տես Ղազար Փարպեցի, նշված աշխատություն, էջ 165:

[30] Տես անդ, էջ 166:

[31] Տես անդ, էջ 167:

[32] Տես անդ:

շավիր Արշարունին, Հմայակ Դիմաքսյանը, Գագրիկ Աբեղյանը:

Ընդունելով պատգամավորությունը, ծանոթանալով իրեն հասցեագրված նամակին և իշխանների երդումին՝ Վարդան զորավարը հայտարարում է. «Եւ ոչ զմեր մեք զոգւոց խնդրեմք զօգուտն, այլ և ընդ այլոցն խնամք ընդ փրկութեան: Եւ ոչ որ փախուցեալս եմք՝ յերկիւղէ ոք ինչ սրոյ կարծիցէ զայս զմէնջ, յորմէ ոչ ոք երբեք զանգիտեալ յազգիս մերում, և ոչ երբեք. և թէ որպէս ի վերայ ընկերի բարւոյ՝ առաւել քան զանձին եղեալ է այսմ տոհմի, զայն և ամենայն դուք Հայք գիտէք ստուգութեամբ ի պատմութենէ. գրոց, և ի լսելոյ ձեր յաւագաց: Բայց ի նանգաւոր խաբէութենէ ձերմէ՝ զոր արարեալ է ձեր ընդ նախնիսն մեր հանապազ, զայս ամենայն յիշելով, գնացեալ եմք լինել անձնապուրծք. որպէս ցանկ ձեր մղեալ է մեզ ի նեղ և ձեր անձինս ի բաց ունելով՝ մեր միայն ազգս պատահեալ է վշտաց մեծաց և մահուց: Բայց սուրբ և երկնաւոր հրաւիրակիդ Աւետարանի՝ ոչ կացեալ ոք է ընդդէմ ի մեր ազգէս, և ոչ մեք կամք. քան լիցի»[33]:

Այս հայտարարությունից հետո Վարդան զորավարը «կամակցութեամբ երանելի եպիսկոպոսաց իւրոց և սիրելեաց» անհապաղ վերադառնում են «առ ընկերսն ի բանակն Հայոց»[34]:

Այս վկայություններից երևում է, որ Վարդան զորավարը, Հունաստան «գաղթելու» փոխարեն, փոխադրվել է Արամանա գյուղը, ուր «հանգստացել» է այնքան ժամանակ մինչև հայոց հոգևոր պետերն ու իշխանները արտակարգ ժողով են գումարել և պատգամավորություն ուղարկել «աղաչանօք» նրան «դարձուցանելու»: Սա էլ ցույց է տալիս, որ զորավարը, հայ ժողովրդի համար ստեղծված տագնապալի օրերին, Հունաստան գաղթելու մտադրություն չի ունեցել. այլապես նա չէր կարող կանգնել կես ճանապարհին, հապաղել այնքան երկար և, մանավանդ, ետ կանգնել իր որոշումից ու վերադառնալ: Ուրեմն զորավարի Հայաստանից «հեռանալու» խորհուրդը այլ պատճառներ ուներ:

Բերված վկայություններից երևում է, որ սպարապետ Մամիկոնյանը վստահ չի եղել հայ իշխանների վճռականության վրա: Անվստահության համար թերևս հիմք են ծառայել մի շարք էական գործոններ: Այսպես. Տիզբոնում իշխանները դժվարությամբ են հաշտվում զենքի դիմելու գաղափարի հետ: Այստեղ սրբազան դաշինքին հավատարիմ մնալու մասին երդում էին ընդունել միայն տասը նախարարներ, մինչդեռ Հայաստանում կային շուրջ քսան ավագ և հիսունի չափ ոչ ավագ իշխանական տներ: Հազկերտը, զգուշության համար, պատանդ էր վերցրել վրաց Աշուշա թագեխին և Վասակ մարզպանի երկու որդիներին, մի փաստ, որը կարող էր բացասաբար անդրադառնալ մարզպանի հավատարմության վրա՝ ուխտի միաբանությանն նկատմամբ: Տիզբոնից հայ իշխանները առնված էին պարսից մոգերի ու զորքերի հսկողության տակ. թագավորը «բազում ասպուծի գումարէր ընդ նոսա, և զմեծ ոմն իշխան մոգպետ կուսցուցանէր ի վերայ նոցա»[35]: Հայաստանում պարսից մոգերն ու զորքերը գրավում են երկրի պաշտպանական նշանակություն ունեցող վայրերը, տեղաբաշխվում նախարարների տներում և սկսում ազատորեն քարոզել իրենց դավանանքը: Հայ իշխաններին որսալու և իր կամքին ենթարկելու միտումով Տիզբոնը գործի է դնում նաև սիրաշահումների միջոցը, կաշառքը:

Այս բարդ իրադրության պայմաններում բացառված չէին հայ իշխանների տատանումների, թուլակամության, ուրացության և դավաճանության դեպքերը: Զորավարը նկատի ուներ նաև անցյալի փորձը, երբ հայ իշխանները Մամիկոնյաններին մղում էին վտանգի առաջին գիծ և, վճռական պահին լքելով նրանց, ետ էին կանգնում ու պատճառ դառնում «վշտաց մեծաց և մահուց»[36]:

Այսպիսով Վարդան զորավարը, ապրստամբության բանակի հրամանատարությունը ստանձնելուց առաջ, համոզիչ հիմքեր ուներ ստուգելու հայ իշխանների դիրքը ապստամբության հարցում, նրանց նվիրվածությունը ուխտի միաբանությանը, պարսկական բռնություններին ու սիրաշահումներին կուլ չգնալու նրանց վճռականությունը: Մի խոսքով զորավարի Հունաստան «գաղթելու» խորհուրդն էր. դիվանագիտորեն ճշտել հայ իշխանների հետ գինակցելու հուսալիությունը: Այս պատճառով էլ արտակարգ ժողովին մասնակցող իշխանները, զորավարին համոզելու, ետ բերելու իրրև գործնական միջոց, դարձյալ Ավետարանի վրա ընդունած երդումով, հավաստում են իրենց նվիրվածությունը ուխտի միաբանությանը: Սրբազան նոր երդումը զորավարի համար ամենացանկալի երևույթն էր. «Բայց սուրբ և երկնաւոր հրաւիրակիդ Աւետարանի՝ ոչ կացեալ ոք է ընդդէմ ի մեր ազգէս, և ոչ մեք կամք. քան լիցի»[37]:

[33] Ղազար Փարպեցի, նշված աշխատություն, էջ 170—171:

[34] Անդ, էջ 171:

[35] Եղիշէ, նշված աշխատություն, էջ 51:

[36] Ղազար Փարպեցի, նշված աշխատություն, էջ 171:

[37] Ղազար Փարպեցի, նշված աշխատություն, էջ 171:

Ղազար Փարպեցու վկայություններից հետևվում է նաև, որ Վարդան զորավարը ժամանակի այն առաջին դեմքն էր, որը կարող էր գլխավորել և գլխավորեց հայոց համաժողովրդական ապստամբությունը սասանյան բռնադատիչների դեմ, որին անվերապահորեն վստահում էին հայոց եկեղեցին և հայրենասեր իշխանները: Դա է հաստատում թեկուզ այն փաստը, որ նրան ետ բերելու մտահոգությունը հարկադրում է հոգևոր դասին ու նախարարներին արտակարգ ժողով գումարելու, նրան համոզելու համար սրբազան նոր երդում ընդունելու, նրան «դարձուցանելու» համար ամենահեղինակավոր մի պատգամավորություն ուղարկելու՝ Ղևոնդ երեցի ղեկավարությամբ. «...Զի առանց նորա մեր այս ամենայն կամք և խորհուրդք՝ և ոչ մի ինչ վճարին»[38]:

Վարդան զորավարը արժանացել էր այս մեծ հեղինակությանն ու հարգանքին, որովհետև նա իր ազգային հավատքի, ազգային ապրելակերպի անկաշառ պահապանն էր, նրան հուզում էր ոչ թե անձնական, այլ ժողովրդի փրկության հարցը. «Եւ ոչ զմեր անթ զոգոց խնդրեմք զօգուտն, այլ և ընդ այլոցն խնամք ընդ փրկութեան»[39]: Նա, առաջին հերթին, մտահոգված էր օգտակար լինելու «ի վերայ ընկերի բարւոյ»[40] և «զհոգ ընկերաց հոգայր»[41]: Այս մտահոգության մղումով էր նաև, որ նա «առ վայր մի պատճառանօք» մինչև անգամ չէր հաճախում եկեղեցի, շարունակում էր կեղծ ուրացումը, որպեսզի օգտակար լիներ իր ժողովրդին, իր ընկերներին և վտանգի չենթարկեր Տիզբոնում պատանդ պահված Աշուշա բդեշխի և Վասակ մարզպանի որդիների կյանքը[42]:

Վարդան զորավարի տակտիկական և կազմակերպչական այս միջոցառումների նպատակն էր. համախմբել և պատրաստ պահել ազգային զինված ուժերը՝ դիմագրավելու ամեն մի անակնկալ: Նա առաջնորդվում էր ոչ թե «ի քաղաքէ յայսմանէ» մի այլ քաղաք փախչելու, այլ «ակն ընդ ական» սկզբունքով: Զորավարի այս նախաձեռնությունների մեջ հստակորեն ուրվագծվում են ոչ միայն մեծ զորավարի, այլ նաև մեծ հայրենասերի, հմուտ դիվանագետի և ազգային հիանալի գործչի հատկությունները:

Ամառվա ամիսներին Վարդանանք շարունակում էին կեղծ ուրացության քաղաքականությունը: Հավատալով դրան՝ Տիզբոնը, սառանց փոխվրեժի դիմելու, համբերությամբ կուլ է տալիս Ղևոնդ երեցի հասցրած զարհեհավանյան շառաչուն ապտակը: Սակայն սկզբից ևեթ պարսիկ մոգերն ամենուրեք հանդիպում էին հայ բնակչության արհամարհանքին և, իրենց դավանանքը տարածելու գործում, հաջողությունների չէին հասնում: Հայ իշխանների կանայք տեսնել անգամ չէին կամենում պարսիկ մոգերին, արգելում էին իրենց երեխաներին լսելու անկոչ «դաստիարակների» քարոզը: Տղամարդիկ թեև առերես ցույց էին տալիս, թե, իբր, ընդունել են պարսկական դավանանքը, բայց ներքուստ զզվում էին մոգերի կենցաղային սովորություններից, հաճախ չէին կարողանում զսպել իրենց ատելությունը, մինչև անգամ խորշում էին նրանց հետ հացի նստել[43]:

Այս փաստերը վկայում են, որ Վարդանանք արտաքուստ հարմարվում էին Տիզբոնի հրամանին. ներքուստ ազատություն էին տալիս, թերևս նաև խրախուսում էին բնակչության բուռն դիմադրությունը, թեժ պահում ժողովրդի մարտնչողական ոգին: Դիվանագիտական այս ելակետի նպատակն էր. ժամանակ շահել ավելի հանգամանորեն նախապատրաստելու ապստամբության գործը և, միաժամանակ, հասկացնելու Տիզբոնին, որ հայ ժողովրդին դավանափոխելու նրա ճիգերը ապարդյուն են, որով թերևս հնարավորություն ստեղծվի կանխելու պարսից բռնությունները, շրջանցելու արյունահեղության վտանգը: Այսինքն, Վարդանանք վարպետորեն զուգակցում էին ապստամբության նախապատրաստումը՝ երկրի խաղաղությունը պահպանելու գործունեության հետ:

Վասակ մարզպանը, ընդհակառակն, կլանված էր պարսից դավանանքը Սյունիքի հայությանը պարտադրելու հոգսերով՝ կանգ չառնելով բռնությունների, սիրաշահումների, կաշառատվության առաջ[44]:

Ստեղծվում էր քաղաքական նոր իրադրություն. մարզպանը դրժում էր հայ իշխանների հետ հաստատած սրբազան դաշինքը, Ավետարանի վրա Տիզբոնում և արտակարգ ժողովում ընդունած իր երդումները, անդամահատում էր երկրի մարտական ուժերը: Վասակն ու իր համախոհները դառնում էին Տիզբոնի գործակալները, նրա բռնի դավանափոխության հենարանը հայոց թիկունքում: Վարդանանք արդեն գործ ունեին ոչ միայն արտաքին, այլև ներքին, թերևս ավելի նողկալի թշնամու հետ: Դրությունը բարդանում էր նաև նրանով, որ հայոց պաշտպանական նշանակություն ունեցող

[38] Անդ, էջ 167:
[39] Անդ, էջ 170:
[40] Անդ:
[41] Անդ, էջ 174:
[42] Ղազար Փարպեցի, նշված աշխատություն, էջ 172:
[43] Տես անդ, էջ 174—175:
[44] Տես Եղիշէ, նշված աշխատություն, էջ 63—65:

բերդերը, քաղաքներն ու ավանները գտնվում էին պարսիկների ձեռքին, կարող էին օգտագործվել որպես թշնամական հենակետեր ապստամբության թիկունքում:

Այս կացության պայմաններում աստիճանաբար բացահայտվում էր նաև հայ իշխանների ուրացության խաբուսիկ բնույթը, որի մասին պարսիկ մոգերը տեղեկագրում էին Տիզբոն[45]: Մոտենում էր նաև նավասարդ ամիսը, երբ պարսիկները, թագավորի հրամանի համապատասխան, սկսելու էին բռնությունները[46]: Ուրեմն Վարդանանք այլևս չէին կարող առաջնորդվել նախկին գործելակերպով: Կեղծ ուրացության քաղաքականությունը կորցնում էր իր գործնական նշանակությունը: Դիվանագիտական ճանապարհով արյունահեղությունից խուսափելու ճիգերը դառնում էին անիմաստ: Դիվանագիտությունը սպառում էր իր դերը. խոսքը տրվելու էր զենքին:

Քաղաքական այս շիկացած մթնոլորտում, հայոց հոգևոր դասի նախաձեռնությամբ, գումարվում է երկրի հայրենասեր ուժերի գաղտնի ժողովը: Կացությունը պահանջում էր. կամ հարմարվել Տիզբոնի բռնություններին և ուղի հարթել երկրի պարսկացման համար, կամ արյուն թափել և հայ մնալ: Ժողովը նախընտրում է երկրորդ միջոցը. վճռում է պարզել ապստամբության դրոշը: Ժողովի որոշման համապատասխան ապստամբության ուժերը վերջ են տալիս կեղծ ուրացությանը, դիմում զենքի, գրավում պարսիկների զավթած հայոց բերդերը, քաղաքներն ու ավանները, ոչնչացնում պարսիկների պաշտամունքային կայաններն ու հաստատությունները, մաքրում ապստամբության թիկունքը պարսկական զորքերից ու մոգերից, ոտքի հանում հայ բնակչությանը պարսկական առաջիկա բռնություններից երկիրը պաշտպանելու համար: Ապստամբները նաև ձերբակալում են Վասակ մարզպանին, բայց վերջինս կարողանում է փրկվել ժողովրդական դատաստանից՝ ապստամբության ուխտին հավատարիմ մնալու մասին իր ընդունած կեղծ երդումով:

Վարդանանց հետագա գործունեությունը զինված պայքարի նախապատրաստման պատմությունն է, պայքար, որը վեհորեն դրսևորվեց Ավարայրի պատմական դյուցազնամարտում և հաղթանակով պսակվեց դրան հաջորդող հերոսական գոտեմարտերում:

Այսպիսով, Վարդանանք, Տիզբոնի քմահաճ բռնությունների օրերին, դիմեցին իրենցից կախված դիվանագիտական բոլոր հնարավոր միջոցներին երկրի խաղաղությունը պահպանելու, անպատեհ արյունահեղությունից խուսափելու համար և, միաժամանակ, վարպետորեն օգտագործեցին կեղծ ուրացության քաղաքականությունը ժողովրդական ուժերը համախմբելու և թշնամու հարվածին հարվածով պատասխանելու: Նրանք հեռատեսորեն կռահում էին, որ պարսկական բռնությունների պայմաններում, հնազանդության եղանակով, անհնար էր երաշխավորել ազգային հավատքի պահպանումը, հետևաբար և ժողովրդի գոյատևումը: Նրանք զգում էին, որ ստեղծված պայմաններում ժողովրդի փրկության ամենահուսալի միջոցը զինված ապստամբությունն է: Նրանք նաև համոզված էին, որ հայ ժողովուրդը իր ընդերքում անթեղում է այն հրդեհը, որով կարելի կլինի խափանել սասանյան բռնադատիչների չարագուշակ հետապնդումները: Եվ նրանք չսխալվեցին:

Երբ հնչեց օրհասական ժամը, Տիզբոնը սպառնաց զենքով, Վարդանանք պատրաստ էին առաջնորդելու հայոց գնդերը ի մարտ և ժողովրդի փրկության զոհասեղանին դնելու իրենց թանկագին կյանքը:

Ահա Վարդանանց դիվանագիտության էությունը: Այս դիվանագիտությունը հենվում էր ժողովրդի մարտնչողական ուժերի վրա, իր հաջողությունը պայմանավորում այս ուժերի ամրապնդումով, հզորացումով: Նրանք լավ գիտեին, որ առանց այս հենարանի դիվանագիտությունը խղճալի խաղալիք է թշնամու ձեռքին:

Վասակ մարզպանը, պարսկական նիզակների օգնությամբ հայոց թագավոր դառնալու միտումով, թեև դրժեց սրբազան ուխտը, երկփեղկեց հայոց միաբանությունը, նողկալի քայլերի դիմեց ապստամբության շարքերը կազմալուծելու, Հայոց, Վրաց, Աղվանից դաշինքը խափանելու, Հայաստանը արտաքին օգնությունից զրկելու, և զինվորական ուժով անցավ թշնամու կողմը, եղբայրասպան պատերազմ հայտարարեց իր խղճի ազատության համար մարտնչող հայ ժողովրդին, բայց անկարող եղավ ընկճելու Վարդանանց և Ղևոնդյանց անկոտրում վրեժխնդրությունը: Հայոց ապստամբությունը հասավ իր նպատակին, ապահովեց ժողովրդի թե՛ բարոյական և թե՛ գործնական հաղթանակը:

Վարդանանց օրինակը դարձավ ժողովրդի գոյատևման հոգեկան և բարոյական բազմադարյան սնունդը, նրա ոգեշնչման անսպառ աղբյուրը, ազատության ու հաղթանակի ձգտող նրա բազում սերունդների նշանաբանը:

---

[45] Տես Ղազար Փարպեցի, նշված աշխատություն, էջ 174—175:

[46] Տես Եղիշէ, նշված աշխատություն, էջ 51:

ԳԵՎՈՐԳ ԱԲԳԱՐՅԱՆ
(Բանասիրական գիտությունների դոկտոր)

ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՂԻ»*

Պարույր Սևակի հիշատակին

Ինչպես երևում է, շարականը կազմողն օգտվել է տաղի այնպիսի մի ձեռագրից, որի մեջ քննարկվող տողն անջատված է եղել սայլին վերարերող տողից և կորցրել է իմաստը: Քանի որ «անուշահոտ բուրմամբ ընթանայր» խոսքը հիշեցնում է նաև Քրիստոսի մարմինն օծելու համար խունկ պատրաստած կանանց ընթացքը՝ շարականը կազմողը տաղի տողն օգտագործել է այդ նոր իմաստով, մանավանդ, որ դա նույնպես կապվում է Քրիստոսի հարության պատմության հետ:

Այս փոփոխությունը կատարելիս հեղինակը բնականաբար **հաշվի չի առել տաղի այլաբանական իմաստը**, այդ իսկ պատճառով էլ հիշյալ տողերը տաղից շեղվում են նաև այդ առումով և առանց այլաբանելու պատկերում են Քրիստոսի հարության ավետարանական մանրամասնությունները:

Շարականի մեջ կան ձեռագրական տարընթերցվածքների մասին վկայող այլևայլ նշաններ: Այսպես, օրինակ, տաղում առաջնություն է տրվում նախ սերովբեներին, ապա քերովբեներին, իսկ շարականում հակառակն է: Տաղում կարդում ենք՝ «նախնոյ» իսկ շարականում՝ «նախահօրն» և այլն:

Շարականը կարևոր արժեք ունի հատկապես տաղի կորած տողերը վերականգնելու գործում: Մեր կարծիքով նրա հետևյալ տունն ամբողջությամբ քաղված է տաղից.

Այսօր արձակեցաք ի կապանաց նախահօրն
Եւ վերստին նորոգմամբ
Յաւիտենական կենացն եղաք ժառանգորդք:
Փա՛ռքք Քրիստոսի ամենազօր յարութեան:

Առանց այս տողերի տաղի կառույցը և միտքը կիսատ է մնում:

Նարեկացին տաղն այնպես է կառուցել, որ պետք է անպայման սկզբի ու վերջանար միևնույն տողով.

Փա՛ռքք Քրիստոսի ամենազօր յարութեան:

Այս կրկնակը տաղի նախերգանքն ու վերջերգն է և ունի ոչ թե տողի, այլ առաջին և վերջին տների նշանակություն: Հետևաբար նրա վերականգնումը տաղի վերջում, որպես տաղի վերջաբանը, անհրաժեշտություն է: Նրանով ամբողջանում և իմաստ է ստանում նաև տաղի սկզբում պահպանված միևնույն տող-նախերգանքը, որն առանց նրա, կարծես, թե չի կապվում տաղին և ավելորդ տողի տպավորություն է թողնում:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1974 թվականի № Ա-ից:

Անհրաժեշտ է վերականգնել նաև նրան նախորդող երկու տողերը, որոնք շարունակում են «Այսօր արձակեցաք ի կապանաց նախանձ» տողի միտքը և լրացնում են Սիոնի որդիների երգն այն մասին, որ մարդկությունը նախահոր կապանքներից ազատվելով՝ դառնում է հավիտենական կյանքի ժառանգորդ:

Տաղի ճշգրտման պահանջ ունի նաև շարակաղից անկախ: Վերը մենք արդեն ուղղել ենք երկու տող, որոնք վերջանում են «եզնամոլն» և «աթոռակը» բառերով: Ուղղման կարիք ունի նաև հետևյալ տողը.

Եւ որդիք նոր Սիովնի նոր երգէին զայս ասելով[34]:

Աս. Մնացականյանը սրբագրել է այս ձևով՝

Եւ որդիք նոր Սիովնի, որք երգէին զայս ասելով[35]:

Սակայն երկու դեպքում էլ տողը մնում է աղճատված: Առաջին դեպքում ավելորդ կրկնված է մեր ընդգծած «նոր» բառը, իսկ երկրորդ դեպքում ավելորդ է «որք» բառը:

Մեր ասածն ավելի նկատելի դարձնելու համար բերենք նաև մյուս տողերը.

Եւ ճոնչալով (սայլը—Գ. Ա.) գայր մտանէր յԵրուսաղէմ.
Եւ որդիք նոր Սիովնի, որք (կամ՝ «նոր») երգէին զայս ասելով.
—Փառ՞ք Քրիստոսի ամենազօր յարութեան:

Պարզ երևում է, որ տողի տրամաբանական ընթացքը խանգարված է և որ՝ մեր նշած «որք» կամ «նոր» բառերն իսկապես ավելորդ են:

Մաշտոցի անվան Մատենադարանի № 7728 ձեռագրում (էջ 42ա), որն ընդօրինակված է 17-րդ դարում, քննարկվող տողերը գտնում ենք այսպես.

Եւ ճոնչալով գայր մտանէր յԵրուսաղէմ.
Եւ որդիք նոր Սիոնի եին ընդառաջ,
Որք երգէին զերգս ասելով.
—Փառ՞ք Քրիստոսի ամենազօր յարութեան:

Այստեղ «որք» բառն արդեն իմաստ ունի և ամեն ինչ կարգին է: Կարգավորված է և՛ ազատ ոտանավորը, և՛ միտքը: Սայլը մտնում է Երուսաղեմ, նրան ընդառաջ են ելնում Սիոնի որդիները: Բացի այդ՝ վերականգնված է Նարեկացուն վայել «երգէին զերգս ասելով» արտահայտությունը, որի փոխարեն տպագիր բնագրում գտնում ենք գրիչների աղճատած «երգէին զայս ասելով» պարզունակ խոսքը:

Աղճատված է նաև տաղի 12-րդ տողի «որք երգէին և ասէին» արտահայտությունը, որի փոխարեն Մատենադարանի ձեռագրերը (№ 8413, էջ 56ա) ունեն դարձյալ «որք երգէին զերգս ասելով» արտահայտությունը, որ և պետք է վերականգնել սխալի փոխարեն:

Սրբագրության կարոտ է նաև 40 և 42-րդ տողերում գտնվող «եզնամոլ» բառը, որը գրեթե բոլոր տպագիր բնագրերում բաժանված է երկու մասի՝ «եզն ամոլ» և պետք է միասին գրվի:

Մեր կատարած այս և այլ լրացումներից ու ճշգրտումներից հետո Աս. Մնացականյանի վերականգնած բնագիրն ամբողջանում է և ձեռք է բերում ստորև հրատարակվող կազմը:

ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

1

Փառ՞ք Քրիստոսի ամենազօր յարութեան:

Սայլն այն իջանէր ի լեռնէն ի Մասեաց.
Եւ ի վերայ նորա աթոռք են կարգեալ.
Եւ ի վերայ նորա՝ գահոյք ոսկեղէնք,
Եւ ի վերայ նորա՝ բեհեզք ծիրանիք,
Եւ ի վերայ նորա՝ Որդի արքայի,
Եւ յաջմէ նորա՝ վեցթևեան սերովբէքն,
Յահեկէ նորա՝ բազմաչեայ քերովբէքն,
Առաջի նորա՝ մանկունք գեղեցիկ,
Ի գիրկս նոցա՝ խաչն տէրունական,
Ի ձեռին նոցա՝ սաղմոսարան և քնար,
Որք երգէին զերգս՝ ասելով.
—Փա՞ռք Քրիստոսի ամենազօր յարութեան:

2

Աճեալ են, աճեալ,
Ջսայլիկն աճեալ են, կացուցեալ.
Ի Մասեաց յաջ կողմանէն
Ջսայլիկն աճեալ են, կացուցեալ.
Եւ ահա չշարժէր սայլիկն այն,
Եւ ահա չխաղայր անիւն այն:

Եթէ հարիւր բարդ խոլրձան, վեց կորընկան,
Մին մանուշակ՝ խրձադիզեալ
Ջսայլիկն աճեալ են, կացուցեալ.
Եւ ահա չշարժէր սայլիկն այն,
Եւ ահա չխաղայր անիւն այն:

[34] Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 475:

[35] Գրեստոմատիա, էջ 128:

Եթէ սամիքն են արծաթի, լուծն էր ոսկի,
Եւ սամոտիքն՝ ապրիշիմի,
Փոկեր շարած շարանման հոյլ մարգարիտ,
Եւ խարազան՝ փնջեալ ծաղիկ.
Եւ ահա չշարժէր սայլիկն այն,
Եւ ահա չխաղայր անիւն այն:

Եթէ եզներն են սաթ ու սպիտակ,
Ծաղկախայտուցք, արագաքայլք, ընթացականք,
Եղջերն ամէն՝ խաչանման,
Եւ մազն ամէն՝ հոյլ մարգարիտ.
Եւ ահա չշարժէր սայլիկն այն,
Եւ ահա չխաղայր անիւն այն:

Այն ճորտն ճոճ էր և ճապուկ,
Ուռամիջակ, հաստաբազուկ,
Լայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղագոչ.
Նա ձայն ածէր եզնամոլին,
Կանչիւն առնէր աթոռակին.
Դարձեալ խաղայր եզնամոլքն.
Խաղայր, ցնծայր աթոռակքն.
Եւ ահա շարժէր սայլիկն այն,
Եւ ահա խաղայր անիւն այն:

Ի յառեղէն առեալ շարժումն կուրծն սայլին,
Այսօր անուշահոտ բուրմամբ ընթանայր:
Եւ ահա շարժէր՝ սայլիկն այն,
Եւ ահա խաղայր անիւն այն:

3

Սայլն՝ ի Սինեայ Երկրորդ օրէնքն էր Մովսէսի.
Եւ այն հարիւր բարդ խոլրձանն՝
Այն նահապետքն են՝ մարգարէք.
Եւ այն վեց բարդ կորնկանն՝
Վեցօրեայ գործքն Աստուծոյ.
Եւ այն մին մանուշակ՝
Միաւորեալ Երրորդութիւնն.
Եւ այն մանուկ խարտիշագեղն՝
Այն Յովհաննէսն էր Մկրտիչն.
Եւ այն չորս կուրծն սայլին՝
Աւետարանն էր Քրիստոսի:

4

Ի գիլ գայր, ի գիլ, սայլիկն ի գիլ,
Ի Մասեաց յաջ կողմանէն
Սայլիկն ի գիլ գայր, ի գիլ.
Եւ ճորնչալով գայր, մտանէր յԵրուսաղէմ.
Եւ որդիք նոր Սիովնի ելին ընդառաջ,
Որք երգէին զերգս ասելով.

—Փա՛ռքք Քրիստոսի ամենազօր յարութեան,
Այսօր արձակեցաք ի կապանաց նախնոյ
Եւ վերստին նորգմամբ
Յաւիտենական կենացն եղաք ժառանգորդք:

Փա՛ռքք Քրիստոսի ամենազօր յարութեան:

Ինչպես տեսնում ենք, վերականգնումից հետո բնագիրը բաղկացած է 11 տնից: Սա դրդում է այն գայթակղիչ ենթադրությանը, թե № 2079 ձեռագրում գտնվող և մեզ արդեն ծանոթ «տունք ԼԱ» արտահայտությունը սկզբնապես եղել է «տունք ԺԱ»: Եթե սա իսկապես այսպես լիներ՝ կնշանակեր, որ մեզ հաջողվել է վերականգնել Գրիգոր Նարեկացու նշանավոր ստեղծագործության նախնական, հեղինակային բնագիրը, որն իր ամբողջության մեջ, ինչպես ասվեց, չի պահպանվել ոչ մի ձեռագրում:

Բանաստեղծը շատ հետաքրքիր է կառուցել տաղը: Թվում է, սա չորս գործողություններից բաղկացած մի թատերական երկ է, որի յուրաքանչյուր մաս երգվել է հատուկ արարողությամբ:

Առաջին մասը (13 տող), ինչպես ասվեց, «ինքն իր մեջ մի **ամբողջական երգ է**»[36] և «տակավին միջնադարում էլ կատարվել է որպես **առանձին երգ**»[37]: Այն սկսվում և ավարտվում է «Փա՛ռքք Քրիստոսի ամենազօր յարութեան» տողով: Սա «իր եղանակով սկզբում հնչում է որպես մոնոդիայի **ներածությունը**, իսկ վերջում՝ որպես նրա (կամ հատվածի) եզրափակումը»[38]:

Եթե նույնիսկ տաղը չշարունակվեր էլ, սա մնում է որպես առանձին ավարտուն երգ: Այդ մասին է վկայում նաև այն, որ տաղի շարունակությունը Նարեկացին հորինել է տարբերվող եղանակով: «Դա երևում է և՛ Կոմիտասի ձեռագրերից, և՛ միջնադարյան գրչագրերից, ուր նշված խոսքերի (տաղի շարունակությունն սկսող «Աձեալ են, աձեալ» բառերի—Գ. Ա.) վրա **խազագրությունը փոխվում է**»[39]:

Քննարկվող մասում նկարագրված է այլաբանական սայլի հաղթական ընթացքը: Հաղթանակն արդեն ձեռք է բերված: Արքայի որդին իրեն փառաբանող շքախմբով անկաշկանդ ընթանում է առաջ: Ոչինչ չի խանգարում սայլի ընթացքին: Ամեն ինչ կատարյալ է և առկա են սայլի շարժումն ապահովող բոլոր պայմանները: Սա արքայորդու հաղթանակը փառաբանող արարողության **հանդիսավոր բացումն** է, որի մեջ բանաստեղծը համառոտակի ամփոփել է տաղի **ամբողջ** գաղափարն սկզբից մինչև վերջ:

Սրանից հետո, երկրորդ մասում, Նարեկացին վերադառնում է հաղթանակին նա-

[36] Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 69:
[37] Նույն տեղում, էջ 50:
[38] Նույն տեղում, էջ 51:
[39] Նույն տեղում:

խորդած դեպքերին և շարադրում է իրադարձության մասնավոր նկարագրությունը առանձին-առանձին: Սակայն այստեղ դեռևս չի շարժվում, հաղթանակը ձեռք չի բերված: Ոչինչ չի օգնում գործին, մինչև որ չի միջամտում «ճապուկ ճորտը»: Սրա միջամտությունից հետո սայլն սկսում է շարժվել: Հաղթանակը ձեռք է բերված:

Երրորդ մասում հայտնվում է, որ այլաբանորեն ներկայացված սայլը, նրա վրա բարձված խոտը և սայլապանը Աստվածաշնչում ունեն իրենց որոշակի, ուղիղ իմաստները: Մեկ առ մեկ թվարկվում են այդ իմաստները:

Չորրորդ մասում նկարագրվում է սայլի ընթացքը դեպի Երուսաղեմ, այսինքն՝ ցույց է տրվում արքայի որդու հաղթանակի արձագանքն ու նշանակությունը նոր Սիոնի որդիների համար:

3

Այժմ, երբ տաղը մանրամասն վերլուծված և վերականգնված է, անցնենք Գրիգոր Նարեկացու այլաբանական մտքերի վերծանությանը:

«Տաղ յարութեան» խորագիրը ամենից առաջ դրդում է այն մտքին, թե տաղում պետք է նկարագրված լինի Քրիստոսի հարությունը[40]: Իրականում, սակայն, Նարեկացին տուաղը նվիրել է ոչ թե անմիջապես Քրիստոսի հարության նկարագրությանը, այլ առհասարակ հարության վարդապետության փառաբանությանը:

Քրիստոսի հարությամբ սկիզբ առավ համայն մարդկության հարություն առնելու գաղափարը.

Այսօր արձակեցաք ի կապանաց նախնոյ
Եւ յաւիտենական կենացն եղաք ժառանգորդք:

Հին Կտակարանում, չնչին բացառությամբ (Յոբ, ԺԹ, 26, Սաղմոս, Խ/Թ, 15, Եսայի, ԻԶ 19, Դանիէլ, ԺԲ, 2, 13), մարդու կյանքը վերջանում էր մահով: Իսկ Քրիստոսի հարությունից հետո, ըստ Նոր Կտակարանի, մարդկությունն ազատվում է «նախնոյ» այդ կապանքներից, ինչպես նաև մեղքերից և դառնում է ազատ, հավիտենական կյանքին ժառանգորդ: Բարեգործները հարություն են առնում ապրելու, իսկ չարագործները՝ դատվելու համար.

Որոց զբարիս գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց,
Եւ որոց զչար արարեալ իցէ՝ ի յարութիւն դատաստանաց (Յովհ. Ե, 29):

Գրիգոր Նարեկացին, որ ամբողջ կյանքն անցել էր մաքրակենցաղ վարքով և հոգին գիտակցաբար մաքրել էր իր ինքնասնեղծ քավարանում («Ողբերգության մատյանում»), որ հետագայում ժողովրդի աչքում ինքն էր հարություն տալու մարդկանց, աղավնիներին ու հավի ձագերին և ինքն էր կոչվելու «Մեռել հարուցող սուրբ Նարեկացի», չէր կարող չզգալ սեփական մեծությունը և այդ մեծության հավիտենականության պահանջը: «Թէպէտ վախճան ընկալայց իբր զմահացու, այլ՝ յարակայութեամբ բանի այսր սոփերի՝ գրեցայց կենդանի» (բան ՁԸ): «Անձամբ մեռելոյս՝ կենդանական շունչ ընծայեցո՝ յարութիւն, կեանք, անմահութիւն» (ԽԲ): «Իցէ թէ կենդանի լինիս ոսկերքս» (ԻԵ):

Բանաստեղծը «Ողբերգության մատյանում» հարության գաղափարին է դիմում

[40] Մի գրախոսականում (Բ. Ալեքսաբյան, Հայ միջնադարյան քնարերգության նոր հատընտիրը, «Գրական թերթ», 1973, № 33, օգոստոսի 10, էջ 2) հայտնվում է, թե տաղում «նկարագրվելու է Քրիստոսի հարությունը և նրա հայտնվելը, որ ըստ ավանդության կատարվել է երկնային կառքի վրա»: Սակայն այստեղ երկրային սայլը շփոթված է երկնային կառքի հետ: Գրիգոր Նարեկացին նկարագրել է, ինչպես գիտենք, եզներով լծված և խոտով բեռնված մի սայլ, որն ընթանում է երկրի վրա և կրում է Քրիստոսի հարության գործությունը փառաբանող երկրաբնակ մարդկանց մի ամբողջ շքախումբ: Սա ո՛չ մի կապ չունի գրախոսականում շփոթված «երկնային կառքի» հետ, որն ավանդություններում պատկերվում է բոլորովին այլ պարագաներում:

Գրախոսականում ճիշտ չի ներկայացված նաև Վ. Բրյուսովի թարգմանությունը: Նարեկացուն նվիրված ուսումնասիրության ռուսերեն թարգմանության մեջ Մ. Մկրյանը գործածել է «холоп» («ճորտ») բառը: Բ. Ալեքսաբյանը կարծելով, թե սա Վ. Բրյուսովի գործածած բառն է, լուրջ մեղադրանք է բարդել տաղի ռուսերեն թարգմանության վրա: Նա գրում է. «Եվ ահա տաղի պատանի հերոսը Բրյուսովի թարգմանության մեջ դարձել է холоп»: Այսպես կարծելով՝ նա հորդորում է՝ պատրաստ լինել հետագայում, «որպեսզի ընագրի պատանի սուրբ Հովհաննես Մկրտիչը թարգմանության մեջ չդառնա հասարակ ու ճորտ գեղջուկ»: Այս մեղադրանքը իրականում Բրյուսովին ամենևին չի վերաբերում, որովհետև նրա թարգմանության մեջ գործածված է ոչ թե «холоп», այլ՝ «воевода» («կառապան») բառը, որը զարմանալի դիպուկությամբ համընկնում է Հովհաննես Մկրտչի մյուս մականվան (Կարապետ) մատենագրական ստուգաբանություններին (կառապետ, կառավար):

Նշված գրախոսականում անտեղի դիտողություններ են արված նաև Վ. Բրյուսովի և Ն. Գրեբենի թարգմանությունների համար հիմք ծառայած տողացի թարգմանությունների հեղինակների հասցեին:

նաև բազմաթիվ այլ տեղերում[41], այդ գաղափարի մեջ է տեսնում իր և մյուսների անմահության հնարավորությունը, դրա համար էլ փառաբանում է այդ հնարավորության աղբյուրը.

«Փա՛ռքը Քրիստոսի ամենազոր յարութեան»:

Նարեկացին ապրում էր մի այնպիսի ժամանակ, երբ իշխում էր եկեղեցու նշանավոր հայրեր Իրինեոս Լիոնացու, Կղեմես Աղեքսանդրացու, Աթանաս Աղեքսանդրացու, Գրիգոր Աստվածաբանի, Գրիգոր Նյուսացու և այլոց քարոզած «աստվածայնացման» (Ѳեѡсις) գաղափարն այն մասին, որ «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա»[42]: «Սկսած չորրորդ դարից, աստվածայնացման (обожение) գաղափարը հանդիսացել է քրիստոնեական Արևելքի կրոնական կյանքի բուն կորիզը, որի շուրջն են պտտվել դավանաբանության, բարոյագիտության և միստիկայի բոլոր հարցերը»[43]: «Մենք բոլորս միանալով նրա մարմնին, դառնում ենք մի մարմին, ունենալով մեր մեջ միակ Տիրոջը»[44]: Աթանաս Աղեքսանդրացու սույն մտքին Գրիգոր Նարեկացին արձագանքում է իր ձևով.

Ի՛ Քեզ, Տէր, անկայց՝
Միացեալ իսպառ, անբաժանելի...
(բան ՁԵ)

Աստվածայնանալով՝ մարդը ձեռք է բերում Քրիստոսին հատուկ շնորհներ, անմահանում է: «Առանց հավատալու մահվան ու դժոխքի հաղթողի՝ Քրիստոսի հարությանը, քրիստոնեությունը դառնում է անմտություն և խաբեություն... Քրիստոսի հարությունը սկիզբն է մեռյալների համընդհանուր հարության[45], «Քանզի եթէ մեռեալք ոչ յառնէն, ապա և Քրիստոս չէ յարուցեալ» (Ա կորնթ., ԺԵ, 16)[46]: «Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ՝ ընդունայն են հաւատքն ձեր և տակաւին ի նմին ի մեղս կայցեք» (17):

Այսպես է մտածել ամբողջ միջնադարում հավայն քրիստոնեական աշխարհը և այդպես է մտածել բնականաբար նաև Նարեկացին:

Հայ հանճարը հարության գաղափարը կիրառել է նաև սեփական հայրենիքի կապակցությամբ: Այդ գաղափարի մեջ նա տեսել է ամենից առաջ ի՛ր «հայրենիքի ապագա հույսը, նրա հարությունը»[47]: Հայրենիքն է պատճառը, որ սայլն ընթանում է ոչ թե աստվածաշնչային Սինայով[48], այլ իջնում է «ի լեռնէն ի Մասեաց»:

Քրիստոսին կրող սայլի վրա բարձած խոտերից և ոչ մեկը Աստվածաշնչում հիշատակված չէ: Դրանք են կորեկ, խոլորձ, մանուշակ[49]: Սրանք բոլորը քաղված են հայկական դաշտերից: Սայլը իր բոլոր մանրամասնություններով ներկայացնում է հայ գեղջուկի բառապաշարը. սայլիկ, անիվ, սամի, լուծ, սամոտի, փոկ, խարազան, առեղ, կուրծ սայլի: Սայլը քաշող եզներն են եզնամոլը, աթոռակը: «Կը տեսնա՞ս Ոշտունցի հոտաղ եզնավարին սրբազնացեալ երգն. ընտիր նկարագիր սայլին որայից խրձաբարձ»[50]:

Հին Կտակարանում օրենքը տրվել է Սինա լեռան վրա, Նոր Կտակարանում Քրիստոսի շնորհաց օրենքն ստացվել է «ի լեռն Սիոն»[51], «Երկրորդ Ավետարանի» կամ

---

[41] «Որ սերմանեա զարտաշնչացեալ մարմնոս յերկրի, եւ զնոյն անկորուստ պահեալ կրկին կենդանացնոս» (ԿԳ): «Կենդանածնին մահացեալք» (ԽԱ): «Ընդ մարմնոյ մահուան՝ զամենայնի նորոգութիւնդ» (ԵԳ): «Այլ զնոյն ինքն տեսանել» (ԺԲ): «Ի՛ Քեզ միանալ անբաժանելի» (ԻԴ): Եվ այլն:

[42] Հմմտ. Проф. К. Скурат, Завершение спасения человека—обожение («Журнал Московской патриархии»=ЖМП, 1973, № 5, էջ 61).

[43] И. В. Попов, Идея обожения Древне-Восточной церкви, Москва 1909, էջ 51:

[44] Проф. К. Скурат, նշվ. աշխ., էջ 62:

[45] «Կենարարին սորբ յարութեամբրն տիեզերք նորոգեցան, ման մանու յաղթեաց և Ադամ կենդանացաւ» («Մեղեդի յարութեան տեառն»: Տես Ա. Զոլանյան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 2—8):

[46] Василий, архиеп. Брюссельской и Бельгийский, Спасительное дело Христа на кресте и в Воскресении.—ЖМП, Москва, 1973, № 2, էջ 67:

[47] Ա. Մխիթարյան, նշվ. աշխ., էջ 27:

[48] Մ. Արեղյանը գրում է. «Այստեղ տեսնում ենք Մասիսից (Սինայից) իջնող մի արքայական սայլ» (Հայոց հին գրականության պատմություն, 1944, էջ 580):

[49] Մանուշակն այստեղ խորհրդանշում է Քրիստոսին որպես գարնան ծաղիկ, որովհետև հարությունն այլ բան չէ, քան ամեն անգամ նորոգվող գարուն: Հմմտ. «Աստուածային և անարատ գարունն Քրիստոս զեկեղեցի մանուշակաբ և վարդաբ և շուշանաբ հոգևորաբ զարդարեաց» (Տես Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, «մանուշակ» բառի բացատրությունը):

[50] Գ. վ. Սրվանձտյան, Մանանա, Կ. Պոլիս, 1876, էջ 242:

[51] Հին «Օրէնքն տուաւ ի յԱրաբիա, ի լեառն Սինայ» իսկ նոր «Օրէնքն շնորհաց Քրիստոսին տուաւ ի լեառն Սիոն... Առաջին օրէնքն էր կենդանասպան... իսկ նորս՝ ...պահողաց՝ զյաւիտենական կեանս» (Մեկնութիւն աղօթից... Յակոբայ... էջ 750):

«Համառոտ Աստվածաշնչի»[52] հեղինակն էլ Մասիսի անվան հետ է կապել համայն մարդկության հարության սկիզբը: Ինչպես որ հեթանոսական տաճարի տեղում կառուցվել է քրիստոնեական տաճարն Էջմիածնում, այդպես էլ Նարեկացին Հին Կտակարանի Նոյան տապանը կրող լեռան վրա է տեսել նաև Նոր Կտակարանի ամենահիմնական վարդապետության արարչագործությունը: «Այլ որպէս աւուրքն Նոյի՝ նոյնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդւոյ» (Մատթ., ԻԴ 37):

Քրիստոսի ծննդից առաջ մարդկությունը փրկվել էր Մասիսի վրա, Քրիստոսի ծննդից հետո էլ փրկության լեռը Մասիսն է: Բանաստեղծի պատկերմամբ՝ Քրիստոսի հարությունը փառաբանող շքախմբի հանդիսավոր երթն սկսվում է Մասիսի աջ կողմից և գնում-հասնում է Երուսաղեմ՝ ազդարարելով մարդկության հարությունն ու ազատությունը:

Ի Մասեաց յաջ կողմանէն
Սայլիկն ի գիլ գայր, ի գիլ
Եւ ճոնչալով գայր մտանէր յԵրուսաղեմ[53]:
Եւ որդիք նոր Սիովնի ելին ընդառաջ,
Որք երգէին զերգս ասելով...
Այսօր արձակեցաք ի կապանաց նախնոյ...
Յաւիտենական կենացն եղաք ժառանգորդք:

Իսկ ինչո՞ւ է սայլն իր շարժումն սկսել Մասիսի հատկապես աջ կողմից: Արդյոք այն պատճառով, որ աջը առհասարակ հարգված կողմ է (Քրիստոսը բազմել է Աստծո աջ կողմում), թե՞ կա նաև ուրիշ պատճառ:

Մեր կարծիքով՝ Նարեկացին շարժման սկզբնակետ է ընտրել Էջմիածինը, որը նա տեղադրել է Մասսի աջ կողմում, դիտարան ունենալով հենց Էջմիածինը: Նա որոշակի ասում է, որ սայլիկը բերել են Մասիսի աջ կողմից, կնշանակի մինչև Մասիս հասնելը՝ սայլը բերվել է նրա աջ կողմում գտնված մի վայրից: Իսկ այդ վայրը Էջմիածինն է, որովհետև դարեր առաջ հենց այդտեղ էր իջել Միածինը և ցույց տվել այն տեղը, որը հետագայում պետք է կոչվեր Երկրորդ Սինա.

Էջմիածին. երկրորդ Սինայ,
Յորում իջեալ անմահ արքայ,
Անդ Մովսէսի տեսեալ ըզնա,
Եւ աստ Գրիգոր, այլ գերակայ:
Էջմիածին, պայծառ խորան,
Քան ըզնախնոյն վրկայութեան.
Անդ էր Օրէնք փոփոխական,
Եւ ի քեզ՝ նոր ճշմարտութեան[54]...

Սույն տաղում ակնհայտ է Էջմիածնի գերիշխանության քարոզը: Էջմիածնում Քրիստոսին տեսած Գրիգոր Լուսավորիչն ավելի գերակա է, քան Սինայի վրա Աստծուն տեսած Մովսեսը: Սինայի վրա Աստված Մովսեսին տվեց փոփոխական օրենք, իսկ Էջմիածնում Քրիստոսը տվել է նոր ճշմարտության, այսինքն Նոր Կտակարանի հաստատուն օրենքը: Մյուս եկեղեցիների հետ մրցման որոշակի ձգտում դրսևորող այս տաղը հավանաբար գրված է «Հարության տաղի» այն ընդօրինակությունների ազդեցությամբ, որոնք ձեռագրերում կրել են «Սուրբ Էջմիածնայ տաղ» խորագիրը: Եվ եթե «Հարության տաղը» երբևէ կոչվել է «Էջմիածնի տաղ», կնշանակի Մասիսի աջ կողմում կատարվող գործողությունն իսկապես իր մեջ ունի այնպիսի նշաններ, որոնք գրիչներին նույնպես դրդել են գործողության վայրը նույնացնելու Էջմիածնի հետ:

«Հարության տաղի» առանցքն, ինչպես ասվեց, սայլն է՝ շարժվող ու չշարժվող վիճակում: Թվում է, ոչ մի այլ եղանակով հնարավոր չէր պատկերացնել Հին ու Նոր Կտակարանների նախահարութենական ու հարութենական շրջանները այնքան հաջող, որքան պատկերված են սայլի և նրա դադարի ու շարժման միջոցով: Առհասարակ սայլը, որպես տաղում այլաբանորեն արտահայտված բազմախորհուրդ մտքերը կրող ամենահարմար միջոց, մեզ ներկայանում է ստեղծագործական մտահղացման կատարելության տեսքով: Բանաստեղծը զարմանալի դիպուկությամբ՝ Կտակարանների կազմը հարմարեցրել է սայլի կազմին և սայլի շարժման մանրամասնությունների (դադար և սայլապանի միջամտությամբ կրկին շարժում) միջոցով պատկերել է հարության գաղափարի տարածման մանրամասնությունները:

Գրիգոր Նարեկացու պատկերացմամբ՝ առանց հավետ ապրող Քրիստոսի գոյություն չունի ո՛չ կենդանություն, ո՛չ շարժողություն, ո՛չ էլ ընթացություն.

---

[52] Նույն տեղում, էջ 5: Այստեղ Նարեկացու «Ողբերգության մատյանը» կոչված է «Երկրորդ ավետարան» «Համառոտ Աստվածաշնչ»:

[53] «Պահողացն Հնոյ օրինաց խոստացեալ եղն ստորինն Երուսաղեմ, և նորոյս օրինաց պահողաց՝ վերինն Երուսաղեմ. ըստ այնմ՝ Ոչ էք մատուցեալ առ լեառն շոշափելի և այլն, այլ մատուցեալ եք ի Սիոն լեառն յԵրուսաղեմ յերկինս» (նույն տեղում, էջ 750): Հմմտ.՝ նաև Գ. Ավետիքյանցի մեկնությունը (Նարեկ աղոթից, էջ 411—412):

[54] Ն. Զոպանյան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 2—8 (—Առաքել Սյունեցի, հրատ. Հ. Մ. Պոտուրյան, Վենետիկ, 1914, էջ 268):

Այլ իբր զկենդանութիւն իսկապէս.
...Առանց որոյ ոչ է շարժողութիւն կամ ընթացութիւն... (բան ԺԲ):

Ահա այս շարժողությունն ու ընթացությունն է Նարեկացին այլաբանորեն ներդրել սայլի շարժման ու ընթացքի մեջ: Սայլն սկզբում չի շարժվում, որովհետև հարություն ավետող Նոր Կտակարանը դեռ իր ուժը ցույց չի տվել և սայլը դեռևս գտնվում է Հին Կտակարանի կապանքների մեջ.

Սայլն՝ ի Սինեայ երկրորդ օրէնքն էր Մովսէսի
Եւ այն հարիւր բարդ խոլրծանն՝
Այն նահապետքն են՝ մարգարէք.
Եւ այն վեց բարդ կորրնկանն՝
Վեցօրեայ գործքն Աստուծոյ...

Ինչպես տեսնում ենք, սայլն իրենից ներկայացնում է Հին Կտակարանի մասերը և հիմնականում՝ Մովսեսի երկրորդ օրենքը: Նարեկացու վերաբերմունքն այդ օրենքի նկատմամբ բացասական է[55]: «Ողբերգության մատյանում» բանաստեղծն այդ օրենքը կոչում է «ջնջելի գիր», «խափանելի կրտակ» (Բան ԾԱ), «լուծ» (ԾԳ), «պատժող» (ԾԳ), «տկար օրենք» (ԺԴ) և այլն: Նա բացարձակ հայտարարում է, որ դա կենդանությունն սպառող, հետևաբար և շարժումը դադարեցնող օրենք է. «Ոչ թէ զարձան Մովսիսագիր, քերեալ ի քարանց կարծրանիւթ վիմաց, կենդանասպառ օրինի աղախնուն Հագարու, ստրկածինն Սինայի արտագծեալ»[56]:

Ավետարանի հետ համեմատելիս նա Երկրորդ օրենքին հատկացնում է «մարմնոյ մահ», որը դարձյալ նշանակում է շարժման դադար, իսկ Ավետարանին՝ «նորոգութիւն». «ընդ մարմնոյ մահուան զամենայնիս նորոգութիւնդ» (ԾԳ):

«Բոլոր սուրբ Գրոց կեանք և հոգի և գեղեցկութիւն և գլխաւորիչ անդամոց՝ Սուրբ Աւետարանն է: Ուստի և սուրբն Պօղոս Գիր կոչէ զօրէնսն և հոգի զԱւետարանն: Գիրն սպանանէ (ասէ), այլ՝ հոգին կացուցանէ»[57]:

Այսպիսով՝ սայլի վրա գտնվող Մովսիսական օրենքը պակասավոր է, կաշկանդող, շարժումն սպանանող: Որպեսզի շարժումը վերստին հարություն առնի՝ պետք է այդ օրենքի թերությունները վերացվեն, օրենքը լրացվի: Եվ լրացնողը Քրիստոսն է. «Դու սկիզբն և լրումն ամենայնի» (Բան ԽԳ), «Այսօր եղև լրումն օրինացն» («Տաղ յայտնութեան»), «Ի ծագել անստուեր ճշուլից ողորմութեան Քոյ փառաց... խզին կապանք, խորտակին շղթայք» (Բան ԽԱ)... Շղթաները խորտակվում են, կապանքները խզվում են և շարժումը վերստին ընթանում է:

Առանց Քրիստոսի՝ լիակատար չէ նույնիսկ Աստուծո վեցօրյա արարչագործությունը («վեցօրեայ գործքն Աստուծոյ»), որը նույնպես այլաբանորեն գտնվում է սայլի վրա: Քրիստոսը գալիս է լրացնելու նաև այս առաջնաստեղծ և նախակարգ հորինվածքը. «Որ յետ նախակարգ յորինուածոյն առաջնաստեղծ լինելիութեանն, արարեր զփառաւորեալսն մեծամեծս հրաշակերտիցն հանդիսից...» (Բան ԿԳ):

Իսկ ինչո՞ւ է սայլը շարժվում հատկապես Հովհաննես Մկրտիչի միջամտությամբ: Այս գաղտնիքի բանալին գտնվում է դարձյալ Նարեկացու մյուս ստեղծագործություններում: Միշտ այնպես, ինչպես որ շարականների մեծ մասը հանդիսանալով ս. Գրքի հարաստությունը՝ հասկանալի է դառնում այդ գրքի միջոցով, այդպես էլ «Հարության տաղը» վերծանվում է Նարեկացու մյուս ստեղծագործությունների օժանդակությամբ:

Առաջինը մեզ օգնում է հենց Հովհաննես Մկրտչին նվիրված գանձը, որը Մաշտոցի անվան Մատենադարանի № 7785 ձեռագրում (էջ 241բ—242ա) կրում է «Քարոզ Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ ի սուրբ Յովհաննէս Մկրտիչն»[58]: Այստեղ Հովհաննես Մկրտիչը կոչված է «Աւարտ և կէտ դադարման ըստուէրին և ճշմարտութեան նորոյս ըսկիզբն և առաջնորդ... Եւ յառաջընթաց կարապետ գործողին ըզփրկութիւն տիեզերաց»: Սա. կարծես թե գրված է հատկապես «Հարության տաղը» վերծանելու համար: Տաղի մեջ նկարագրված է սայլի, այսինքն՝ Երկրորդ օրինաց, դադարը, իսկ գանձում Հովհաննես Մկրտիչը կոչված է «Աւարտ և կէտ դադարման ըստուէրին»:

Ստվերը Նարեկացու ըմբռնմամբ մահն է, որը նախատեսվում էր «կենդանասպան» Երկրորդ օրենքով[59]: Հետևաբար՝

[55] Նոր Կտակարանում նույնպես որոշ ակնարկներ կան Երկրորդ օրենքի անկատարության մասին (Գաղ. Գ. 19, 25, Գ. 24—26, ԺԲ. 28—29, Հռովմ., Զ. 14—15, Է. 4, 6):

[56] Գրիգոր Նարեկացի, երկրորդ մատեան ճառից, Վենետիկ, 1827, էջ 99 և 55: Հմմտ. նաև՝ Մեկնութիւն աղօթից և ներբողեանց սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ... շարադրեալ և մեկնեալ... Յակոբայ արքեպ. և պատրիարքէ Կոստանդնու Պօլսոյ, Կ. Պոլիս, 1745, էջ 750:

[57] Մեկնութիւն աղօթից... Յակոբայ Կոստանդնուպոլսոյ, էջ 567:

[58] Հմմտ. Ա. Քյոշկերյան, Գրիգոր Նարեկացու գանձերն ու գանձարանների սկզբնավորումը.— «Բանբեր Մատենադարանի», № 10, էջ 69:

[59] «Զիա՞րդ Հին օրէնքն տուան... Ի լերինն Սինայի, յորժամ ծուխն ցոլանայր... և պատէր զլերամբն...,

եթե բանաստեղծը Հովհաննեսին գանձում կոչում է ստվերի դադարման կետ և ստվերի ավարտ՝ կնշանակի «Հարության տաղում» նույնպես Հովհաննեսը պետք է հանդես գար որպես սայլի (Երկրորդ օրենքի) դադարի ավարտ և նոր շարժման սկիզբ և առաջնորդ. «Ասարտ և կէտ դադարման ըստուերին և ճշմարտութեան նորոյս ըսկիզբըն և առաջնորդ»:

Այս առաջնորդը գանձում բացահայտ կոչված է Քրիստոսի առջևից ընթացող. «Յառաջընթաց»: Ուրեմն՝ առանց Հովհաննեսի առաջնորդության իսկապես սայլը չէր կարող շարժվել: Հովհաննեսը միաժամանակ կոչված է «Կարապետ» («կարապետել եկն և յառաջագոյն ճանապարհ հորդել»[60]): Սույն բառը ձեռագրերում և ապա տպագիր բառարաններում ստուգաբանվում է «կարապետ» կամ «կարավանապետ» բառով, այսինքն մատնանշում է սայլապանի հենց այն դերը, որն ունի Հովհաննես Մկրտիչը «Հարության տաղում»:

Միևնույն դերն է նշված նաև Ներսես Շնորհալու «Յովհաննու Կարապետին» տաղում, որի մեջ նույնպես Հովհաննես Մկրտիչը կոչված է Հին Կտակարանի (Մարգարեների) դադարի պահին անապատում ձայնող և ճանապարհ հորդող առաջընթաց ավետավոր: Այս տաղում նույնպես Հովհաննես Մկրտիչը Հին Կտակարանի լրացման և Նոր Կտակարանի սկսման կետն է:

Երկնաւորին ճանապարհի
Յառաջընթաց աւետաւոր:
...Ձայն բարբառոյ յանապատէ
Ի դադարել Մարգարէիցն:
...Շնորհաց նորոյս ի քէն սկսեալ,
Հին օրինաց քեզ կատարեալ[61]:

Հովհաննես Մկրտչի կերպարը կերտելիս Նարեկացուն հիմք է ծառայել Ավետարանը, որի մեջ Հովհաննես Մկրտչի մասին ասված է. «Երթիցես առաջի երեսաց Տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա» (Ղուկաս Ա 76): «Որպէս և գրեալ է ի գիրս պատգամաց Եսայեայ Մարգարէի. Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհ Տեառն եւ ուղիղ արարէք զշաւիղ նորա: Ամենայն ձորք լցցին, և ամենայն լերինք և ուուրք խոնարհեսցին, եւ եղիցին դժուարինքն ի դիւրինս, եւ առապարքն ի հարթ ճանապարհս, եւ տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ» (Ղուկասի, Գ, 4—6):

Ահա. ճանապարհն այսպես հարթող և սայլի շարժումը հնարավոր դարձնող Հովհաննեսին է նկատի ունեցել Նարեկացին:

Ավետարանի «Ձայն բարբառոյ յանապատի» արտահայտության հիման վրա Նարեկացին իր վերոհիշյալ գանձը կոչել է «Ի Ձայնն երգ» (այսպես են հոդում գանձի ծայրակապերը): «Հայտնության տաղում» նա գրում է.

Աւետիս քեզ կարապետ,
Ձայն բարբառոյ յանապատէ[62]:

«Հարության տաղում» նույնպես «նա ձայն ածէր եզնամոլին»[63] արտահայտությամբ նշել է Հովհաննեսի ավետարանային պաշտոնը՝ ձայն տալ Քրիստոսի վաստակակիցներին՝ հարթելու Քրիստոսի ճանապարհը և քարոզելու Քրիստոսի Ավետարանը: Միևնույն միտքը գտնում ենք նաև «Գանձ ի սուրբ եկեղեցի» երկում, որտեղ Հովհաննեսը կոչված է «Կարապետ **կոչման** սրբոց»[64], որը Հ. Գ. Ավետիքյանի մեկնաբանմամբ նշանակում է «յառաջընթաց առ ի կոչել զսուրբսն կամ զընտրեալսն»[65]. «Հայտնության տաղում» նույնպես Հովհաննեսը կոչված է «**Կոչնատէր**»: «Աւետեաց եմ **կոչնատէրս**, մի հրաժարիք ի հարսանեացս»[66]:

Միայն վերոհիշյալ պատճառներով չէ, որ Նարեկացին սայլը շարժող ուժ է ընտրել

Մովսէսն ի մէգն և ի հոտն մտանէր: Իսկ Նոր Կտակարանքս՝ ոչինչ այսպիսի. ո՛չ յանապատի, ո՛չ ի լերինն, ո՛չ ի ծուխ... այլ ի սկսանել և յերևել տուընջեան ամենեցուն, որ ի ստուերս մահու նստէին» (Յովհաննու Ոսկեբերանի «Յաւետարանագիրն Մատթէոս, Վենետիկ, 1828, Գիրք Ա, ճառ Ա, էջ 2):

[60] Հովհ. Ոսկեբերան, նշվ. աշխ., էջ 144:

[61] Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 485—487:

[62] Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 467:

[63] «Եզնամոլ» բառը Նոր Հայկազյան բառարանում բացատրված է այսպես. «Որպէս ամոլք եզանց, ամոլակիցք, ազգինքն՝ վաստակակիցք, զորօրինակ Պետրոս և Պողոս»: (Արդյո՞ք Նարեկացին նույնպես այս զույգին է նկատի ունեցել...): Բառարանը Հակոբ Մեղեցացուց և Մարուքեից վկայակոչել է հետևյալ արտահայտությունը. «երկու եզնամոլիցն լծեալ ի լուծ խաչին Քրիստոսի»: Սա հիշեցնում է տաղի «եզնամոլին»:

[64] Գրիգոր Նարեկացի, Երկրորդ մատեան ճառից, Վենետիկ, 1827, էջ 241: Այստեղ Նարեկացին Հովհաննեսին կոչում է նաև «շառաւիղ անմահից կենաց», այսինքն՝ անմահ կյանքի (Քրիստոսի հարությամբ միշտ նորոգվող կյանքի) շառավիղը հարթող: Սա արձագանքն է Ավետարանի «ուղիղ արարէք զշաւիղ նորա» արտահայտության:

[65] Նույն տեղում, էջ 247:

[66] Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 467:

Հովհաննես Մկրտչին: Տեսանք, որ սայլի շարժումը կաշկանդող հիմնական խոչընդոտը Երկրորդ օրենքն էր, որը խորհրդանշում է չշարժվող սայլին: Ուրեմն՝ սայլը կարող էր շարժվել միայն այն ժամանակ, երբ, ինչպես ասել ենք, վերանային այդ օրենքի պակասները, այսինքն՝ երբ օրենքը լրանար:

Դա կատարվում է Քրիստոսի մկրտությունից հետո. «Զի յետ մկրտութեան էր լուծանելոյ զօրէնսն»[67]: Իսկ Քրիստոսին մկրտողը հենց Հավհաննես Մկրտիչն էր.

Աւետիս մարգարէիցն, այսօր եղև լրումն օրինացն...
Աւետիս քեզ, Յորդանան, Քրիստոս ի քեզ գայ մկրտիլ...
Աւետիս ինձ, Յովհաննու, ձեռն իմ զՏէրն մկրտէ...[68]:

Ահա թե ինչու սայլի շարժման կետ է ընտրված հատկապես այն պահը, երբ գործողությանը միջամտում է Հովհաննես Մկրտիչը: «Փրկիչն մեր և տէրն մեր Յիսուս Քրիստոս օծեալ Աստուծոյ սկսաւ լինել ամաց իբրև երեսնից. և եկն նա ի մկրտութիւն անդր Յովհաննու: Եւ յայն ժամանակէ հետէ սկիզբն արար նա ի քարոզութիւն աւետարանին»[69]: Այսպիսով՝ սայլի շարժման սկիզբը համընկնում է Ավետարանի քարոզության սկզբին: Իսկ սա երկու դեպքում էլ տեղի է ունենում Հովհաննես Մկրտչի միջամտությամբ:

«Ի յառեղէն առեալ շարժումն կուրծն սայլին»[70]—գրում է Նարեկացին և քիչ հետո բացատրում է, որ «Կուրծն սայլին Աւետարանն էր Քրիստոսի»: Ուրեմն՝ սայլի շարժումն ու Ավետարանի քարոզությունը «Հարության տաղում» ամբողջովին նույնանում են: Սայլը չէր շարժվում, որովհետև, ինչպես ասվեց, Ավետարանի քարոզությունը չէր սկսվել և սայլը դեռևս մարմնավորում էր Հին Կտակարանի Մովսիսական օրենքը: Բավական էր, որ Հովհաննես Մկրտիչը մկրտեր Քրիստոսին և ճանապարհ հարթեր նրա քարոզի համար՝ սայլն սկսում է շարժվել:

Հովհաննես Մկրտչին «Հարության տաղում» հատկացված արտակարգ դերը անշուշտ բխում է նաև ժողովրդի մեջ Հովհաննես Մկրտչի գործության մասին գոյություն ունեցած պատկերացումից: Ժողովուրդը, ինչպես Նարեկացու ապրած օրերին, այնպես էլ նրանից առաջ և հետո արտակարգ մեծ գործություն է վերագրել Հովհաննես Մկրտչին: Մինչև վերջերս էլ բնիկ հայը ամենադժվար պահերին օգնության էր կանչում ամենից առաջ «Մշո Սուլթան սուրբ Կարապետին»:

Այս անունը կրող վանքն այցելելով, ի դեպ, 19-րդ դարի գերմանացի ճանապարհորդ Կ. Կոխը հայտնում է, որ «Հովհաննես Մկրտչի վանքը կրում է իր սրբի յոթ անունները... բայց ամենից հաճախ կոչվում է սուրբ առաջընթացի՝ սուրբ Կարապետի վանք»[71]: Ինչպես տեսնում ենք, ժողովուրդը Հովհաննես Մկրտչի յոթ պաշտոնների մեջ տեսել է ամենից առաջ Քրիստոսի ճանապարհը բացող Կարապետին, որին Նարեկացին ինքը «Հայտնության տաղում» կոչում է «Մեծ Կարապետ»: Ուրեմն՝ բոլորովին էլ պատահական չէ, որ «Հարության տաղում» հենց Հովհաննես Մկրտիչն է մարմնավորում այն զորավոր ուժը, որին էր վիճակված սայլը տեղից շարժելը, այսինքն՝ մարդկության հարությունն ավետող Ավետարանի քարոզության համար ճանապարհ հարթելը, հարության խորհրդանիշ Քրիստոսին իր համաքրիստոնեական երթի մեջ առաջնորդելը:

* * *

Այսպիսով բացահայտվեց Գրիգոր Նարեկացու տաղերից ամենաիմաստունի այլաբանական իմաստը: Պատասխան ստացան այն հարցերը, «թե ինչ կապ ունի այդ տաղը

---

[67] Հովհ. Ոսկեբերան, Նշվ. աշխ., էջ 189: Այստեղ հայտնվում է, որ Քրիստոսը մկրտության համար սպասեց «մինչև կատարեսցի հասակաւ (դառնա 30 տարեկան—Գ. Ա.), որով զամենայն իրս մեղաց ընդունել կարէր, կայր մնայր կատարել զամենայն օրէնսն: Զի մի ոք ասիցէ, թէ վասն զի չէր կարող կատարել՝ յայն սակս ելոյծ»:

[68] Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 407:

[69] Եղիսեիոս Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ, Վենետիկ, 1877, էջ 51—52:

[70] Սայլի կուրծ են կոչվում անիվների շրջագծերի կենտրոններում գտնվող այն գոգավոր կիսագնդերը, որոնք շրջապատում են իրենց (կիսագնդերի) մեջ՝ սայլի առանցքի համար բացված անցքերը: Երբ սայլը շարժվում է՝ սկսում են շարժվել (անիվների հետ միասին) նաև կիսագնդերը: Ուրեմն՝ սայլի և կիսագնդերի (սայլի կուրծի) շարժումն սկսվում են միասին, իսկ այլաբանորեն սա նշանակում է, որ սայլի շարժումը և Ավետարանի քարոզն սկսվում են միասին:

[71] K. Koch, Reise im pontischen Gebirge und türkischen Armenien, Weimar, 1846, էջ 388: Այստեղ գիտնականը վանքի յոթ անուններից մեկը նշել է „Makkare" ձևով և կողքին դրել է հարցական, չիմանալով այդ բառի նշանակությունը: Կասկած չկա, որ դա հայերեն «մարգարե» բառի աղճատումն է: Հեղինակը վանքում եղած ժամանակ լսել է „makkare" իսկ հետագայում մոռանալով բառի իմաստը, վրիպակաբար տպագրել է „makkare" (նախնական r-ն կարդացել է k):

իբրև աղաչանություն՝ Քրիստոսի հարության հետ», «թե Նարեկացին ինչ է նկատի ունեցել, երբ նշել է, որ սայլը տեղից շարժել կարող է միայն սայլապանը», թե «նախնու» (Մովսիսական երկրորդ օրենքի) ինչ կապանքներ էին խոչընդոտում սայլի շարժմանը, ի՞նչ է խորհրդանշում սայլի անխափան շարժումը (հարատև ծնվող ու վերածնվող, հարություն առնող կյանքը), ինչո՞ւ սայլը իջնում է Մասիսից և ոչ, ասենք, աստվածաշնչային Սինայից կամ Սիոնից և այլն:

Վերականգնեցինք տաղը ամբողջացնող տողերը: Մեկնաբանվեցին և սրբագրվեցին սխալ թարգմանության և մեկնաբանության առիթ տված տեղերը:

Գրիգոր Նարեկացին այն մեծություններից է, որի ոչ մի միտք չպետք է անծանոթ մնա: Յուրաքանչյուր չվերծանված միտք կորուստ է: Բանասիրությունն ու գրականագիտությունը մեծ գործ ունեն բանաստեղծի ստեղծագործության վերծանման բնագավառում: Բավականաչափ շատ գնահատականների կողքին պակասում են մասնակի հետազոտությունները: Տեղին մեծարանքներն ավելի ամուր հիմքի վրա խարսխված կլինեն, եթե գրականագիտական ընդհանուր գնահատականին զուգընթաց մանրամասն ուսումնասիրվեն տաղերում և «Ողբերգության մատյանում» մինչև օրս չվերծանված բազմաթիվ ու բազմաթիվ միավորներ, որոնց պետք է նվիրել առանձին ուսումնասիրություններ:

Ռուս և եվրոպական գրականագիտությունը ուսանելի օրինակներ է ցույց տալիս բանաստեղծների բառ ու բանն ուսումնասիրելու բնագավառում: Պուշկինի նույնիսկ առանձին բառերին երբեմն նվիրվել են առանձին ուսումնասիրություններ[72]: Նրա մասին 1973 թ. տպագրված մի հոդվածում կարդում ենք. «Պուշկինը շատ լավ գիտեր աստվածաշնչային և եկեղեցական գրքերը, հաճախ նրանցից քաղվածքներ էր անում, օգտվում էր նրանց կերպարներից: Այդ հարցի ուսումնասիրությունը Վ. Վինոգրադովին հիմք տվեց հանգելու այն եզրակացությանը, որ «Պուշկինի համար եկեղեցասլավոնական տարերքը դառնում է պոետական լեզվի իսկական աղբյուր: Բանաստեղծը գեղեցկություններ ու պոեզիա է տեսնում Աստվածաշնչում»[73]: Մանավանդ վերջին նախադասությունն առավել ևս վերաբերում է 10-րդ դարի հայ հանճարին: Նրան ճիշտ հասկանալ հնարավոր չէ առանց ժամանակի եկեղեցական գրականությունը, հատկապես Աստվածաշունչը համեմատական աղբյուրագիտական խոր ուսումնասիրության ենթարկելու: Արդեն ասվեց, որ «Ողբերգության մատյանը» հնում կոչել են «Երկրորդ Ավետարան», «Համառոտ Աստվածաշունչ»: Ուրեմն պատահական չէ, որ «Մատյանի» անփոխարինելի ուսումնասիրողներ Հակոբ պատրիարք Նալյանը և Հ. Գ. Ավետիքյանը Նարեկացու մտքերի լուծման հիմնական բանալին որոնել են Աստվածաշնչում և եկեղեցական գրականության մեջ:

Նարեկացու ստեղծագործության վերծանման գործում երախտիք ունեն նաև ուրիշներ, բայց ամենամեծ երախտիքը մեր օրերում պատկանելու էր «Անլռելի զանգակատան» մեծատուն կոչնատիրոջը, բանասիրական գիտությունների դոկտոր Պարույր Սևակին, որի կյանքն ընդհատվեց Նարեկացու «Ողբերգության մատյանի» մասին ծրագրված մեծ մենագրությունն սկսելուց առաջ: Անկատար մնացած այդ մեծ իղձի հեղինակին է նվիրված «Հարության տաղին» վերաբերող մեր սույն ուսումնասիրությունը:

«Իցէ՞ թէ կենդանի լինին ոսկերքն»...

[72] Տես, օրինակ, М. П. Алексеев, Стихотворение Пушкина «Я памятник себе воздвиг..». Проблемы его изучения. «Наука», Ленинград, 1967. Այս բանաստեղծության մեջ հանդիպող нерукотворный բառի մասին հոդվածներ են գրվել ոչ միայն Ռուսաստանում, այլև արտասահմանում (Տես Ա. Շուստովի հոդվածը՝ «Русская речь», 1969, № 3, էջ 21—26, նույնի մեկ այլ հոդված «Вопросы литературы», 1973, № 6, էջ 169—172 և այլն):

[73] А. Шустов, «Нерукотворный» или «Нерукотворенный»:—«Вопросы литературы», М., 1973, № 3, էջ 171:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ*
(1944—1973)

8270. ՀԱՄԱՅՆ Վրաց պատրիարք-կաթողիկոս Նորին սրբություն Եփրեմ Բ-ի ընտրությունն ու գահակալությունը: 1960, մարտ, էջ 6—10:

Նկ.՝ Համայն վրաց պատրիարք-կաթողիկոս Եփրեմ Բ:—Վեհափառ Հայրապետը շնորհավորում է Եփրեմ Բ-ին:—Եփրեմ Բ-ի գահակալության հանդիսությունից հետո:

8271. ՀԱՄԱՐՈՏ լուրեր Մայր Հայրենիքից: 1960, հունվար, էջ 61—69:

Բովանդ.՝ **Ձեռ պատմաբան Սոուշեկը Երևանում: Երկրաբանական-հետախուզական աշխատանքների Հայաստանում:—Հայաստանի ճարտարապետների չորրորդ համագումարը:—Դերասանուհի Ժասմենը Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում:—Արվեստի ցուցահանդես: Կիրովականում:—Գրականություն Սփյուռքի հայության:—Գևորգ Պետրոսյանի ծննդյան 100-ամյակը:** [Ժ-Թ դարի վերջին հայ բիմի աստղերից մեկը]:—**«Սասունցի Դավիթ» էպոսի գրական կոմպոզիցիայի 20-ամյակը:** [Կատարումը՝ ՍՍՀՄ ժող. արտիստ Սուրեն Քոչարյանի կողմից]:—**Պրոֆ.-դոկտ. Երվանդ Տեր-Մինասյանի հոբելյանը:** [Ծննդյան 80-ամյակը]:—**Նկարիչ Մհեր Աբեղյանի ցուցահանդեսը:** [Նկարչի ծննդյան 50-ամյակի առթիվ]:

8272. ՀԱՅ բանաստեղծության երեկո Հոգևոր ճեմարանում: 1960, ապրիլ, էջ 25—27:

8273. ՀԱՅԱՍՏԱՆԸ արտասահմանյան օտար և հայ հյուրերի աչքերով: [Տպավորություններ, կարծիքներ]: 1960, նոյեմբ.-դեկտ., էջ 49—54:

8274. «ՀԱՅԱՍՏԱՆԻ տիրամայրը» Մայր Տաճարի Ավագ Սուրբ Սեղանի վրա: [Ներդիր նկար]: 1960, էջ 19:

8275. ՀԱՅԱՍՏԱՆԵՈՒՄ սովետական կարգերի հաստատման քառասնամյա հոբելյանի առթիվ Ամենայն Հայոց Հայրապետի և պետական պաշտոնական անձնավորությունների միջև փոխանակված հեռագրերը: 1960, նոյեմբ.-դեկտ., էջ 8—10:

8276. ՀԱՅԿ ՎԱՀԵ: «Էջմիածին» ամսագիրը: [Մամուլի տեսություն]: 1960, ապրիլ, էջ 59—61:

8277. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ Մինիստրների Սովետի նախագահ Ա. Ե. Քոչինյանը ընդունեց Ամենայն Հայոց ձայրագույն պատրիարք և կաթողիկոս Նորին ս. օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ին: [1960-ի հոկտեմբերի 20-ին]: 1960, հոկտ., էջ 8:

8278. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ հանդիսավոր պատարագ և քարոզ Մայր Տաճարում Քրիստոսի Հրաշափառ և սուրբ ծննդյան տոնի առթիվ: 1960, հունվար, էջ 15—17:

8279. ՀԱՆԳԻՍ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի: (1881—1960). [Մայր Աթոռի միաբան: Մահախոսական-կենսագրական]: 1960, ապրիլ, էջ 23—24:

Տ. Վահան արքեպիսկոպոսի դիմանկարով:

8280. ՀԱՆԴԻՍԱՎՈՐ սուրբ պատարագ և քարոզ Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետի գահակալության հինգերորդ տարեդարձի առթիվ: 1960, հոկտ., էջ 12—16:

8281. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]: Ամենայն Հայոց Հայրապետի ուղևորությունը Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ և վերադարձը Մայր Աթոռ: [Ուղևորության նկարագրում]: 1960, հոկտ., էջ 17—39, նոյեմբ.-դեկտ., էջ 11—39:

16 լուսանկար:

8282. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Աստվածածնի տոները: (Վերափոխման տոնի առթիվ): 1960, օգոստ., էջ 6—12:

Բովանդ.՝ «Ցողութիւն ս. Աստուածածնի յԱնապատ»:—«Տօն ծննդեան Սրբոյ Կուսին յԱնապատ»:—«Ընծայումն Ս. Աստուածածնի ի Տաճարն երից աւազ»:—«Աւետումն Ս. Աստուածածնի»:—«Վերափոխումն Ս. Աստուածածնի»:

8283. ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ:—Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությունից: [Ուսումնասիրություն]: 1960, հուլիս, էջ 14—23:

Նկ.՝ Աստվածաշնչի հայերեն հնագույն ձեռագրի պատառիկը (Զ դար):—Ծննդոց գրքի առաջին էջը, հայերեն հնագույն ձեռագրից:

8284. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Բազմավաստակ ուսուցիչը: [Սփյուռքահայ ուսուցիչ Գրիգոր Պողարյանի մանկավարժական և հասարակական գործունեության 40-ամյակը]: 1960, հուլիս, էջ 45—46:

Պողարյանի դիմանկարով:

8285. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյան: (Ծննդյան 80-ամյակի առթիվ): 1960, նոյեմբ.-դեկտ., էջ 5—6:

8286. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Եզնիկ ավագ քահանա Վարդանյան, «Դեպի Հայաստան», օրագրություն 1959 թ., Սաո-Պաուլո, Բրազիլիա, տպարան «Արարատ», Բուենոս-Այրես, 274 էջ: Գրախոսություն: 1960, մայիս, էջ 54—55:

